Գիրքը յուսապատճենահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԿՈՒԶԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԿԵՐԱԿՈՒՐՆ ՈՒՆԵԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԼՈՒՄԱՑԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ԵԼՈՒՅԱԿԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ
ՁԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru



Ղ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

«ԺՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1988

ԳՄԴ 83.3Հ1
Թ 949 թ

Թումանյան, Ն. Հ.

Թ 949 թ Թումանյանի մանկությունը: Դպր. միջին և բարձր տարիքի համար:— Եր.: Սովետ. գրող 1983.—84 էջ, 10 նկ.:

Մեծ բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը, պատմում է հոր մանկական ու դպրոցական տարիների մասին: Նա մի առանձին սիրով է գրում Լոռու հիասքանչ բնության մասին, որը եղել է բանաստեղծի ներշնչանքի աղբյուրը:

4803010000(6) ԳՄԴ 83.3Հ1
Թ ——————— 84 «Տ» 8Ա51
705 (01) 88

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1988

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

Էն Լոռու ձորն է..

Հովհաննես Թումանյանն իր մանկությունը՝ կյանքի առաջին տասը տարին, անց է կացրել իր ծննդավայրում՝ Լոռու Դսեղ գյուղում (այժմ Թումանյան) և նրա սարերում:

Նա ապրել է քաղաքի կուլտուրային անծանոթ միջավայրում՝ հին նահապետական գյուղում՝ ժողովրդի մեջ, ժողովրդի հետ, տեսել է նրա ուրախ ու տխուր օրերը, նրա նիստ ու կացը: Ապրել է իր հայրենի օջախում: Լոռու շքեղ ու շուայլ բնության գրկում՝ ազատ, անհոգ և ուրախ, շնչել է լեռնային մաքուր օդը և անտառների թարմ բույրը:

Հովհ. Թումանյանի մանկությունը նրա կյանքի ամենապայծառ շրջանն է, որ բանաստեղծի հուշերում մնացել է որպես «լուսաշող երազ», որպես «պայծառ առավոտ»: Հետագայում նա առանձին կարոտով ու թախիծով է հիշում այդ օրերը, այդ օրերի հետ կապված վայրերը, դեմքերն ու դեպքերը:

Թումանյանը մանուկ հասակում ապրել է Դսեղ գյուղում, իսկ պատանեկան տարիները (1879—1883 թ. թ.) անց է կացրել Ջալալօղլում (այժմ Ստեփանավան), հետո (1883—1886 թ. թ.) Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցում: Թիֆլիսում են անցել բանաստեղծի կյանքի հետագա տարիները:

* * *

Կուսական է եղել Լոռին անցյալում, հարուստ, խիտ և անանցանելի անտառներով:

Այն վայրերը, ուր այժմ Զորագէսի էլեկտրակայանն է լուսավորում, ուր բանաստեղծի անվան հրակայուն հանքերի գործարանն է գտնվում, մութն էին, խավար, վայրի ու ամայի:

Լոռու մթին անտառներն ու ձորերը առաջին անգամ լուսավորվում են, կենդանանում, երբ 1898 թվին կառուցվում է Թիֆլիսից Ղարս տանող երկաթուղին:

Մինչև այդ ամբողջ Լոռին պատված էր անտառներով, որտեղ փարթամորեն աճում էին հաստաբուն ընկուզենին, կաղնին ու հացենին, հաճարենին ու լորենին, վայրի տանձենին ու սալորենին և այլ պտղատու կամ անպտուղ ծառեր: Բարձրաբերձ լեռները հարուստ էին վայրի կենդանիներով ու թռչուններով, ժայռերի գլխին թռչկոտում էին այծյամներն ու էրեները:

Իր հայրենի անտառների բուսական և կենդանական աշխարհի գունագեղ նկարագրությունը Թումանյանը տվել է «Քաջերի կյանքից» պատմվածքում:

«...Դսեղի հանդի սահմանները հարավից սկսվում են զովասուն, բարձր լեռներով, հյուսիսում՝ վերջանում անդընդախոր ձորերով: Նրա հարավային սահմանում՝ Քոշաքարի ժեռուտ կատարին, թռչկոտում է քոշը* և բուսնում խաձիլ, իսկ հյուսիսում՝ «Զաղի ձորում», ապրում է կարին և հասնում է խաղող:

Այս երկու սահմանների մեջ կան թանձրախիտ, կուսական անտառներ, որ կացնի ձայն չեն լսած, ուր ծառերի փչակներում բույն է դնում մեղուն, թալաներում ապահով վխտում են էրեները, մոռուտներում ինքնիշխան թագավորում է արջը, և շամբուտներում հանգիստ ապրում է վարազը: Կան ժայռեր, ուր բույն են դնում արծիվները և թռչկոտում այծյամները...»:

Իր դիրքով Լոռին մի գեղեցիկ ու անառիկ լեռնագավառ է՝ կղզիացած և ապահով, որ հնում, ահ ու վախի տարիներին, ապաստան էր դառնում շրջանի բնակիչների համար: Մինչև հիմա էլ այդ ձորերում մնում են ավերակ տնակների հետքեր, քանդված մամռապատ մատուռներ:

Լոռին պատմական հարուստ անցյալ ունի: Հնում Լոռին կոչվում էր՝ Գուգարք, Գուգարաց աշխարհ: Այդ ժամանակ էր, որ կառուցվում էին այժմ պատմահնագիտական մեծ նշանակություն ստացած բազմաթիվ հուշարձաններ՝ վանքեր, որոնցով հարուստ են Հաղպատն ու Սանահինը, ապա Օձունը, Արդվին, Դսեղն ու մյուս գյուղերը: Դսեղի ձորումն է կառուցվել ս. Գրիգորի բարձրաշեն վանքը: Այդ վանքի

---

* Քոշ— վայրի այծ:

կիսավեր պատերը մինչև հիմա էլ կանգուն են նույնանուն գեղեցիկ ձորում:

«Դսեղ գյուղը մեր պատմության մեջ հանդես է գալիս առանձնապես Բագրատունյաց շրջանում, երբ Մամիկոնյան իշխանների մի ճյուղ՝ Համազասպյանները, բնակություն են հաստատում Լոռու Դսեղ գյուղում: Ծինում են իրենց տոհմական գերեզմանատունն ու աղոթարանը՝ Բարձրաքաշ ս. Գրիգորի վանքը»:

Հին Լոռու ընդհանուր պատկերը ամբողջանում է այն պատմական խաչարձաններով և հուշարձաններով, որոնց գեղեցիկ նկարագիրը տեսնում ենք Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմում:

...Էն տախտի վրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գլխին հսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կռինչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գլխից, լուռ, մարդու նման,
Նայում է ձորին մի հին խաչարձան...

Ավերակներով ու հուշարձաններով հարուստ խոր ձորի միջով հոսում է Դեբեդ գետը՝ մերթ սրընթաց ու գիժ՝ իր ժայռոտ ափերը ծեծելով, մերթ մեղմ ու հանդարտ՝ թևերը փռելով իր լայն հունի մեջ: Դեբեդը լեռնային շքեղ բնության գեղեցիկ տեսարաններից մեկն է, որ Թումանյանի ստեղծագործական կյանքում մեծ դեր է խաղացել:

Դեբեդը երկու գլխավոր ճյուղ ունի. մեկը սկիզբ է առնում Փամբակի ձորով, մյուսը Զորագետն է, որ գալիս է Մթին (Ղարախաչի) սարից՝ Ստեփանավանի ձորով: Այդ երկու վտակներն են, որ Լոռու ձորում, Քոլագերան կայարանից ներքև միանալով՝ կազմում են Դեբեդ գետը:

Դեբեդի աջ ափից սկսվում են անտառները և Դսեղի այգիներն ու բանջարանոցները: Դեբեդի ձորում են գտնվել Թումանյանի տան պապենական հին ընկուզենու այգին և ջրաղացը:

Դեբեդի ձորափին՝ բարձր ժայռերի գլխին, մի լայն և ընդարձակ հարթավայրի վրա, գտնվում է Դսեղ գյուղը, որի նկարագրությամբ է սկսվում Թումանյանի անդրանիկ պոեմը՝ «Մարոն», գրված 1887 թվին, երբ բանաստեղծը տասնութ տարեկան էր.

Մեր գյուղն էն է, որ հպա՜րտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին
Ձեռը տված ճակատին՝
Միտք է անում տխրադեմ.
Ի՜նչ է ուզում՝ չգիտեմ...

Գյուղի երեք կողմում փռված են արտերն ու արոտները, որոնք շրջափակված են և կտրված ձորերով, իսկ չորրորդ կողմում՝ հարավում, կա մի փոքրիկ լեռնաշղթա՝ Քոշաքար գագաթով: Գյուղի դաշտերն ու արտերը հարուստ են գույնզգույն և անուշահոտ վայրի ծաղիկներով ու վարդի թփերով:

Դսեղ գյուղից հեռու, հորիզոնի վրա, բարձրանում են Թումանյանի ստեղծագործության մեջ այնքան հաճախ հանդիպող լեռները՝ Լալվարը, Դվալը, Զաթինդաղը, Ղարախաչը, Քոշաքարը:

Դիմացի հարթավայրի վրա, Դեբեդի ձախ ձորափին, երևում են Լոռու գյուղերից մի քանիսը՝ Ջորագյուղ, Ծաթեր, Կուրթան, Ուզունլար, Մղարթ, Այգեհատ և այլն:

Դսեղն իր գեղեցիկ ու անառիկ դիրքով իսկապես որ նման է մի «բնակերտ ամրոցի»: Գյուղի բարձրությունից Դեբեդի խոր ձորին և քարաժայռերին նայելիս՝ հիշում եք բանաստեղծի «Լոռեցի Սաքոն».

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ...

Այդ գեղեցիկ լեռնաշխարհի խավար ու անգետ բնակիչներն ապրում էին իրենց լեռների վրա թառած. չքավորները՝ ծխոտ ու խարխուլ գետնափոր տներում, ունևորները՝ գլխատներում. չքավորները, քեչայի և թաղիքի վրա, ունևորները՝ գորգի: Ապրում էին մեծ գերդաստաններով, հաճախ երեսուն-քառասուն հոգուց բաղկացած, ապրում սարի ու դաշտի աշխատանքով, փակ ու ինքնամփոփ:

Լոռու գյուղերն իրար միանում էին դժվարանց ճանապարհներով, նեղ ու քարոտ կածաններով:

Հանգստի ժամերին գյուղացիների հաճույքը զրույցն էր. պատմությունները իրենց նախնիների կյանքից՝ համեմված

առակներով ու խաղերով: Սիրում էին զրուցել «գարնանը՝ սարերի լանջերին, ամառը՝ ծառերի շվաքում, ձմեռը՝ պատերի տակին արևկող արած, գիշերը՝ օդաներում...»*:

Հին նահապետական գյուղում գյուղացիներն ապրում էին զուրկ ու ճնշված: Գյուղացու կյանքը, նրա ապրուստը, ինչպես ծերունի գյուղացին է ասում բանաստեղծի բերանով, կախված էր երկնքից:

Մեր ապրուստն ինչ է,— մի կտոր չոր հաց,
Էն էլ հրեն հա՞— երկնքից կախված:
Մի մարդ որ նրա երեսը պահի՝
Նրա ապրուստը ի՞նչ պետք է լինի...

Իր վերջին սերմացուն գյուղացին հանձնում է հողին և վար ու ցանքից հետո սպասում է բերքի. եթե տարին բերքառատ է լինում՝ կարողանում է մի կերպ ապրել, իսկ եթե կարկուտը կամ երաշտը ոչնչացնում է նրա արտը՝ մնում է հացի կարոտ ու դիմում գյուղի վաշխառուներին: «Սովը վաշխառու հարուստի ընկերն է: Սովը աղքատ գյուղացուն տանում է վաշխառուի դուռը...»: Սրանք դաժանորեն խաբում, հարստահարում են խեղճ գյուղացուն: Թումանյանը ատելությամբ և զզվանքով է խոսում աշխատավոր ժողովրդին շահագործող այդ վաշխառուների մասին:

«...Զարմանալի խորամանկ են այդ վաշխառու հրեշները,— գրում է Թումանյանը,— մի օր յուր ժամանակին գյուղացին տանում է իր պարտքը ետ տալիս. «Տո, ո՞վ ա քեզնից փող ուզում. մի ուրիշ ժամանակ կունենաս՝ կտաս. հիմի էս սահաթին ի՞նչ ես վռազում, ուրիշ պակասություն կունենաս, տար քո պակասությունն արա...» Այսպես, արտացավ բարեկամի նման, վաշխառուն փողը ետ է տալիս գյուղացուն և անխիղճ տոկոսով, տոկոսը տոկոսին բարդում, մի քանի ամսում աննկատելի կերպով մեկ էլ տեսնում ես բանն այնտեղ է հասել, որ գյուղացու ունեցածը չունեցածը վեր է գրում պարտատերը...»

Եվ ահա մեր առաջ բացվում է մի շատ ծանր և տխուր պատկեր. «Ուսուցիչը պատմում է, թե ձմռան մի ցուրտ ու բուք օր դատավորն իրան կանչեց Օհանենց Ալեքսանի տունը: Ալեքսանը, վաթսուն տարեկան մի ծերունի, իր տան

* Հ. Թումանյանի ինքնակենսագրության նյութերից:

միակ աշխատավորը՝ վերջին շնչի վրա էր: Այդ օրհասական րոպեին նրա գլխի վերևը կտրել են գյուղական դատավորն ու վաշխառու Գրիգորը: Գրիգորը երեք տարի առաջ վաթսուն ռուբլի է տվել, այժմ եկել է այդ պարտքի տեղը Ալեքսանից պահանջում է երկու հարյուր ռուբլիանոց այգին: Այդ առանց թղթի չի կարող լինել, և վարժապետը նրա համար է կանչված, որ այդ թուղթը գրի, դատավորն էլ վավերացնի իր կնիքով, թե այսուհետև Ալեքսանի այգին անցնում է Գրիգորին՝ հարյուր հիսուն ռ. պարտքի տեղ:

— Մի՞թե ինչնուն ռ. է տոկոսը, զարմանալով հարցրի ես,— ասում է ուսուցիչը:

— Մեր գյուղերում այդպես են հաշվում,— ասաց դատավորը ժպտալով:

. Հարցնում են հիվանդին, թե համաձա՞յն է: Հիվանդը չկարողացավ խոսալ, ձեռքով նշան արավ, չհասկացան ինչ էր ուզում ասել: Ապա խոսաց հիվանդի անկողնի կողքին կուչ եկած կինը, թե՝ «Գրիր, վարժապետ, թեև այդ փողից միայն երեսուն ռ. ենք ստացել...»:

Ես գրեցի:

Հիվանդը վերջին շնչի վրա էր: Նրանից հետո տասնամյա փոքրիկ որդին և մաշված ու հյուծված կինը պետք է մնային առանց մի կտոր հացի»:

Վաշխառուների կողմից աշխատավոր գյուղացու դաժան շահագործման նման ցնցող պատկերները չէին կարող խոր տպավորություն չգործել ապագա բանաստեղծի զգայուն հոգու վրա: Եվ իսկապես, հետագայում Թումանյանը մեծ ցասումով է արտահայտում գյուղացու կեղեքումը և շահագործումը թավադներից, վաշխառուներից, ցարական պաշտոնյաներից:

Գյուղացու ծանր վիճակը, սեղմ ու պատկերավոր, արտացոլվել է նաև Գիքորի հոր նամակում.

«Ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խաբրը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և նանն ու Զանին տկլոր են և տեղներս շատ նեղ ա: Գիքոր ջան, մի քանի մանեթ փող դարգի...»

Նահապետական գյուղի աշխատավոր ժողովուրդը ենթակա է եղել նաև պետական պաշտոնյաների կեղեքումներին ու շահագործմանը: Թումանյանը և՛ իր հոդվածնե-

ռում, և՛ գեղարվեստական երկերում հաճախ է տալիս այդ ծանր պատկերի նկարագիրը:

«Հիմա եկեք տեսեք այս ժողովրդի տանուտերը, քյոխվեն, գյուղական դատավորը... որոնք ոչ մի օրենք ու արդարություն չեն ճանաչում, բացի կաշառքն ու մտրակը...»

Գյուղացու ծանր կյանքի այդ պատկերներից մեկը արտացոլվել է նրա «Դժվար տարի» բանաստեղծության մեջ.

Հարկ են ուզում—Տուր՝ հա տո՛ւր...
—Կտամ, քյոխվա, փող չունեմ:
— Չունե՞ս, Շեկոն կտանեմ...
— Ամա՛ն, քյոխվա, քեզ դուրբան,
Շեկոն գնա թող գութան,
Գարնան անենք վար ու ցանք,
Կալը կալսենք, բերենք տանք...

* * *

Լոռու ժողովուրդը՝ հովիվ ու հողագործ, կտրված քաղաքից ու նրա կենցաղից, ապրում էր փակ կյանքով:

Ինքնուրույն թվականների վերջերին Լոռու գյուղերն սկսում են շփվել քաղաքի հետ, ծանոթանում ու կրում են նրա ազդեցությունը և հետզհետե կերպարանափոխվում են: Ներս է խուժում փողի, առևտրի իշխանությունը: Ավելի են զգացվում վաշխառուների ու հարուստների, մանր սպաշտոնյաների՝ քյոխվի ու թավադի ուժը, նրանց ճիպոտն ու ծեծը: Գյուղացին, հնալով կոռ ու բեգարի ծանրության տակ, քարշ է տալիս իր կյանքը ադաթի ու նախապաշարումների մեջ:

Նույն այդ ժամանակները Լոռու ձորերում երևում է երկաթուղին, որն անցնում է ձորերով, ու շոգեքարշի սուլոցից խրտնում են սարերի պախրաները ու կենդանիները, անհետանում անդնդախոր ձորերում և կիրճերում. «...Եկավ ձորերումը ծղրտաց, էլ պախրա չմնաց, կխտար չմնաց, ձենիցը խրտնեցին, փախան կորան...»*:

Երևում են «սպիտակ շլապկավորները» (ինժեներները ու տեխնիկները), առևտրականները: Լոռու հովիվները, Ուհաննես բիձու դռան գերանների վրա նստած, զարմա-

* «Երկաթուղու շինությունը»:

ցած զրույց են անում նոր երևույթներից, նոր մարդկանցից...

Լոռին ամպամած է ու մշուշապատ: Գարունը անձրևային է ու ցուրտ, ամառը՝ զով: Հաճախ տեղացող կարկուտը ոչնչացնում է գյուղացու դաշտերը...

Այս լեռնային բնության մեջ է անկացրել Թումանյանն իր մանկությունը՝ վայելելով լեռնային անմահական օդը, լեռնային կյանքի ազատությունն ու խաղաղությունը:

«Իմ մանկությունը անց եմ կացրել աստվածային շռայլության մեջ: Լոռու գեղեցիկ բնությունը, անմահական օդը, զրնգան աղբյուրների ջուրը, լեռնական գյուղական կյանքի ազատությունը, որ կար հին գյուղական կյանքում...»

Այսպես է հիշում իր մանկությունը բանաստեղծն ինքնակենսագրական նյութերի մեջ:

Հայրենի Լոռին, նրա ամպամած լեռներն ու խիտ ձորերը, «անլռելի վշշացող Դեբեդը», ողջ հիասքանչ բնությունը բանաստեղծի ոգևորության անսպառ աղբյուրն են եղել: Մանկուց լսած ու սիրած ժողովրդական զրույցներն ու երգերը, հեքիաթներն ու լեգենդները նրա ստեղծագործությանը առատ սնունդ են տվել:

Թումանյանը դիտել է և ուսումնասիրել, տեսել է ու ապրել գյուղացու ծանր, չարքաշ կյանքը, նրա աշխատանքն ու հարստահարումները, և այդ ամենը խոր ակոսներ է թողել, անջնջելի հետքեր՝ բանաստեղծի զգայուն հոգու վրա: Մանկության օրերի այդ ծանր տպավորությունները նրա կյանքի մշտական ուղեկիցներն են եղել:

ՊԱՊԵՐԸ

Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թ. փետրվարի 19-ին (հ. տ.) նահապետական երբեմնի հարուստ և անվանի ընտանիքում:

Այն տարիներին, երբ ծնվել է Հովհաննեսը, Դսեղ գյուղը մեծ չի եղել՝ ընդամենը վաթսուն-յոթանասուն տուն: Կղմինդրե տանիքով միայն մեկ տուն է եղել:

Հայրական տունը, որտեղ ծնվել է նա, գյուղի սովորական տներից էր. միհարկանի հողածածկ գլխատուն, կող-

քին՝ գոմը, տան առաջ՝ սրահ և սալորենու փոքրիկ պարտեզ՝ վայրի վարդի թփերով շրջապատված:

Հետագայում իր զրույցների ժամանակ բանաստեղծն այսպես էր հիշում հայրական տունը. «Մի մեծ սենյակ ունեինք. օջախը միշտ վառած. երկու կողմից տախտեր, դոշակներ ու մութաքաներ դարսած: Բոյահայելին, կողքին սազը կախած, մոմակալն ու մաղաշը*, նկարները...»

Այս տունը բանաստեղծի պապի՝ Օհաննեսի կահավորված սենյակն էր: Թումանյանի պապը Լոռում հայտնի է եղել Օհաննես աղա անունով, որին Թումանյանը չի տեսել: Մանուկ Օհաննեսը տատից, տան մեծերից զրույցներ ու պատմություններ է լսել իր նախնիների ու իր պապի քաջագործությունների ու խիզախ գործերի մասին:

Թումանյանի հեռավոր նախնիները, ինչպես ինքը՝ բանաստեղծն է հիշատակում, եկվորներ էին, որոնք տասներորդ դարում թողնելով իրենց հայրենի Տարոնը՝ բնակություն էին հաստատել Լոռու Դսեղ գյուղում:

Նրանք ճանապարհներ են շինել այդ անդնդախոր ձորերում, կամուրջներ կառուցել, հուշարձաններ ու աղոթարաններ կանգնեցրել, որոնց ավերակները դեռ մնում են Դսեղի ձորերում, անտառներում և հանդամասերում: Նախահայրերը հայտնի իգիթներ են եղել, քաջ որսկաններ:

Այդ տոհմի պապերը արտաքին հարձակումների ժամանակ՝ ինքնապաշտպանության օրերին, ինչպես՝ Հասան խանի ասպատակության ժամանակ, գործի գլուխ են անցել և պաշտպանել գյուղերի խաղաղ բնակչությունը կոտորածից ու կողոպուտից:

Թումանյանի պապը՝ Օհաննես աղան (1795—1868) անվանի զինվորական էր. բարձրահասակ ու սիրուն տղամարդ, սաթի ծայրով մեծ չիբուխը ձեռքին, թուրը կողքից կախ, սամույր մուշտակը ուսերին: Լավ ձի նստող է եղել ու լավ հրաձիգ: Նրա թուրը այժմ էլ պահպանվում է գյուղի տան Թումանյանի թանգարանում:

Թումանյանի պապը ծառայել է ռուսական բանակում, մասնակցել է մի շարք պատերազմների: 1826 թ. Ախալցխայի մոտերը մի հաղթություն տանելու համար ստացել է

---

* **Մաղաշ**— ունելի, որով կտրում էին վառվող մոմի ծայրը:

սպայի աստիճան, 1842 թ. Դաղստանում, 1845 թ. լեռնականների դեմ, 1853 թ. Ախալցխայի կռվում տարած քաջագործությունների համար, այնուհետև 1854 թ. իր մի քանի հաղթությունների համար ստանում է շքանշաններ: Բացի այդ, նա մեծ աշխատանք է կատարել Հայաստանի զանազան վայրերում ճանապարհներ կառուցելու համար:

Պապը հյուրասեր էր, զրուցասեր, սրախոս ու զվարճասեր: Այնքան է սիրել զրույցը, որ իր տան պատի տակ, ճանապարհի վրա, տասներկու քար է տաշել տվել, դրել, որ գյուղացիները գան, նստեն ու զրույց անեն:

Բնավորության այս գծերով և արտաքինով, ասում են, Թումանյանը նման էր իր պապին:

«Օհաննես աղան թեև աղա էր, բայց շատ հասարակ մարդ էր,— ասում էր նրան մոտիկից ճանաչողներից ու ժամանակակիցներից մեկը՝ Կիրակոս բիձեն:— Բնավորությամբ բարի էր և առատաձեռն: Հասարակ ժողովրդին միշտ օգնել է, հողազուրկ գյուղացուն՝ հող տվել: Գյուղում կար Մուրադանց Մարգար անունով մի կատակասեր և առակախոս մարդ, որը միշտ սազ էր ածում, առակներ պատմում, սրախոսություններ անում և զվարճացնում Օհաննես աղայի հյուրերին»:

«Օհաննես աղան շատ լավ մարդ էր. ամբողջ Լոռին նրան սիրում էր, լսում: Մեծ մարդ էր. չափից դուրս շքանշաններ ուներ. դիվան էր կտրում, ժողովրդին պաշտպանում էր: Ամեն տեղ դիմավորում էին, շարաթներով քեֆ անում»,— այսպես էր պատմում Օհաննես աղայի մասին քեռի Սաքոն և ապա շարունակում.

«Հասան խանի ժամանակ գյուղումս աղ չկար. ժողովուրդը առանց աղ կոտորվում էր. նա գնաց ուղտի բեռներով աղ բերեց, ժողովրդին բաժանեց, ժողովրդին պահեց: Տուրքերը հավաքելու ժամանակ, երբ պետական պաշտոնյաները գալիս են հացահատիկ հավաքելու, ժողովուրդը դժգոհում է. Օհաննես աղան դուրս է գալիս պրիստավին ճանապարհ դնելու, որ իր եկած ճանապարհով ետ գնա. չի լսում, Օհաննես աղան բարկանում է, ճանապարհ է դնում և ասում. «Ձուրը անցկացրեք, թող գնա»:

Օհաննես աղան բարեկամական կապեր էր հաստատել

հարևան շրջանների՝ Ղազախի ու Բորչալուի թուրքերի ու վրացիների հետ և աշխատում էր հաշտ ու խաղաղ պահել այդ ժողովուրդներին:

Ռուսաստանից նա իր հետ բերել էր մի ռուս ջրաղացպան: Առաջինը նա էր, որ Լոռում մտցրեց մոմի գործածությունը: Մինչև այդ Լոռվա գյուղերում ձեթի ճրագներ են վառելիս եղել: Ռուսաստանից իր հետ բերել էր նաև հայելի, նկարներ և այլն:

Օհաննես աղան ունեցել է ճանապարհորդական արկղ, մեջը՝ ափսե, բաժակ, գդալ և այլ պարագաներ, որն իր հետ տանելիս է եղել Ղարս, Ախալցխա կամ այլ վայրեր կովի գնալիս: Նա շարունակ Լոռուց դուրս պատերազմի է եղել: Թումանյանի տատը ասում էր. «Հենց որ ձմեռնանում էր, աչքս մեր սարերին էի գցում, թե ե՞րբ պիտի ձինը նստի, որ մարդս տուն գա»:

Ասում են, ավելի անվանի և հայտնի է եղել Թումանյանի պապի հայրը՝ Օվագիմ Յուզբաշին, քաջ ու հաղթանդամ, Լոռու հայտնի իգիթներից մեկը: Տասնութերորդ դարում, շնորհիվ իր քաջագործությունների, նա մեծ հռչակ է ստանում:

Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում Օվագիմ Յուզբաշու մասին այսպես է պատմում. «Մենակ դսեղցի Մեհրաբյան Թումանյան Հովագիմի անունը՝ քարերը սասանացնում էին: Սարերի, ձորերի միջում մեծացած, գազանի ու հարամու արինը թափելով էր նրա ոսկորները հաստացել: Երկու տղամարդ նրա մեջքը չէին կարող խտրտել, հինգ մարդ նրա մեկ ձեռքը չէին կարող օղորել, նրա գլուխը մեկ օր չէր ցավել: Կերածը մեղր ու կարագ էր, հագածը շալ, կոխածը ծաղիկ ու չիման, աղբրների վրա, մեջի միջումն էր նա օրորոցումը աչքը բաց արել: Նրան ի՞նչ կդիմանար: Աժդահա ու ոչ տղամարդ... Ուր ախպեր ուներ, մեկը քանց մեկը աժդահա:

...Վաթսուն ջանից ավելի հոգի՝ հարս, փեսա, թոռը, ծոռը, առավոտը՝ նրանց տանիցը դուրս էին գալիս, ոիգունը մթանը նրանց օճորքի տակին քնում ու նրանց հարյուր տարեկան հերը դեռ երեկվան երեխի պես՝ բեղերն ոլորում, միրուքը սանդրում, փափախը կոտրում, նրանց հետ պար գալիս՝ պար գալի, խաղալիս՝ խաղում, սազ ածելիս շատ

անգամ ինքը սազը ձեռներիցը խլում, ածում, խաղում, քսան տարեկանի պես ձիու վրա նստում, ասպարը գցում ու սարերում, ձորերում, չադրի տակին՝ պարզկա գիշերը՝ որդոցը իրան արած քաջությունները՝ լոռեցոնց տղամարդությունը, հին, հին բաներից, լազգուց, թուրքից, հազար բաներ պատմում...»

Օվագիմ Յուզբաշին մեռել է քառասունական թվականներին:

Օվագիմ Յուզբաշու հայրը՝ Մեհրաբը, Լոռու ձորերի նահապետն էր:

Գյուղական մեծերի պատմածների համաձայն այսպես է նկարագրում Թումանյանը իր ապու պապին՝ Մեհրաբին:

«...Ծերունի Մեհրաբը, Օվագիմի հայրը, Լոռու ձորերի նահապետը, իսկի չէր էլ մտածում, թե հարյուր տարին անց է կացրել: Նրա վիթխարի, բարձր հասակը կորացել էր, նորից ամրացել, ճերմակ մազ ու միրուքը բռնել կուրծք ու երես և աժդահայի ահավորությամբ հետ խառնել, միացրել ծերության պատկառանքը*»:

Մեհրաբը բարձրահասակ, հաղթանդամ, հուժկու ձայնով տղամարդ էր· խելացի էր, արթուն և արի: Նրա անունով Թումանյանի տոհմի տունը կոչվում էր նաև Մեհրաբյան:

Միանգամայն այլ ծագում և տարբեր նկարագիր ունեն Թումանյանի մոր կողմի պապերը՝ գյուղի մյուս ծայրի բնակիչները՝ Քոչարյանները: Նրանք սարեցիներ էին, գյուղի առաջին հովիվներն ու տավարածները. նրանց տունն այդ պատճառով էլ կոչվում էր՝ «սարըցու տուն»:

Այդ տան նահապետը՝ տավարած Օհաննես ապին, Թումանյանի մոր հայրը, սարերում աչք բաց արած, սարերում մեծացած, իր տղաների հետ բերում է սարերի կյանքը, շվին, բայաթին: Ինքը՝ Օհաննես ապին, շատ առողջ է եղել, ուժեղ և ձայնեղ, մի աժդահա մարդ: Իր ամբողջ կյանքը նա սարերում էր անցկացրել և երբեք չէր հիվանդացել: Օհաննես ապին իր առաջին վշտից՝ կնոջ մահից հետո, կաթվածահար է լինում հարյուր ութ տարեկան հա-

* «Քաջերի կյանքից», Երկերի ժողովածու. III հ.:

սակում, վախճանվում: Մեռնելիս ցավով բացականչում է. «Ա՜յ փուչ աշխարհ, արժե՞ր երկու օրվա համար ծնվելը...»

Ահա այս երկու միանգամայն տարբեր օջախների ծնունդ էր Թումանյանը:

ՀԱՅՐԸ

«Ամենալավ ու ամենամեծ բանը որ ես ունեցել եմ իմ կյանքում այդ եղել է իմ հայրը»:

Թումանյանի հայրը՝ Տեր-Թադևոսը, գյուղի քահանաներից մեկն էր: Նրա աշխարհիկ անունը Ասլան էր. ծնվել է 1839 թվին, վախճանվել՝ 1898-ին: Սկզբում, 1870—1872 թվականներին, նա ուսանում է Սանահնի վանքում, քահանա է դառնում 1874 թվին, երբ Թումանյանը արդեն չորսհինգ տարեկան երեխա էր:

Տեր-Թադևոսը թեև նույնպես անվանի մարդ էր, բայց նա չուներ իր նախնիների ո՛չ դիրքն ու կարողությունը և ո՛չ էլ նրանց մեծ համբավը: «Հայրս մեր տան վերջին ընկած բեկորն էր...» — ասում էր Թումանյանը:

Իր տնտեսությամբ բանաստեղծի հոր տունը միջակ տներից էր. ունեցել են երկու կով, մի գոմեշ և մի քանի ոչխար: Բայց, շնորհիվ իր անվանի պապերի և իր անձնավորության, Տեր-Թադևոսի տունը համարվում էր Լոռու պատվավոր տներից մեկը:

Հմայիչ դեմք էր Տեր-Թադևոսը, սիրված ու հարգված գյուղի և Լոռու շրջանի ժողովրդի կողմից: Բանաստեղծն առանձին սիրով էր խոսում իր հոր մասին:

«Ամենալավ ու ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ իմ կյանքում, այդ եղել է իմ հայրը: Նա ազնիվ մարդ էր և ազնվական՝ բառի բովանդակ մտքով: Զափազանց մարդասեր ու առատաձեռն, առակախոս ու զվարճաբան, սակայն միշտ ուներ մի խոր լրջություն: Թեև քահանա, բայց նշանավոր հրացանաձիգ էր ու ձի նստող: Այդ ժառանգական էր մեր ցեղի մեջ»*:

---

* «Ինքնակենսագրություն»:

Հոր բնավորության գծերը ժառանգաբար անցել են բանաստեղծ որդուն: Բնորոշելով իր հորը, ասես նա ինքն իրեն է բնորոշում. այդպես մեծ էր հոր և որդու նմանությունը:

Երբ խոսք էր լինում մեծ մարդկանց մասին, նա ասում էր. «Մեծ մարդու մասին գաղափար եմ կազմել իմ հորով: Մեծ մարդ էր, զարմանալի խոր մարդ, անդունդի խորություն ուներ. լայն հոգի, մեծ սիրտ, մեղմ բնավորություն, ժպիտը միշտ դեմքին»:

Ինչպես նրա կյանքի բազմաթիվ դեպքերն ու զրույցները, այնպես էլ գյուղի ծերերի պատմածները վկայում են նրա առաքինությունները: Նա ամեն տաք վեճ մեղմացնում էր և վերացնում. նրա ժամանակ Դսեղ գյուղի մասին ասում էին՝ «Արյունը ջուր անող գյուղ»:

Թումանյանի հայրը բարձրահասակ էր, նիհար, ժպտուն ու խոր աչքերով. մազերը գանգուր ու վաղ ճերմակած՝ ձյունի նման սպիտակ:

Թեև քահանա էր, բայց, ինչպես պատմում են մոտիկից ճանաչողները, նա չի սիրել եկեղեցական ծեսերը: Հաճախ, եկեղեցու զանգերը լսելիս, գնացել է գյուղամեջ զրույցի կամ մարդ հավաքել, բերել տուն զրուցելու, հետո էլ իր չոնգուրն է ածել ու երգ ասել:

Պատմում են, որ Տեր-Թադևոսի հյուրերից մեկը, տեսնելով պատից կախված չոնգուրը, հարցնում է. «Տերտեր, դու չոնգուր ածել էլ գիտես»: Տերտերը թե՝ «Էդ հո ավետարանը չի, որ չգիտենամ»:

Լինելով բնավորությամբ ուրախ և հյուրասեր՝ նա իր շուրջն է հավաքում շրջանի աշուղներին ու շվի ածողներին, առակախոսներին ու զրույց անողներին և այսպիսով իր տունը դարձնում է երգի ու զրույցի կենտրոն:

Իր աղջիկներից մեկը՝ Իսկուհին, պատմում է, թե ինչպես ինքը մի օր հոր ձին վերցնում է, կժերը բարձում, գնում է հեռու աղբյուրը՝ ջրի: Ճանապարհին ձին որտեղ մարդ է տեսնում կանգնում է: Աղջիկը գալիս է տուն, հորը պատմում: Հայրը թե՝ «Ա՛յ որդի, էդ իմ ձին ա. ես որ ճամփա եմ գնում, մարդ պատահելիս կանգնում եմ զրից անում, ձիս էլ սովորել ա»:

Հոր երգի ու զրույցի երեկոները մեծ նշանակություն են

ունեցել և խոր տպավորվել Թումանյանի վառվռուն երևակայության մեջ: Նա մանկուց ազդվում էր հոր երգերից, ներշնչվում և սիրում երգն ու զրույցը:

«Իրիկունները, երբ տուն էինք հավաքվում, հայրս թիկն տված ածում էր իր չոնգուրը և երգում «Քյոռոօղլին», «Քյարամը» կամ որևէ հոգևոր երգ»:

Հայրը երգում էր արևելյան թախծոտ բայաթիներ, աշուղական խաղեր ու ժողովրդական երգեր: Հոր երգի ու նվագի երեկոները փոքրիկ Հովհաննեսի ամենաթանկ ու ամենանվիրական ժամերն են եղել: Ասում են, երբ հայրը սազ էր նվագում, փոքրիկ Հովհաննեսը նստում էր շատ մոտ, նայում էր նրա դեմքին և մեծ ուշադրությամբ լսում... լսում էր, նայում նրա բոցով այրվող աչքերին, որոնք նայում էին հեռու, շա՜տ հեռու, և ինքն էլ բոցավառված, լցվում, համակվում էր հոր վշտոտ երգերով:

Հայրը ամենապայծառ դեմքն էր, որ լուսավորել է բանաստեղծի մանկության օրերը: Այսպես էր տեսել Թումանյանն իր հորը, իսկ մորը՝ միշտ դժգոհ ամուսնու անհոգ ու անփույթ ապրելակերպից:

«Դրա համար է,— ասում էր Թումանյանը,— որ երևակայում եմ հորս անհոգ ու զվարթ զրույց անելիս, ձի նստած կամ չոնգուր ածելիս, իսկ մորս՝ հոգսի մեջ, գյուղից դուրս մեր կորած անասուններին ման գալիս»...

Հայրը անփույթ և շռայլ ապրող էր: Հաճախ էր պատահում, որ գյուղերում աշխատածը թողնում էր դուրսը, տալիս էր չունևորներին, ինքը դատարկ գալիս տուն: Շատ անգամ ստացածը գրպանն էր ածում առանց նայելու, ուզողին էլ տալիս էր առանց հաշվելու, ասելով՝ «Էնքան ըլի, որ կնիկս չիմանա»: Վախենում էր հաշվով ապրող կնոջից:

Կինը՝ չկարողանալով տանել ամուսնու անհոգ ու շռայլ բնավորությունը, մշտական վեճի մեջ էր հետը: Իսկ ամուսինը, վախենալով նրա կռվող բնավորությունից՝ միշտ գաղտնի էր անում իր բարեգործությունները: Շատ է պատահել, որ կնոջ բացակայության ժամանակ Տեր-Թադևոսը իր տղային՝ փոքրիկ Հովհաննեսին, կանգնեցրել է դռան մոտ հսկելու, իսկ ինքը ցորենը լցրել է, տվել մի որևէ չքավոր գյուղացու կամ սարից իջած թուրքի շալակը:

Թումանյանի մայրը ամուսնու բարեբարությանն մասին հետաքրքիր դեպքեր էր պատմում: Մի օր աղունը ջրաղաց է տանում աղալու. ջրաղացում տեսնելով միրգ ծախող մի գյուղացու, աղունը թողնում է ջրաղացում, միրգը բեռնում ձիուն, բերում տուն: Գալիս է տուն, կինը հարցնում է ամուսնուն, թե՝ «Տերտեր, բա ալյուրն ի՞նչ արիր»:

Թե՝ «Ջրաղացում ջրաղացպանը դեռ աղում ա»:

Կինը, թե՝ «Ախր անտեր ա, կգողանան»:

Նա թե՝ «Չունևոր մարդիկ են, մի քիչ էլ թող գողանան...»

Մի ուրիշ անգամ էլ, մի սովի տարի, տերտերը աղունը ջրաղացն է տանում աղալու, կինն էլ փուռը վառում է, սպասում տերտերի գալուն: Բայց տերտերը չկա: «Մթնել ա,— պատմում էր Թումանյանի մայրը,— էրեխեքը լաց են լինում, սոված են. տանն էլ հաց չկա, մին էլ տեսնեմ՝ տերտերը ջրաղացից գալիս ա դատարկ, երկու կրկենի* կռան տակին:

Դու մի ասիլ, մի ձիաբեռ ալյուրը կրկենի է թխել, դուրս է եկել հանդը, հանդի սոված հանդավորներին բաժանել ու ինքը դատարկ եկել է տուն...»

Պատահել է, որ աշնանը գյուղի չքավորի կամ այրի կնոջ արտը հնձել է տվել իր վարձած մշակներով:

Տեր-Թադևոսի բնավորության համար բնորոշ է հետևյալ դեպքը:

Պատմում են, որ մեկ անգամ Դսեղի հարևան Մարց գյուղից կեսգիշերին գալիս են Տեր-Թադևոսին հիվանդի համար կանչում: Ձի է նստում ու գնում: Ձորի կածաններով իջնելիս, մութ ձորը լուսավորելու համար, նա ձորի մեջ պատահած չոր խոտի բլուրները (դեզերը) վառելով հասնում է Մարց գյուղը: Մյուս օրը խոտի տերերին կանչում է և արժեքը կրկնակի վճարում:

Լինելով կենսուրախ մարդ, շատ է սիրել երեխաների շրջանը. նրանց հետ վեգ է խաղացել, կատակներ արել, գյուղի ջահել հարսն ու աղջիկների հետ Համբարձման տոնին վիճակ հանել: Խաղով, երգով ու կատակներով է պահել իր երեխաներին:

---

* **Կրկենի**— ջրաղացում կամ սարում մոխրի մեջ թխված հաց:

Առանձնապես սիրում էր մեծ որդուն՝ Հովհաննեսին: Հոր և որդու փոխադարձ այդ սերը տարիների ընթացքում ավելի է ուժեղանում և խորանում: Պատմում են, երբ 1890 թվին Մոսկվայում լույս է տեսնում Թումանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն, հայրը մեծ հրճվանքով է կարդում այդ գիրքը, հյուրեր է հրավիրում, ուրախանում, քեֆ անում և ասում է.

— Հիմի ինձ էլ մահ չկա...

Տեր-Թադևոսը սիրված էր ո՛չ միայն Լոռու շրջանի, այլև հարևան շրջանների՝ Բորչալուի, Ղազախի գյուղացիներից և հատկապես թուրք բնակիչներից: Նա անշահասեր ու մեծ մարդու համբավ ուներ Լոռու շրջանում: Հետագայում, ինը հարյուրական թվականներին, Լոռում Հովհաննես Թումանյանին իր հոր անունով էին ճանաչում: Պատմում են՝ 1905—1906 թվականներին, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, երբ Թումանյանը Ղազախի շրջանի սարերն է գնում երկու հարևան ժողովուրդներին հաշտեցնելու, թուրք բնակիչները վախենում են երևալուց, բայց երբ իմանում են, որ ձիավորներին գլխավորում է Թումանյանը, գյուղի ծերերն ասում են՝ «Նա Ասլան քեշիշի տղեն է, մի վախեցեք, գնացեք, նրա հայրը մեծ մարդ էր, մեր բարեկամն էր»:

Տեր-Թադևոսը Լոռու շրջանի առաջադեմ դեմքերից էր, գյուղի աչքի ընկնող հասարակական գործիչներից: Նրա օրով է գյուղում գործածության մեջ մտել կաղամբը և ապա կարտոֆիլը: Նա է առաջին լամպը գնել, բերել Դսեղ: Նավթի գործածությունը նրա օրով է սկսվել, մինչև այդ գյուղում վառում էին մոմի ճրագներ: Այդ եղել է մոտավորապես 1873—74 թվականներին:

Տեր-Թադևոսը շատ էր սիրում Թիֆլիսը: Ամեն տարի ձիով գնում էր Թիֆլիս, իր տղային տեսնելու: 1898 թվին, երբ սկսվում է երկաթգծի կառուցումը, նա շատ է ուրախանում, որ հնարավորություն կունենա ավելի հաճախ գնալու Թիֆլիս: Բայց հենց նույն տարին նա վախճանվում է և միայն գնացքի ձայնն է լսում ձորում:

ՄԱՅՐԸ

Մորս ձայնը մեղեդիական
Ահա հնչում է քնքուշ
Նրա հայացքը մայրական
Ինձ հետևում է զգույշ:

Թումանյանի հոր հակապատկերն էր մայրը՝ Սոնան: «Երկու ծայրահեղորեն տարբեր արարածներ հանդիպել են իրար»,— գրում է Թումանյանն իր ծնողների մասին:

Մայրը նույն գյուղից էր. սարերում ապրած ու մեծացած, իր հոր նման՝ առողջ, ուժեղ և դիմացկուն: Բարձրահասակ էր, գեղեցիկ և կարմրաթուշ. կատարյալ սարի աղջիկ, ինչպես գյուղացիներն էին ասում նրա մասին՝ «մի գիժ պախրի կով»: Աշխատասեր էր, մեծ կամքի տեր, գյուղի անվախ կանանցից էր. նա էր կառավարում տունն ու սարը:

Մայրը տարվա մեծ մասը սարերումն անցկացնելով՝ իր երեխաներին էլ սարերումն էր պահում, մեծացնում: Սարն էր գնում վաղ գարնանը ու մնում մինչև ուշ աշուն: «Հենց որ գարունքանում էր, էն ա սարն էի տանում երեխանցը,— պատմում էր Թումանյանի մայրը,— տանելուս էլ ապրանքը ձիուն էի բեռնում, ապրանքի ետևից ոտով գնում, որ ձիու վրա երեխեն չհարվի: Սարերումն էլ է՛ն ծաղկոտ տեղերումն եմ պահել, աղբյուրների մոտ կացել: Սարերում մնում էինք մինչև ձնի կաթոցը, էն ա ձնի հետ կոլոլվելով գալիս էինք գեղը. ամպը գոռում էր, չոքում, սևակնում, չանգը կոխում...»

Բանաստեղծի մոր սիրած սարը, որտեղ նա շատ է մնացել և որտեղ պահել է իր երեխաներին, կոչվում է Ղարանլուղդարա՝ Մթին Ձոր: Այդ սարը գտնվում է Քոշաքար լեռան մոտ, գյուղից քառասուն-հիսուն կիլոմետր հեռավորության վրա: Մինչև վերջին տարիներն էլ, թեև ութսուն տարին անց էր կացրել արդեն, նա գնում էր սար, սարերում անասունները պահում և ձմեռվա կաթնամթերքը պատրաստում: Վերջին անգամ իննսուն տարեկան հասակում, մի անգամ էլ սարն է գնում՝ վերհիշելու, վերապրելու սարերում անցկացրած օրերը, սարի կարոտն առնելու:

Թումանյանն ասում էր, «Ինչ-որ սարի բան կա իմ մեջ,

դա իմ մորիցս է՝ Նանից: Թոչող կին էր իմ մայրը. արծվի թռիչք ուներ: Ամենաբարձր սարերում, ծաղկոտ տեղերում է պահել ինձ: Շատ բան է տվել ինձ մայրս, շա՜տ... շա՜տ էր սիրում ինձ»:

Մայրն անգրագետ էր: Մի անգամ երեխաներից մեկի հարցին, թե՝ Նա՜նի, դու ուսումնարան գնացե՞լ ես,— նա պատասխանել է. «Բա՜, գնացել եմ, տասներկու ուսումնարան եմ ավարտել...» ու թվել է այն բոլոր սարերը, ուր գնացել էր ամառները՝ Կարմիր էր (այր), Ծաղկոտ ուրթ, Հոշաքար, Ղարանլուղդարա, Կալերի Սեռ, Իքատակ, Սոթ և այլն:

Շատ աշխատասեր կին էր Թումանյանի մայրը: Սիրում էր և՛ դաշտի, և՛ սարի աշխատանքը: Նա տանը շարունակ խոսում էր, կովում, որ առավոտը վաղ վեր կենան, աշխատանքի գնան, խնայողությամբ ապրեն: Հենց որ նա խոսում էր ու սկսում կովել, տերտերն ասում էր. «Երբ պիտի գարունքանա, որ սրան սարը ղարկենք, մենք էլ հանգիստ ապրենք»: Իսկ երբ նա սարն էր գնում, տանը հարսանիք էր. ուշ էին վեր կենում, հանգիստ էին աշխատում, միրգն էլ առատ էր լինում:

Նա ութ երեխա ուներ՝ հինգ տղա և երեք աղջիկ: Ամենամեծը և ամենից շատ սիրվածն ու փայփայվածը ապագա բանաստեղծն էր:

Մայրը, բացի սարի ու դաշտի աշխատանքից, այդ բազմանդամ ընտանիքի մանվածքն ու գործվածքն էլ էր անում. «Ցերեկը ապրանքն էի պահում, գուլպան ձեռքիս գործելով, գիշերը թել էի մանում, չուխա, խալի գործում»,—ասում էր մայրը:

Նա իր ճախարակի առաջ նստած՝ գիշերները թել էր մանում, հետո էլ երգ ասում: Իր ութ երեխային այդպես է պահել, մեծացրել: Երգել է տխուր երգեր՝ արևելյան եղանակներ, ժամանակի տարածված ժողովրդական և հայրենասիրական երգեր, օրինակ՝ «Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից...», «Մանի՜ր, մանի՜ր իմ ճախարակ», «Ազնիվ ընկեր» և այլն:

Լինելով զրույց սիրող և լավ պատմող կին՝ նա իր երեխաներին հին-հին զրույցներ էր պատմում իրենց տան մեծերից՝ Օվագիմ Յուզբաշուց և նրա քաջագործություններից:

Լեգենդներ, հեքիաթներ էր պատմում առակների հետ միասին, համեմած ժողովրդական ոճով ու դարձվածքներով: Պատմում էր Հասան խանի օրերից, ինչպես Լոռվա գյուղերի բնակչությունն այդ ժամանակները գյուղերից փախած՝ ահ ու սարսափի մեջ պատսպարվել է այրերում: Պատմում էր Օհաննես պապից ու նրա յոթ եղբայրներից, անցած ժամանակներից և իր ջահել օրերից: Նա հարս է եղել նահապետական մեծ ընտանիքում՝ քառասուն-հիսուն հոգուց բաղկացած մեծ գերդաստանում: Ընտանիքն ավելի բազմանդամ է եղել նրա սկեսրոջ ժամանակ: Երբ Թումանյանի տատը հարս է գալիս տուն, տանը վաթսուն մարդ են լինում, ութ ծեր, սպիտակ մորուքավորներ, և չի իմանում, թե ո՞րն է մեծը, որ առաջ նրան ծառայի:

Թումանյանի մայրը իր հոր նման երկարակյաց էր. նա վախճանվել է իննսունչորս տարեկան հասակում (1842—1936):

ԱՆՀՈԳ ԵԶՆԱՐԱԾԸ

Թումանյանն ընտանիքի անդրանիկ երեխան էր: Տանը փոքր հասակից շատ են սիրել նրան: Մայրն ասում էր. «Գիշեր-ցերեկ ձեռներիս ենք պահել ես ու իմ սկեսուրը: Օրորոց չենք դրել, ոչ էլ ճոճի մեջ, որ միտքը պայծառ մնա, չօրորվի»:

Թեպետ լավ են պահել, բայց ինքը շատ լացկան երեխա է եղել: Պատմում են, թե իրիկնադեմից մինչև լույս լաց էր լինում: Հայրը երբեմն բարկանում էր, որ քնի, լաց չլինի, բայց ոչինչ չէր օգնում. տատն էր՝ իր հոր մայրը, որը թոռանը պահում էր, պաշտպանում: Գիշերները միրգ էր տալիս, ընկույզ և չամիչ դնում բարձի տակ, լաց լինելիս՝ տալիս էր նրան:

Տատերը շատ են սիրել իրենց թոռանը. ավելի շատ՝ հոր կողմի տատը: Այդ տատը գեղեցիկ ու կիրթ կին էր. չէր սիրում գյուղի աշխատանքը: Նա ավելի էր սիրում քաղաքը և քաղաքի կյանքը:

Նա է հետևել թոռան կրթությանը, նրա հագնվելուն, շարժուձևին, պահանջելով, որ ամեն ինչ մաքուր լինի: Թո-

ման անունը դրել էր իր ամուսնու անունը՝ Օհաննես աղա: Եվ գյուղում այդպես էլ կոչում էին Թումանյանին՝ Օհաննես աղա:

Թումանյանին պակաս չափով չի սիրել և մյուս տատը՝ մոր մայրը: Իր մանկությունը հիշելիս Թումանյանն ասում էր՝ «Երկու տատիս ծոցումն եմ մեծացել»:

Տատի տունը գտնվում էր գյուղի մյուս ծայրին: Տատը թխվածքներ էր պատրաստում, սարի ագդակ* ու սեր էր ուտեցնում թոռանը, միրգ էր տալիս, սիրում, գուրգուրում, ամառներն էլ իր հետ սարն էր տանում: Սարերում նա իր հասակակից երեխաների հետ գառներ էր արածեցնում:

Փոքրիկ Հովհաննեսը թեև նիհար, բայց շատ առողջ, ժիր, աշխույժ և չարաճճի երեխա է եղել: Կարմիր արխալուղը հագին, մորթե փափախը գլխին, ոտքին տրեխներ, ճիպոտը ձեռին, իր հասակակիցների հետ շարունակ ձորերում, հանդերում խաղացել է, վազվզել, թափառել:

Յոթ-ութ տարեկան հասակում նա «եզնարած» էր, բայց եզները միշտ կորցնում էր: Իրենց անասունները տանում էր հանդ, բաց թողնում, ինքը հեռանում մի քարի գլխին նստում կամ ծառի տակ պառկում և անձնատուր լինում իր երազներին: Ժամերով նայում էր վերջալույսի վարդագույն ամպերին, հետևում էր Զաթինդաղի գագաթի ամպերի խաղերին, նրանց սահուն ու դանդաղ ընթացքին և երազում... Լսում էր թռչունների ծլվլոցը, ծղրիդներին, պառկում էր ձորափին ու լսում Դեբեդի վշշոցը...

Ներշնչված բնության գեղեցկություններով, մոռանում էր ամեն ինչ, մնում էր իր մտքերի հետ, իսկ անասուններն արածելով՝ գնում հեռանում էին իրենց հսկողից ու կորչում...

Մանուկ Հովհաննեսը շատ էր սիրում բնության խաղաղ ժամերը, լռությունը՝ մենության մեջ: Լոռու հանդերում կամ բլուրների վրա նա պառկում էր, խորասուզվում երկնքի մեջ: Լեռնային բուրումնալի զով ու կազդուրիչ օդում, կանաչ, ծաղկավետ խոտերի մեջ հետևում էր արծիվների թռիչքին ու լսում նրանց ծղրտոցը կամ զմայլվում թիթեռ-

* Սերուցքից ու խմորից պատրաստված թխվածք:

ներով, որոնք՝ ծաղկից ծաղիկ թռչելով, գույների խաղ էին ստեղծում...

Շատ ուշ, երբ մութն ընկնում էր, սթափվում էր նա իր երազներից, հիշում իր եզներին և դատարկ վազում տուն: Տանը երազկոտ փոքրիկ «եզնարածին» խիստ հանդիմանում էին այդ բանի համար, երբեմն նույնիսկ ծեծում: Մայրը տղային ծեծից ազատելու համար տանում էր հարևանների տանը պահում:

Փոքրիկ Հովհաննեսը թեև վատ եզնարած էր, բայց շատ էր սիրում եզներին և ընդհանրապես կենդանական աշխարհը: Իր կենսագրական նյութերի մեջ բանաստեղծն առանձին սիրով ու կարոտով է հիշում իրենց պապոնց տան կենդանիներին:

«Իբրև հին կարոտ մտերիմների, հիշում եմ պոզատ գոմեշը՝ Նազլուն, Ծաղիկը (կովի անուն), Զերքեզը, Աբրաշը (եզներ), Թոբլան շունը, Ղայթարը (շան անուն) իմ պապոնց, մեր Մարինոս էշը, Ղռաթ ձին, մեր սև Մաշկոն (շուն)»:

Հետագայում, երբ գրում է կենդանիների կյանքից իր հայտնի պատմվածքները, նա առանձին ջերմությամբ ու մտերմությամբ է խոսում կենդանիների ու թռչունների մասին:

Իր մանկության օրերի վերհուշերին նա բանաստեղծություններ ունի նվիրած, ինչպես «Հիշողություն հայրենիքից», «Մանկություն», «Պատրանք», ինչպես և արձակ գործեր, որոնց մեջ վերապրում է իր անցած անհոգ օրերի տպավորությունները: Ինչպես ասացինք, նա ունեցել է երեք քույր, չորս եղբայր, իր փոքր եղբոր հետ նա սովորել է Զալալօղլու դպրոցում և խաղացել սարերում: Իր այդ բանաստեղծություններից մեկում վերհիշում է և նրանց.

Ահա փոքրիկ իմ քույրերը
Խաղ են անում միասին,
Օ՜հ, անհանգիստ, չար եղբայրը
Նրանց ծեծում է կրկին...

Չարաճճի ու անհանգիստ է եղել իրենից երկու տարով փոքր եղբայրը և միաժամանակ շատ ընդունակ, որին և հիշում է իր բանաստեղծությունների մեջ:

«Հիշողություն հայրենիքից» ոտանավորի մեջ նա հիշում է «բազմահոգ գյուղացուն», որի «երեսին ծիծաղ չկա», ու լսում է նրա երգը՝ «միանման ու տխուր», թշվառ հայ գեղջկուհուն՝ «դեմքը վշտոտ ու նիհար»: Շքեղ բնությանը նա հակադրում է իր վշտակիր երկիրը:

Ի՜նչ սիրուն է և հոյակապ
Հայրենիքս վշտակիր:

ԽԱՂԵՐԻ ՈՒ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գյուղի վայրերից, ուր անց է կացրել իր մանկությունը, Թումանյանն ամենից շատ Դիդն էր հիշում ու սիրում:

Դիդը գյուղի հյուսիսարևելյան կողմում, հարթավայրի կենտրոնում՝ քարոտ կատարով մի բլուր է: Հնում, հարձակումների ժամանակ, դիտարան է եղել, հետո դարձել է ուխտատեղի, այժմ զբոսավայր է հովեկների համար: Բլրի կատարին մի հին մատուռ է կանգնած, իսկ չորս կողմը տարածվում են գյուղի արտերը: Դիդ գյուղի կատարից երևվում է Դսեղն իր շրջակայքով ու սահմաններով:

Դիդ գյուղում ամառը միշտ հով է, օդը դուրեկան և բուրումնալի: Այնտեղ քամին միշտ խաղում է ազատ...

Դիդի կատարին բուսնում են ուրց և անանուխ, ստորոտին՝ բազմազան բուրավետ ծաղիկներ. օդում ճախրում են արտույտները, թիթեռները թռչում են ծաղկից ծաղիկ ու կենդանացնում շրջապատի հարթավայրը:

Աշնանը լուռ է, տխուր և թախծալի. ծաղիկներն ու խոտերը թոշնած են, դեղնած... թռչունները չված, հեռացած...

Առաջ, բանաստեղծի մանկության տարիներին, Դիդի ստորոտում աղբյուրներ են եղել, որոնք հիմա ցամաքել են, կտրվել: Մնացել է մի մեծ կարմիր քար, որի տակ, ինչպես բանաստեղծն էր ասում, անձրև ժամանակ թաքնվել է ինքը՝ անհոգ փոքրիկ «եզնուրածը»: Մինչև հիմա էլ մնում է այդ քարը:

Դիդի ետևը, ձորի մյուս ափին, որպես ֆոն, ձգվում է Զաթինդաղ լեռնաշղթան, որի գագաթը գարուն-ամառ ծածկված է թխպով: Այդ այն լեռնաշղթան է, որի վրայով՝

...Ամպերը դանդաղ ուղտերի նման
Նոր են ջուր խմած ձորից բարձրանում...

Դիդի ստորոտին, գյուղի հակառակ կողմը, ձորափին՝ կանգնած է Սիրուն Խաչ գեղեցիկ խաչքարը, որ այն

...Քարի գլխից, լուռ մարդու նման,
նայում է ձորին...

Ձորին, որտեղ գտնվում է Բարձրաքաշ ս. Գրիգորի վանքը, տասներկուերորդ դարի գեղեցիկ հուշարձաններից մեկը: Վանքի մոտ կա մի վճիտ ու սառն աղբյուր: Այդ աղբյուրը և ձորը բանաստեղծի սիրած վայրերից են եղել՝ ինչպես մանկության օրերին, այնպես էլ հետագայում:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծի մանկության և պատանեկության շրջանի վայրերը հարուստ են եղել պատմական հուշարձաններով, որոնք մեծ ազդեցություն են ունեցել նրա վրա: Հին դարերի այդ հուշարձանները առանձին գեղեցկություն և հմայք են տվել Լոռվա բնությանը:

Թումանյանը շատ է սիրել այդ վայրերը, և տանից ու դաշտի աշխատանքից ազատ՝ պտտել է այնտեղ:

Իր դասընկերներից մեկը՝ Գաբո բիձեն, պատմում էր իրենց մանկության շրջանի օրերից ու սիրած վայրերից, ուր խաղացել են միասին:

«Հինգ-վեց տարեկան երեխեք էինք. անբան երեխեք. էն ա հանդն էինք գնում, խաղ անում: Օհաննեսն էլ շատ էր սիրում. տանից փախած սաղ օրը ման էինք գալիս: Գնում էինք Դրդի ուսը. ապրանքը հետ էինք ածում, թոցնում: Ընտեղից գեղի մյուս ծերն էինք վազում՝ Կաթնաղբյուրն ու Առվյակը: Աղբրի մոտ հաց էինք ուտում կամ թե ծովերն էինք գնում՝ մոռ, մոշ ուտելու, ծտի բույն ման գալու, ձու հավաքելու...»

Աշնանը խմբով գնում էին վայրի տանձ ու խնձոր և զանազան պտուղներ՝ հոն, կաղին, ուռար հավաքելու:

Շատ են սիրել խաղալ ս. Գրիգորի վանքի և նրա աղբյուրի մոտ: Այնուհետև իջել են Ձաղի ձորը, այնտեղ, որտեղ հիմա Թումանյանի անվան հրապարակում աղյուսների հանքերն են:

Զաղի ձորը Լոռվա խիտ, կուսական և հարուստ ձորերից էր: Այդ ձորում՝ Դեբեդում լողացել են, խաղացել, ձուկ բռնել: Այսպես էր վերհիշում Գաբո բիձեն իրենց մանկությունը:

Այդ ձորում անցկացրած մանկության օրերը հաճախ էր հիշում բանաստեղծը հետագայում. «Օրը քանի՜ անգամ էի գնում-գալի Զաղի ձորը, ես հո ման չէի գալի, ուղղակի թուչում էի. մարդ է՞նքան էլ առողջ լիներ... անսպառ եռանդ էի...»

«Ծովերը», որ գյուղի գեղեցիկ անկյուններից մեկն է, գտնվում է գյուղից երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա. անտառի մեջ եղեգնուտով շրջապատված փոքրիկ մի լիճ, որ կոչվում է նաև՝ Տզրուկա-գոլ, որովհետև լիճը լիքն է տզրուկով: «Ծովերը» առաջ երկու մեծ և փոքր լճից է կազմված եղել, այժմ փոքրը ցամաքել է և մնացել է միայն մեծը:

Ծնորհիվ իր այդ թափառումների՝ Թումանյանը մանկուց արդեն լավ էր ճանաչում գյուղի, նրա շրջակայքի ու սարերի հուշարձանները, մութ ծմակներն ու թալանները: Նրան ծանոթ էին ամեն մի քար ու ծառ, ամեն այր ու վանք, խաչքար և քարանձավ:

Նա գիտեր բուսական աշխարհը, վայրի բույսերի, ծաղիկների բուժիչ հատկություններն ու անունները, գիտեր բանջարեղենների զանազան տեսակները, արմատեղենների անունները, ինչպես՝ կոճղեզ, ճանդուկ, ավելուկ, երիցուկ, ուրց և այլն:

Մանուկ Հովհաննեսի մեջ սերը դեպի բնությունը, դեպի խաղերն ու թափառումները շատ ուժեղ է եղել: Նա միշտ նախընտրել է բնության մեջ ազատ կյանքն ու երազանքը, խաղն ու երգը, ազատ ժամանցն ու զբոսանքը իր ընկերների հետ:

Թումանյանի մանկության օրերի արկածներից հայտնի է՝ «Զերքեզի պոզի» պատմությունը, որ ինքը՝ Թումանյանը, պատմում էր հետագայում:

Մի ամառվա շոգ օր, կալի ժամանակ Թումանյանի հայրը եզները կալն է անում լծելու: Հենց այդ ժամանակ գյուղացիները գալիս են հորը գյուղամեջ կանչում: Ամառվա շոգ օր, եզներն սկսում են այս ու այն կողմ գնալ: Հով-

հանձնեսը քար է գցում. քարը գալիս է դիպչում Չերքեզի պոզին, պոզը դուրս է ընկնում: Հովհաննեսն իսկույն վազում է, պոզը նորից տեղը դնում: Քիչ հետո հայրը գալիս է, ուզում է եզները լծել: Չերքեզը ցավից մոտ չի թողնում, որ ականջը բռնի: Հայրը՝ միամիտ, պոզիցն է բռնում, պոզը մնում է ձեռին, իսկ եզը փախչում է: Տերտերը հասկանում է, որ սա իր տղայի գործն է, բարկանում է, պոզը շպրտում է տղայի կողմը, թե «Դու ինձ համար տուն չես շինի»: Հովհաննեսը թողնում է կալը, փախչում է Դրդի կողմերը՝ իր սիրած վայրերը...

Թումանյանը սիրել է կալի աշխատանքի հանգստի ժամերը: Այդ է պատճառը, որ նա ամենից շատ սիրում էր կալի դագեն և մոտի դեզերը: Ցերեկը պառկում էր ստվերում, իսկ ուշ երեկոյան՝ բաց երկնքի տակ, ու այնտեղ մտորո՛ւմ, երազո՛ւմ... Այնտեղ է գրել իր լիրիկական բանաստեղծություններից մի քանիսը, ինչպես՝ «Է՛յ աստղե՛ր, աստղե՛ր, երկնքի աչքեր...» և այլն:

Բանաստեղծի տաղանդի կազմավորման գործում մեծ նշանակություն են ունեցել մանուկ օրերին հայրենի օջախում տան մեծերից լսած զրույցները, լեգենդները, առասպելները: Ժողովրդի խոսքն ու զրույցը՝ համեմած առակներով և ժողովրդական դարձվածքներով ու ոճերով, հարստացրել են նրա երևակայությունը և լեզուն. դա է եղել նրա առաջին դպրոցը: Եվ այդ է պատճառը, որ հետագայում բանաստեղծը այնքան կարևորություն է տալիս ժողովրդական բանահյուսությանը, և ինքն էլ առատությամբ օգտվում է մանկության և պատանեկության օրերին լսած զրույցներից: Այդ մասին ինքն էլ է հիշատակում հետագայում իր մի հոդվածում. «Էն գլխից սիրել և հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով և շատերն անգիր գիտեմ դեռ մանկուց»: Նա սիրել է սարերում ու ձորերում կամ գյուղի օդաներում զրույցի նստել գյուղի մեծերի հետ ու լսել նրանց. սիրում էր գյուղացու կենդանի խոսքը՝ զրույցը, նրա շվին, նրա սայլի ու կալի երգը: Ինչպես ասում են՝ Թումանյանի ականջը ժողովրդի լեզվին էր:

Բանաստեղծն առանձին քաղցրությամբ էր հիշում գյուղում անցկացրած օրերը: Իր պատմվածքներից մեկը՝ «Իմ

ընկեր Նեսոն», որի մեջ կենսագրական շատ բան կա, հենց այդ օրերի նկարագրությամբ էլ սկսվում է:

«Մի խումբ ընկեր երեխաներ էինք: Գյուղացի երեխաներ:

Ո՛չ ուսումնարան կար, ո՛չ դաս, ո՛չ դաստիարակություն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք. ի՞նչքան էինք խաղում: Ու ո՞նց էինք իրար սիրում, ո՞նց էինք իրար սովորել: Սոված ժամանակներս էլ վազում էինք, հացի սաստիցը մի կտոր հաց առնում, պանրի կարասիցը մի կտոր պանիր, ու էլ ետ շտապում իրար մոտ: Իրիկուններն էլ հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքիաթ պատմում:

Մի ընկեր ունեինք, անունը Նեսո: Է՞նքան հեքիաթ գիտեր, է՞նքան հեքիաթ գիտեր, որ ոչ ծեր ուներ, ոչ տուտ:

Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջ-բոլոր նստոտում էինք, հիացած պլըշում Նեսոյի՝ ոգևորությունից գեղեցկացած դեմքին: Ու պատմում էր նա հուրի փերիներից, Զմրուխտ Ղուշից, Լիս ու Մութ աշխարհից...»

Մանկության տարիներին իր ընկեր Նեսոյից լսած հեքիաթներից շատերը Թումանյանն անգիր գիտեր:

Իր տան մեծերից ու քեռիներից լսում է լեգենդներ, զրույցներ և զանազան պատմություններ: Նա սիրով ու կարոտով էր հիշում այն օրերն ու գիշերները, երբ իր հարազատների շրջանում լսել է նրանց զրույցը:

Ուր որ հայրենի օջախի առաջ.....
Ու ձմռան երկար գիշերը նստած՝
Խոսում են Լոռու հին-հին քաջերից...

Նա սիրով էր հիշում աշնան այն օրերը, երբ քեռիները սարից ձիով տուն դառնալիս՝ ճանապարհին առակ ու լեգենդ էին պատմում: Նա հիշում էր քեռի Իսայուն, որը նրան պատմել է «Ծունն ու կատուն» զրույցը, «Արծիվն ու Կաղնին», «Անբախտ վաճառականները» և մյուսները: Հետագայում, երբ սկսում է գրել, Թումանյանն առատությամբ է օգտվում մանկության օրերին գյուղում լսած այդ ժողովրդական նյութերից՝ հեքիաթներից և լեգենդներից:

Հեքիաթների ու լեգենդների հետ միասին բանաստեղ-

ծը սիրում էր սարի շվին: Սիրում էր սայլվորի երգը, կալի երգը, գութանի հորովելը գյուղում, հանդերում, իսկ սարերում՝ դագաղների առաջ, նա պառկում էր «թա՜րմ, ցողապատ լեռների լանջում», ժամերով լսում հովիվների սրինգը, նրանց կանչը, նվագն ու բայաթին:

Սրինգ ածողներին ու առակ պատմողներին Թումանյանը միշտ հիշում էր ու սիրում: Հետագայում, երբ Թիֆլիսից գյուղ էր գնում, պահպանում էր իր սերտ բարեկամությունը նրանց հետ, հրավիրում էր տուն, հյուրասիրում, նվերներ տալիս՝ գիրք, ծխախոտ, արխալուղ կամ ուղղակի դրամ:

Ծվի ածողներից Դսեղում այն ժամանակ հայտնի էին քեռի Եզեկը, հովիվ Ակոփը, Ղշի Միխակը և մյուսները, առակ ասողներից՝ Մելքոնանց Օհաննես ապին: Նա մի ծեր, չքավոր բոստանչի էր, որ մշտապես ապրում էր Զաղի ձորում, ամառները բանջարեղեն էր մշակում ու դրանով ապրում:

Ահա այդ Օհաննես ապիի դափումն է հաճախ գիշերը մնացել Թումանյանը, նրա հետ եղնիկի որսի գնացել, կրակի կողքին նստած զրույց արել որսից ու կենդանիների կյանքից:

ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

Հեքիաթների ու խաղերի աշխարհից դուրս Թումանյանը մի ուրիշ ավելի մեծ աշխարհ ուներ, որին կապված էր վաղ մանկուց, նրա գիրկն էր գնում միշտ, նրանից շատ բան էր ստացել, շատ բան սովորել: Այդ աշխարհը բնությունն էր՝ իր ծննդավայրի լեռները: Բնությունը բանաստեղծի ներշնչարանն էր: Նա սիրում էր Լոռու վայրի բնության շքեղ տեսարանները, նրա «վեհ ու վիթխարի լեռները», որոնք հարբած շարքերով շուրջպար էին բռնել, սիրում էր սաղարթախիտ կուսական անտառները, թավուտ ծմակները, մամոռոտ ժայռերը. սիրում էր նրա սառն ու վճիտ աղբյուրները, բնության բոլոր գույները, ձայները...

Նա հաճախ է առանձնացել բնության գրկում ազատ ապրելու, նրա հետ ձուլվելու, նրանով շնչելու: Սիրել է

թափառել Լոռու անտառներում մեն-մենակ, իր ցնորքների հետ կամ հանդի լռության մեջ լսել թռչունների ծլվլոցն ու արտերի սվսվոցը...

Լոռու հանդերն ու արտերը առանձնապես սիրուն ու կենդանի են գարնան օրերին, երբ ծաղկի ու կանաչի բացվելու հետ միասին սկսում են երգել ծղրիդները, ճախրել արծիվները, արտերի մեջ՝ արտորել արտույտները:

Իր կյանքի հասուն շրջանում նա հիշում էր Լոռվա հանդերի արտույտները... վերհիշում իր մանկությունը, վերապրում ու կարոտում...

Կլթացնում են, արտորում
Արտույտները արտերում,—
Թռչում մանուկ հոգուս հետ,
Ճախրում, ճխում եթերում:

Նա հիշում էր իր հայրենի անտառները՝ գարնան բացված լորիները, աշնան դեղին ու կարմիր կաղնի և հաճարի շքեղ ծառերը, որոնք ասես կանչում էին իրեն,— հիշում Ի՛ր, տխրո՜ւմ... կարոտո՜ւմ...

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով.
— Ջա՜ն, հայրենի անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Բնության կարոտը թախիծ էր բերում նրան: Առանձին խորությամբ է հիշում նա իր հայրենի ամպամած լեռները, միշտ ոգևորվում նրանցով ու կարոտով նրանց գիրկը թռչում:

Իր պատմվածքներից՝ «Ծղրիդում» զգացվում է Թումանյանի այդ խոր և մեծ կարոտը, մանկության օրերի վերապրումը. «Լսե՞լ եք էն թախծալի ճրոռոցը, որ ծաղկի բուրմունքի ու կանաչի թարմության հետ խառնված հոսում է գարնան դաշտերի երեսով:

Իհարկե լսել եք, և ինչքա՜ն եք լսել: Դեռ ով գիտի, գուցե էդ ժամանակ մի ծառի կամ թփի տակ պառկած խորասուզվել եք ջինջ կապույտ երկնքի խորության մեջ, մաքուր, թեթև երազների մեջ, իսկ չորս կողմերդ ծավալվում է համատարած՝ ճրո՜ռ... ճրո՜ռ...

Հանդի կամ դաշտի ծղրիդն է իր անթիվ ու անհամար ընկերներով:

Կամ գուցե հիշո՞ւմ եք էն մելամաղձոտ ճրռռոցը, որ ամառվան իրիկունները մենակ ու միալար հնչում է գյուղական խաղաղ տան մի որևէ անկյունից:

Եվ ի՜նչ դուրեկան թախիծ է բերում մարդու հոգուն, ի՜նչ խաղաղություն, մանկության օրերից, մանկության իրիկուններից, նրանից էլ կարծես դենը՝ հեռավոր ու անորոշ հիշողություններ...»

Ինքն է այստեղ, Թումանյանը՝ իր մանկության օրերին, բնության գրկում, մանկության հիշողությունների քաղցրության հետ միասին:

Ամառները, երբ Թիֆլիսից գյուղ էր գնում, նա հաճախ բարձրանում էր Դիդը՝ զբոսնելու· պառկում էր նրա ստորոտին ու նայում մոտակա արտերին, հեռավոր անտառապատ սարերին և մտքով թռչում, պանում դեպի Լոռում անցկացրած իր մանուկ օրերը, երազանքները, արկածները ու խաղերը:

«Հե՜յ, գիտի հա՜... ի՜նչ օրեր եմ անցկացրել փոքր ժամանակս էստեղ: Երեխեքով հավաքվում էինք Դրդի դոշը՝ ուրց էինք քաղում, հասկերից պկու* շինում, մեջքներիս վրա պառկում էինք ու ածում... ի՜նչ լավ էր...

Արտերի միջնակներում ինչքա՜ն մորի եմ հավաքել, ծմակներում կխտարի որս արել...»

Նա հիշում էր իր խաղերը, արկածները, իր լավ օրերը, որ անց էր կացրել այնտեղ:

— Էն ի՜նչ բան էր, մարդ որ հիշում է... շա՜տ էի խաղում, վազում, վազվզում, ինչքա՜ն էի չար ու չարաճճի, ինչ օյին ասես չէի սարքում... է՜... է՜...

Իր կյանքի վերջին օրերին, 1923 թվի մարտին, Մոսկվայում, մի անգամ էլ անհուն կարոտով հիշում է Դիդը.

«Շատ էի ուզում, որ Դիդ գյուղի ուսին լինեմ· էնտեղ եմ անցկացրել երեխա ժամանակիս լավ օրերը... շա՜տ եմ խաղացել էնտեղ, շա՜տ...»

Մանուկ Թումանյանի վրա խոր տպավորություն է արել

---

* Պկու— նվագածության գործիք՝ հասկի ցողունից կամ եղեգնից պատրաստած:

Դեբեդ գետն իր վշշոցով ու իր ձորով: Դեբեդի ձորն ու նրա վշշոցը հաճախ է պատահում ու հիշվում բանաստեղծի պոեմներում ու պատմվածքներում: Դեբեդը մասնակից է պոետի և նրա երկերի հերոսների ապրումներին: Դեբեդը ոգիացած է, շնչավորված: Նա մերթ ագում է ու հեծեծում՝ ծեր նանի հետ խավար անդունդում, մերթ հուզված, խլաձայն ողբով սողում դեպի ցած կամ տխուր շարական երգում, իսկ ավելի հաճախ՝ մոնչում է մենակ, խոր ու մութ ձորերում, խոսում բանաստեղծի հոգու հետ, իսկ նրա ականջը Դեբեդի ձայնին է, Դեբեդի հետ·

Իր կենսագրական նյութերի մեջ Թումանյանը գրում է.

«Իմ մեծ ուսուցիչն է եղել Դեբեդի վշշոցը՝ գիշերները լռության մեջ միշտ ականջ էի դնում Դեբեդի ձայնին, երբեմն խուլ ու խոր, երբեմն պարզ ու անավոր: Եվ կարծես խոսում էր հոգուս հետ...»

Այո՛, կենդանի է ու շնչավորված Դեբեդը Թումանյանի համար: Նա երբե՛ք, երբե՛ք չէր մոռանում Դեբեդի վշշոցը, նրա փրփրադեզ ալիքները, նրա ժեռուտ, քարքարոտ ափերը, նրա խիտ, անտառապատ ձորերը, նրա ափի շքեղ և գունագեղ ծաղիկները... Հարազատ ու թանկ էր Դեբեդը բանաստեղծի հոգուն:

Դեբեդի վշշոցը գյուղում գիշերային խաղաղության մեջ ավելի լավ է լսվում, ավելի տպավորիչ է ու խորհրդավոր, բան ցերեկը: Ցերեկները գետը երևում է գյուղի ձորափի ժայռերի գլխից, այդտեղից ամբողջ ձորն է բացվում՝ խոր, լայնաբերան, և անդնդում, ձորի միջով օձապտույտ ու կատաղի հոսում է Դեբեդը, նրան զուգահեռ անցնում է երկաթուղին:

Դեբեդի ձորը բանաստեղծի սիրած վայրն էր, որ գյուղի ամենամոտ ձորն է, գտնվում է հենց Դսեղ գյուղի տակ և կոչվում է «Տան տակի ձոր»: Այդ այն ձորն է, որի նկարագրություններով է սկսում Թումանյանն իր «Լոռեցի Սաքոն»:

Դեբեդի շքեղ ու հարուստ ձորը հաճախ էր հիշում բանաստեղծը: «Ամբողջ ձորը ծածկված էր խիտ անտառով, գետը հազիվ էր երևում նրա վրա կախված ծառերի տակից: Ահով ու սարսափով էինք մտնում այդ անտառը՝ Դեբեդի մեջ լողանալու համար: Մեր այգում՝ հրե՛ն այնտեղ,

հսկայական ընկուզենիներ կային: Կանգնում էինք նրանց տակ, փայտե ճղորուտներով անագին տարածության վրա խփում էինք ծառերի վերին ճյուղերին, թափում կաղաղահան ընկույզները... Հիմա... քաչալացել է մեր ձորը, կտրատել են ծառերը և դեռ կտրատում են անդադա՛ր»:

Դեբեդի այդ ձորն այն ժամանակ հարուստ է եղել հաստաբուն, դարավոր կաղնիներով, ընկուզենիներով և պրտղատու այլ ծառերով ու խաղողի այգիներով: Այդ ձորումն է եղել բանաստեղծի պապերի ընկուզենու հին այգին ու ջրաղացը:

Երբ 1898 թվին կառուցվում է Թիֆլիս—Ղարս երկաթուղին, Դեբեդի ձորի հարուստ անտառը և ընկուզենու այգին ոչնչացնում են: Կտրվում են հարյուրավոր հաստաբուն ընկուզենիներ և հազարավոր դալար ծառեր: Երկաթգծի մոտ պահպանվել է այդ հաստաբուն ընկուզենիներից միայն մեկը, այն ընկուզենիներից մեկը, որի հովանու տակ աշակերտ Թումանյանը ներկա է եղել իր պապերի քեֆին և որի նկարագիրը տվել է իր «Հին օրհնության» մեջ:

Կանաչ վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քեֆ էին անում
Եվ ուրախանում
Մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝
Գյուղի տերերը...

Ասում են, մինչև հիմա էլ Դեբեդի ձորում դեռ մնում են այդ այգու հետքերը՝ խորը թաղված գինու երկու մեծ կարաս, խաղողի որթեր, իր տատի սիրած թթի և հոնի ծառերը:

Գյուղից վերև գտնվում է այն վճիտ ու սառն առվակներից մեկը, ուր փոքրիկ Հովհաննեսն իր խաղընկերների հետ ամառը հաճախ գնացել է լողանալու: Դեբեդ գետում իր ընկերների հետ ձուկ է բռնել, լողացել, խաղացել:

Ի՞նչ հաճելի և ուրախ ժամեր է անցկացրել բանաստեղծն իր ընկերների հետ.

...Էն առվակում կեսօրին,
Երբ որ շոգից նեղանում,

Գնում էինք լողանում,
Տկլոր, աշխույժ խմբակով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում էինք, վազվզում
Գույն-գույն մանրիկ ավազում:
Կամ հետևում հնիհև
Թիթեռնիկին ոսկեթև...

Այս հեշտ ու թեթև, ուրախ ժամերի հետ բանաստեղծն ունեցել է և տխուր պահեր: Ձորում, գետափին, դափաներում* նա հանդիպել է չքավոր ու կարիքավոր գյուղացիների, գիշերներ անցկացրել նրանց հետ, ցավակից եղել նրանց, լսել զրույցներ նրանց ծանր ու դժվարին կյանքի մասին:

Ավելի ուշ, աշակերտական տարիներին, այդ հեքիաթային գիշերների մասին ինքը հիշում էր ու պատմում: «...Աշակերտ վախտս էր. Ղոխնանց Պապը մեր ձորումը գիշերները կրակի դրաղին չիբուխ էր սարքում, հեքիաթներ ասում... Դեբեդը վշշում էր... ձորերը թշշում, ձեն տալիս, պախրեն գոռում էր... Ղոխնանց Պապը պատմում էր, մենք էլ լսում էինք.. լա՜վ պատմող էր...»

Այդ գիշերներն ու զրույցները, գյուղացու պատմածները Թումանյանը հետագայում պատկերել է «Հառաչանք» պոեմում:

ՍԱՐԵՐՈՒՄ

Բնության գեղեցկությունն ու շքեղությունը, գյուղի կյանքն ու կենցաղը Թումանյանն ավելի խոր կերպով զգացել է. ու ապրել սարերում: Սարը նրա տարերքն էր: Սարի սիրտը վաղ է զարթնել նրա մեջ և մնացել մինչև իր կյանքի վերջը: Սիրում էր սարը, սարի-կյանքը, սարի արշալույսն ու վերջալույսը:

«Իմ կյանքի ամենալավ ու ամենաքաղցր օրերը սարերում եմ անցկացրել»,— ասում էր Թումանյանը, հիշելով իր կյանքի շրջանները, որ անց էր կացրել Լոռում: Սար գնալը Թումանյանի մեջ թողել է շատ թանկ հուշեր:

---

* **Դափա**— տաղավար, ձորերում, բանջարանոցներում ամառվա բնակելի տեղ, շինված է փայտից, վրան թեք մանր տախտակներ ու ճյուղեր, առաջը՝ բաց:

Իր մանկության շրջանի գարունները Թումանյանը սարերում է ապրել: Սիրում էր, երբ վաղ գարնանն սկսվում էր փոթորկի, կայծակի, հեղեղի ու տարափի շրջանը, երբ ջրերը հորդանում էին, բնությունը զարթնում՝ սարերն ու ձորերը կանաչ հագնում, մեկ թուխպ ու մշուշի մեջ էին կորչում, մեկ պայծառանում, շքեղ ու սիրուն տեսարաններ կազմում, և այդ բոլորից հետո՝ բացվում էր սարի գարնան չքնաղ առավոտը՝ թարմ, ցողապատ ու բուրավետ, հետն էլ բինաներում զարթնում էր սարվորների կյանքը՝ աշխույժ, զվարթ ու կենդանի:

«Անուշ» պոեմում Թումանյանն առանձին կարոտով է վերապրում սարի գեղեցիկ թարմ առավոտը, առանձին շքեղությամբ է նկարագրում ու երգում բնության թովչանքն ու հմայքը.

Ահա բացվեց թարմ առավոտ,
Վարդ է թափում սարին, քարին,

Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,
Ծնչում բուրմունք եղեմային:

Ա՜խ, ի՜նչ հեշտ են սարի վրա
Սահում ժամերն անո՜ւշ, անո՜ւշ...

Թումանյանի արտին թանկ էր ու հարազատ սարի կյանքի ամեն ձայն ու աղաղակ, ամեն վայր ու տեսարան: Հետագայում, երբ արդեն բանաստեղծ էր, նա կարոտով էր հիշում սարի կյանքն ու տխրությամբ դառնում այդ ուրացած, գնացած օրերին.

Եվ մութ այրերից մամոռոտ ժայռերի,
Թավուտ ծմակի լոին խորքերից,
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից...

...Եվ անքուն հովվի սաստող, ազդարար
Աղաղակները ակամա՛ջումս են դեռ:
Իսկ առավոտյան աղմուկը բինի,—
Հաչոց, բառաչոց, խրխինջ ու գոչյուն...
Այն աղմուկի մեջ կիսավայրենի

Ինձ սիրելի է ամեն մի հնչյուն:
Ես այն սարերումն էի երեխուց...

Թումանյանը չէր կարողանում մոռանալ սարերի հեքիաթային աստղալից գիշերը, երբ սարվորները, իրենց օր-

վա աշխատանքից հոգնած, հավաքվում էին վրանների առաջ և սկսում շվի ածել, երգել, պարել, իսկ մեծերը սարքում էին իրենց չիբուխներն ու սկսում պարզ լեռնական զրույցը՝ համեմած առակներով ու պատկերավոր դարձվածքներով: Պատմություններ էին անում սարերի կյանքից, անցած դեպքերից, իրենց որսորդական արկածներից և կենդանիների կյանքից:

«Է՜... Է՜...Է՜, կրակ էինք անում, շուրջը նստոտում, մինչև կեսգիշեր զրույց անում, հեքիաթ ասում, որը չիբխին Լր զոռ տալիս, որը քնում էր... քեռի Եզեկն էլ շվի էր ածում...» Այսպես էր հիշում ու վերապրում բանաստեղծը սարերում անցկացրած գիշերները: Սարվորները հաճախ մութ գիշերներին ականատես էին լինում զանազան դեպքերի՝ աղջիկ փախցնելուն, գողության «հավարի» վրա տալուն, հարա տալուն և այլն... ու խանգարվում էր սարվորների գիշերվա խաղաղ կյանքը: «Մեկ էլ տեսար մի սարի ուսից տարածվեց մի զիլ, առաձգական ձայն.— Հավար հե՜յ... Այդ գուժավոր ձայնը ձգվելով՝ տարածվում է լեռներում ու հանկարծ երկու կողմերումն էլ բինեքում իրարով նն անցնում...»*

Սարերի հավարի գիշերների նկարագիրը Թումանյանը պատկերել է իր բանաստեղծություններից մեկի մեջ, որը հենց «Սարերում» վերնագիրն է կրում: Բանաստեղծը նկարագրում է սարերում տեսած իր այդ գիշերներից մեկը, անձրևն ու տարափը, հավարն ու աղաղակը:

Մութը իջավ, գետին առավ
Քոշաքարա սարերում,
Գագաթների տեսքը կորավ
Ու խոր թաղվեց խավարում:

Երկինքն ամպած, տխուր ու սև
Լաց է լինում միալար,
Հեռո՜ւ, հեռու լեռան հետև
Խաղում փայլակն անդադար:

...Ամպը գոռաց ու տրաքեց,
Եվ անձրևը սաստկացավ,
Հովիվն— «հե՜յ, հե՜յ...» աղաղակեց,
Շունը թևից վեր կացավ...

Հրացաններն որոտացին,
Ոչխարն եղավ ցան ու ցիր,

* «Գրազը»

Հավարն ընկավ, ողջ զարթնեցին...
Գիշերը մո՞ւթն, ակնակիր...

Լոռու սարերում, մանավանդ գարնանը, կայծակ ու հեղեղ հաճախ են լինում. լեռնային բնության ամենագեղեցիկ ու ամենաշքեղ երևույթներից մեկն է այդ: Ուժեղ էր և խոր Թումանյանի սերը դեպի լեռները, դեպի կայծակն ու հեղեղը, դեպի որոտն ու ճայթյունը և նրա արձագանքը լեռներում ու ձորերում: Նա սիրում էր բնության այդ տարերքը, սիրում էր Լոռու ամպամած լեռները, ազատ սարերի բարձունքները և նրանց ձյունապատ գագաթները:

Լեռներին է դիմում բանաստեղծն իր երգերում, որպես մանուկ օրերի իր դայակի, իր ներշնչման աղբյուրի, որպես, ապաստարանի և հանգրվանի, նվիրական, թանկ ու հարազատ մտերիմի ու ընկերոջ:

Որքան հարազատ ու թանկ են եղել նրա հոգուն այդ վայրերը, նույնչափ սիրելի և մոտ են եղել այդ շրջապատի դեմքերը: Սարերում նա ապրել է իր քեռիների, տատի ու պապի և իր մոր շրջանում՝ միշտ սիրված, գուրգուրված: Նրա խաղընկերն էր գառնարած Նիկալը, որի հետ գառներ է պահել սարերում:

Քեռիները փորձված որսկաններ ու հովիվներ են եղել. հաճախ փոքրիկ Հովհաննեսին իրենց հետ սարերն են տարել ման ածելու. «Նա ինձ տանում էր ման էր ածում գառների մեջ,— գրում է Թումանյանն իր «Ահմադը» պատմվածքում,— հետը հանդից հաղարջի կարմիր ճյուղեր էր բերում ինձ համար, իսկ իրիկունները հանում էր սրինգն ու ածում:

Ու աստղալի, լուսնյակ գիշերները, ահագին խարույկի շուրջը բոլորած, ծափ էին տալի, խնդում էին իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ ես թիթեռի նման թրթռում, պար էի գալի նրանց շրջանի մեջ»:

Քեռիները նրան սարն էին տարել որսի: «Աշակերտ վախտը հենց որ գյուղն էր գալիս միասին գնում էինք որսի,— պատմում էր Մովսես քեռին:— Շատ էր սիրում որսը, թվանքի հետ էլ շատ էր լավ՝ տեղին տվող էր: Էն ա թվանքը առնում էր, հանդերը, սարերը դուրս գալիս»:

Թումանյանը ձորերում Անդրեաս քեռու զրույցն է լսել գայլերի մասին, նրա հետ արջաորսի գնացել, այդ բոլորը

տեսել է, ապրել և հետագայում պատկերել է իր երկերում, ինչպես՝ «Արջառորսը», «Գելը», «Եղջերուն», «Ծունը» և այլն:

Որսի ժամանակ, թափառելով հանդերում ու անտառներում, նա մոտիկից ճանաչել է շրջապատի բոլոր գեղեցիկ վայրերը, պատմական հնությունները: Նա սիրում էր հատկապես Տափակ մերու ամարկուտը և Արփաթալի կաղնկուտը*:

Սիրում էր ավելի սաղարթախիտ, թավ անտառը, անտառի յուրահատուկ բույրը, ծառերի ստվերը, տերևների հովը: Վճիտ ու պարզ աղբյուրների մոտ, խոր ու խորհրդավոր անտառի մեջ սիրում էր լսել թռչունների ձայնը, նրանց տխուր ծկլտոցը, որ մարդու սրտին թախիծ և տխրություն են բերում, ինչպես «սհակ» թռչունի ձայնը Զաղի ձորում:

Հայրենի կուսական անտառներն առանձին շքեղության ու վեհության են հասնում Լոռու բարձր սարերում: Գյուղից մինչև իր մանկության վայրը՝ Մթին Զորը (Ղարանլուղդարա սարը), ճանապարհը ծածկված էր խիտ ու գեղեցիկ անտառներով: Այդ անտառները Թումանյանը նամարում է երկրի գանձը, հարստությունը: Նա միշտ մտահոգված էր նրանց պահպանման գործով: Նա ցավով էր լսում անտառները ոչնչացնելու, ծառերը կտրատելու մասին: Հատուկ սեր ու հետաքրքրություն ուներ դեպի անտառը:

Մեր երկրի պատանիները խնամքով պիտի վերաբերվեն դեպի անտառը, ծառը, պահեն ու պահպանեն նրանց:

Լոռու անտառները շքեղ են գարնանը, մանավանդ աշնանը: Թումանյանին առանձնապես դուր էր գալիս ուշ աշնան անտառը գույնզգույն տերևներով՝ կանաչ, դեղին, կարմիր, ոսկեգույն, և անտառի մեղմ դուրեկան օդը՝ հագեցած կանաչ խոտի ու հողի շնչով: Սիրում էր ուշ աշնան անտառի տերևաթափը, երբ չոր տերևները ոտքի տակ խշշում են և ներդաշնակում ժայռերի միջից խոխոջացող աղբյուրի հետ:

Մանկության օրերը, հայրենի բնության տպավորու-

Կաղնու և հաճարի խիտ ու գեղեցիկ անտառները գյուղից տասնհինգ-քսան կիլոմետր հեռավորության վրա:

թյունները նա մտաբերում էր շատ տարիներ հետո, իր կյանքի վերջին շրջանում, երբ քաղաքական-հասարակական լայն կյանքով զբաղված՝ զուրկ էր իր ծննդավայրը գնալու հնարավորությունից: Բանաստեղծն առանձին կարոտով ու թախիծով էր հիշում, վերապրում սարերի կյանքը, մանկության պայծառ օրերը· այս կարոտը արտացոլվել է «Պատրանք» գեղեցիկ և հուզիչ բանաստեղծության մեջ:

Նա հիշում է իր հարազատներին, իր փոքր եղբորը, որի հետ անց է կացրել իր մանկությունը սարերում, հիշում է իրենց սարի շանը՝ Զալակին, որը մութ ու անավոր գիշերներին վրանների մոտ ոչխարի հոտի թևին* նստած հսկել է հոտը գայլից ու գողից:

Մանկության օրերի այդ հարազատ ու թանկ ձայները մնում են նրա ականջում որպես պատրանք...

Վեր է կացել էն սարում
Մեր Զալակը իր թևից,
Գնում է մութ անտառում,
Քաջ ախպերս ետևից:

Զրնգում են նրանք խոր
Էն անտառում կուսական.
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թվում է, թե կգան...

Զո՜ւր... Վաղուց են, ա՜խ, նրանք
Մեր սարերից գնացել,
Էն գիլ ձեներն է մենակ
Իմ ականջում մնացել...

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՀԵՏ

...Եվ պարզ աչքով ես տեսնում եմ
Հայրենիքս ծաղկավետ,
Այն ճոխ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լացի հետ:
(«Հիշողություն հայրենիքից», 1890 թ.)

Գեղեցիկ ու փարթամ բնության ծոցում ապրող մանուկ Հովհաննեսի օրերը միշտ չէ, որ ուրախ են անցել: Ուրախ և անհոգ օրերին զուգորդել են և խառնվել տխուր տպավո-

* Թև— ոչխարի հանգստի ժամանակ ամեն մի շան նստեցնելու և հսկելու որոշյալ տեղը:

ությունների, ապրումներ: Նա լսել է գյուղացիների տխուր երգն ու հառաչանքը: Տեսել է գյուղացու թշվառ կյանքն ու ծանր աշխատանքը:

Վաղ մանկությունից շփվելով գյուղացիների հետ, նա մոտիկից դիտել է գյուղացիների ծանր ու չարքաշ կյանքը, տեսել է, թե ինչպես գյուղացուն կեղեքում և շահագործում են քյոխվաները, գյուղի վաշխառուներն ու պետական պաշտոնյաները: Այդ տպավորությունների արդյունքն է տասնութ տարեկան հասակում գրված նրա «Գութանի երգը», որի մեջ աշխատավոր ու չքավոր գյուղացու ցավի և կարիքի մրմունջն է լսվում.

Պարտքատերը գանգատ գնաց,
Քյոխվեն կգա, կծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մնաց,
Կբարկանա, կանիծի...

Ութսունական թվականներին Լոռում, ինչպես և մյուս շրջաններում, թեև արդեն վերացել էր ճորտատիրությունը, բայց պատանի բանաստեղծը տեսնելով գյուղացու չարքաշ կյանքը, նրա կեղեքումները տերերի կողմից, նրա հողազուրկ դրությունը, ակամայից գյուղացու դրությունը համեմատում է ճորտի դրության հետ և հետագայում իր ճանապարհորդական նկատողություններում գրում է.

«Այս ժողովուրդը թեև քսանական թվականներին ապրստամբվել, ձեռք էր բարձրացրել ճորտության դեմ, բայց ահագին մեծամասնությամբ այսօր էլ մնում է ակամա ճորտ, շնորհիվ այս գավառում եղած խոշոր կալվածատիրության:

Ամենալավ, բերրի հողերը պատկանում են թավադներին»:

Գյուղացին հողից ու հացից զուրկ՝ վարում է, ցանում թավադների հողը, ծառայում է նրանց, կատարում է աղա հողատերերի հրամաններն ու կամայականությունները և ինքը ապրում զուրկ ու խեղճ:

Նրա միակ ապավենը և ընկերը մնում էր իր գութանը, լծկանը, որին և դիմում է աղի մրմունջներով.

Արի՛, եզը ջան,
Ախպեր ջան արի՛,

Արի՜, ընկեր ջան,
Թառլան ջան, արի՜.
Հո՜րովելա՜...

Խեղճ ու աղքատ գյուղացին «ձեռը պակաս, ուժը հատած», «հազար ու մի ցավի տեր», իր սև օրին ճար անելու համար աշխատում է, իր տխուր հորովելը կանչում, որպեսզի պահի «մերկ ու սոված մի տուն լիքը մանուկներին», որոնց ինչպես ինքն է ասում՝ «կրակն ածես հոտ չի գալ...»

Ահա այդ ժամանակներում է ապրել Թումանյանը, գյուղացու ծանր ու չարքաշ ճորտ դրությունն է տեսել:

Հայրենասեր բանաստեղծը, տեսնելով գյուղացու հեծեծանքը, վիշտը, ինքն էլ տանջվում է նրա հետ: Նրա մեջ բուռն ցանկություն է զարթնում պատմել իր աչքով տեսածը, պատմել այն մասին, թե գյուղացին՝

Ինչպես է ապրում երկրում իմ սիրած,
Եվ պատանեկան վստահ ցնորքով
Նրանց բողոքին լինել ձայնակից.
...Եվ կաղաղակեմ, քանի տեսնում եմ
Քո շեմքի վրա օտարի հետքեր,
Եվ կհառաչեմ, քանի ծխում են
Քո կրծքի վրա նորանոր վերքեր:

Այս ցասկոտ տողերը, որտեղ երևում է բանաստեղծի ատելությունը կեղեքողների և մեծ սերը աշխատավոր ժողովրդի հանդեպ, ըմբոստ բանաստեղծը գրել է իր կյանքի վաղ շրջանում՝ 1890 թվին:

Գյուղացու հեծեծանքով և բողոքով լի ծանր կյանքն է տեսել Թումանյանը, ձայնակցել է նրան և

Սիրել տանջվել նրա ցավերով...

Գյուղում ուր աչք է դարձնում պատանի բանաստեղծը, լսում է միայն թախծալի և ծանր հառաչանք: Գյուղացու հորովելը՝ տխուր ու միալար, հովվի սրինգը՝ վշտոտ և թախծոտ, ծեր այգեպանի զրույցը՝ դառն հեծեծանքով լի... Նա տեսնում է բազմահոգ գյուղացու ճակատի մութ ամպերն ու խոր ակուսները:

Թե երկրագործն է հորովել կանչում,
Թե մայրը որդուն օրորք է ասում,
Թե հովիվն իրան սրինգը հնչում,—
Մի հուսակտուր հառաչք եմ լսում:

Ահա ժողովրդի այս հազարավոր ցավերը հայրենի գեղեցիկ երկրի պատկերը դարձնում են նրան տխուր, բանաստեղծի սիրտը լցնում հառաչանքով ու թախիծով: Իննսունական թվականներին գրված իր մի բանաստեղծության մեջ Թումանյանը ցավով բացականչում է.

Իմ հայրենիքը տխո՜ւր է, տխո՜ւր...
Ուր աչք եմ դարձնում՝ տխուր ավերակ,

Ամեն տեղ միայն, միայն ցավալուր
Հեծության ձայներ, երկչոտ աղաղակ...

Աշխարհից, մարդուց հույսերը կտրած՝
Գանգատվում է նա և ցավից տնքում...

Գյուղացու գանգատը, նրա հեծության ձայնը, հայրենի երկրի տխուր պատկերը բանաստեղծի զգայուն հոգում անջնջելի հետքեր են թողնում, որոնք հետագայում իրենց արտահայտությունն են գտնում նրա գրվածքների, պոեմների մեջ, որոնցից մեկը հենց «Հառաչանք» անունն է կրում: Այստեղ լսում ենք ութսունամյա չարքաշ գյուղացու հառաչանքն ու հուսակտուր հեծեծանքը:

...Էս խոր ձորերում
Էս է չորս քսան տարիս լրացավ,
Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ*,
Պտիտ եմ գալի էս ձորի միջին,
Կոիվս եմ տալի հազար ցավի հետ
Ու չեմ կարենում, չեմ հասնում վերջին...

Գյուղացու տնտեսական, սոցիալական կյանքի պատկերը ներկայացնող այդ պոեմը սկսվում է տխուր նախերգան-

---

* **Տաքիլեթ**— տաք կերակուր:

քով, հեծության երգով: Ծեր այգեպանը ողջ գյուղացիության ծանր դրության արտահայտիչն է. նա չքավոր գյուղացիության տնտեսական և իրավական դրության ընդհանրության պատկերացումն է.

Տկլոր ու սոված էսպես տարին բուն
Քարի-հողի հետ կռիվ ենք տալի...
...Էսքան տանջվելով, քրտինք ենք անում,
Էլ էն սևերեսն, էլ էն սոված ենք...

Բանաստեղծի մանուկ հասակի տխուր տպավորությունների և պատկերների արտահայտությունները տեսնում ենք նաև նրա առաջին պոեմի՝ «Մարոյի» մեջ, որը գրել է տասնութ տարեկան հասակում՝ 1887 թվին: Բանաստեղծի վրա խորն է ազդել գյուղական աղաթի ու տգիտության այդ զոհի՝ Մարոյի տխուր պատմությունը: Պոեմի սկզբում պոետը վշտով ու թախիծով է հիշում իր հերոսուհուն:

Մարո՜, անբա՜խտ, վաղամե՜ռ,
Դու մանկության իմ ընկեր,
Ո՜րքան ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՜լ...

Ահա՛ Նեսոն, բանաստեղծի մանկության շրջանի մի ուրիշ ընկերը: Նեսոն գյուղի ընդունակ երեխաներից է: Նա էլ հին գյուղի չքավորության և տգիտության զոհն է: Նեսոն դուրս է մնում դպրոցից, որովհետև հայրը չի կարողանում վճարել ուսման վարձը՝ տարեկան երեք ռուբլի: Եվ Նեսոն մնում է անուսում, բռնում գողության ճանապարհը:

Իր մանկական հիշողությունից քաղած «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքում Թումանյանն առանձին կարեկցությամբ է խոսում Նեսոյի դժբախտ կյանքի մասին, շեշտելով, որ նրա կյանքի վատ ճանապարհ բռնելը հետևանք էր նյութական անապահով դրության: «...Նեսոն աղքատ է... Նեսոն տգետ է... Նեսոն լցված է գյուղական չարքաշ կյանքի դառնություններով... Նա էլ, եթե ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլիներ, գուցե ինձանից էլ շատ, ավելի լավը...»

Չքավորության մի ուրիշ զոհն էլ տասներկու տարեկան Գիքորն էր, որին հայրը՝ Համբոն, քաղաք է տանում՝ մի

գործի տա, մարդ դարձնի, իրեն նեցուկ ունենա, բայց քաղաքում անխնա շահագործվելով, ծեծվելով Գիքորը հիվանդանում է ու մեռնում...

Մարո, Նեսո, Գիքոր՝ սա Թումանյանի գրվածքների մանուկ օրերի դեմքերը. նրանք բոլորն էլ հեղինակի մանկության շրջանի տպավորությունների հետ են կապված: Բոլորն էլ հին, նահապետական գյուղի տգետ ու չքավոր գյուղի և նրա նախապաշարումների ու ադաթի զոհերն են:

Թումանյանի վրա խոր տպավորություն է թողել և հայ գեղջկուհին իր վշտոտ դեմքով, իր ծանր կենցաղով, իրավազուրկ վիճակով: Եվ նա իր լեգենդներում ու պոեմներում առանձին կարեկցությամբ է պատկերում հայ գեղջկուհուն: Իր երկերում նա պատկերում է նահապետական գյուղի ադաթի ու այդ զոհերի ողբերգական վիճակը՝ Անուշին, Մարոյին և մյուսներին, հայ գեղջկուհուն՝

Աշխարհքը բանտ
Մեջը անբախտ
Ես մի գերի անխնդում...

Նա մութ և հետամնաց գյուղում ապրում է փակված ու լուռ, զուրկ ու ճնշված պայմաններում.

Լռության կապանքն իրեն շրթունքին,
Ու ինքը ամբողջ կեղտի մեջ կորած...

Գյուղում, գյուղացիների շրջանում ապրելով, Թումանյանը մոտիկից տեսնում է ու մասնակից լինում նահապետական գյուղի գեղջկական կյանքին, նրանց նիստ ու կացին, նրանց կենցաղին ու սովորույթներին:

Նա մասնակցում է գյուղի ժողովրդական տոներին, ուխտագնացություններին, բարեկենդանի օրերի խմբական պարերին ու խաղերին: Նա առանձնապես սիրում էր Վարդավառը և Համբարձման տոնը, այդ օրվա ծաղկաքաղը, հարսն ու աղջիկների վիճակ հանելը՝ ջանգյուլումը: Այդ տոները թանկ էին նրա համար որպես ծաղկի ու երգի օրեր, որպես ժողովրդական առողջ և կենսուրախ երգի ցուցադրման օրեր: Նա շատ էր սիրում գյուղի հարսանիքը՝ զուռնա-դհոլով, ուրախ շուրջպարն ու կոխի տեսարանը, որը հետագայում պատկերում է իր երկերում, հատկապես «Անուշ» պոեմում:

ԳՍԵՂԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Գյուղում հայրական տանը Թումանյանը կանոնավոր կրթություն չի ստացել: Այդ ժամանակ գյուղում «ո՛չ ուսումնարան կար, ո՛չ դաս, ո՛չ դաստիարակություն»:

Նրա դպրոցը տունն էր, գյուղական միջավայրն ու լեռնային հարուստ բնությունը. նրա ուսուցիչներն էին՝ հայրը, մայրը, տատերը, գյուղի հեքիաթ պատմող ծերերը, ինքը՝ ժողովուրդը:

Թումանյանն իր նախնական գրաճանաչությունն ստանում է հոր մոտ: Հայրը թեև գյուղի գրագետներից և առաջավոր մարդկանցից էր, բայց քաղաքից կտրված լինելով, գիր-գրականություն քիչ ուներ, եղածն էլ ավելի կրոնական գրքեր էին, ինչպես սաղմոս, ժամագիրք և այլն: Հոր գրքերից առաջինը, որ կարդացել է ու սիրել, եղել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» և Սարգիս եպ. Հասան-Ջալալյանի «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» աշխատությունը: Այդ գրքերի ընթերցանության տպավորության տակ նրա մեջ շատ վաղ հասակում զարգանում է հայրենասիրական զգացում՝ սեր դեպի հարազատ ժողովրդի պատմական անցյալը, որի մեջ խորանալուն նպաստում է պատմական հուշարձաններով ու արձանագրություններով հարուստ Լոռին:

Ութ տարեկան հասակից նա սկսում է գրել-կարդալ սովորել իր հորեղբայր Գրիշկա բիձու նորաբաց դպրոցում: Գրիշկա բիձան գյուղի տիրացուն էր. նա գյուղի երեխաներին հավաքում էր իրենց տան օդայում ու «դպրոց» բացում: Այդ դպրոցում մատիտներն արճիճից էին, թանաքը՝ կակաչ ծաղկից, որ իրենք աշակերտներն էին պատրաստում: Բացի գրել-կարդալուց, մանուկ Օհաննեսը Գրիշկա բիձու մոտ սովորել է նաև երգել: Աշակերտները, օգտվելով իրենց ուսուցչի թույլ և խեղճ բնավորությունից, հաճախ դասերին կատակներ ու չարաճճիություններ էին անում:

Գրիշկա բիձու դպրոցում Օհաննեսը մնում է միայն մի քանի ամիս: Նա այստեղ շատ քիչ բան է ստանում, քանի որ «ուսուցիչն» էլ հազիվ գրաճանաչ մի տիրացու էր:

Այնուհետև մանուկ Հովհաննեսին տալիս են Սահակ վարժապետի դպրոցը, ուր մնում է երկու տարի: Այդ դպրո-

ցը նույնպես առանձին բան չի տալիս նրան: Սահակ վարժապետի դպրոցի պատմությունը Թումանյանը հետևյալ ձևով է նկարագրում իր «Ինքնակենսագրության» մեջ:

«Մի օր մեր դռանը մայրս ճախարակ էր մանում, ես խաղում էի. մին էլ տեսանք, քոշերը հագին, երկար մազերով ու միրուքով, երկաթե գավազանը շրխկացնելով՝ մի օտարական անցավ:

— Հասի՛ր, էդ կլեկչուն կա՛նչիր, ամանները տանք կլեկի,— ասավ մայրս: Խաղս թողեցի, ընկա ուստի հետևից, կանչեցի: Դուրս եկավ, որ կլեկչի չէ, այլ մեր ազգական, փեսա՝ տիրացու Սհակն է: Սկսեցին զրույց անել: Տիրացուն խոսք բաց արավ իր գիտության մասին:

— Տիրա՛ցու ջան, բա ի՞նչ կլինի, մեր գեղումը մնաս երեխանցը կարդացնես,— խնդրեց մայրս:

— Որ դուք համաձայնեք, ինձ պահեք, ես էլ կմնամ, ի՞նչ պետք է ասեմ,— հայտնեց տիրացու Սհակը:

Գյուղումն էլ տրամադրություն կար, և մի քանի օրից հետո տիրացու Սհակը դարձավ Սհակ վարժապետ:

Մի օթախում հավաքվեցինք մի խումբ երեխաներ, տղա ու աղջիկ, շարվեցինք երկար ու բարձր նստարանների վրա, եղավ ուսումնարան, և այստեղից սկսեցի իմ ուսումը:

Մեր Սհակ վարժապետը մեզ կառավարում էր «գավազանավ երկաթյավ»: Իր երկաթե գավազանը, որ հրացանի շամփուրի էր նման, երբեմն ծռում էր երեխաների մեջքին, ականջները «քոքահան» էր անում և մեծ կաղնենի քանոնով «շան լակոտների» կաշին պլոկում: Ես չեմ կարողանում մոռանալ մանկավարժական այդ տեսորը:

Վարժապետի առաջ կանգնած երեխան սխալ էր անում թե չէ՝ սարսափից իրեն կորցնում էր, այլևս անկարելի է լինում նրանից բան հասկանալ, մեկը մյուսից հիմար բաներ էր դուրս տալիս: Այն ժամանակ կարմրատակում, ապառնալի՝ չուխի թևերը ետ ծալելով տեղից կանգնում էր վարժապետը ու բռնում... Քիթ ու պռունկն արյունոտ երեխան գալարվելով բառաչում էր վարժապետի ոտների տակ, զանազան արտահմլիկ աղաչանքներ անելով, իսկ մենք, սփրթնած, թուքներս ցամաքած, նայում էինք ցրտահար ծտերի նման շարված մեր բարձր ու երկար նստարանների

վրա: Զարդված երեխային վերցնում էին մեջտեղից: «Արի՛»,— դուրս էր կանչում վարժապետը հետևյալին...

Մի երեխայի ուսումնարան ղրկելիս հայրը խրատել էր, թե՝ «վարժապետը ինչ-որ կասի, դու էլ էն ասա»: Եկավ:

Վարժապետն ասում է՝ «Ասա՛ այբ»:

Նա էլ կրկնում է՝ «Ասա՛ այբ»:

— Տո՛, շա՛ն զավակ, ես քե՛զ եմ ասում՝ «Ասա՛ այբ»:

— Տո՛, շա՛ն զավակ, ես քե՛զ եմ ասում՝ «Ասա՛ այբ»:

Այս երեխայի բանը հենց սկզբի՛ց վատ գնաց և այնքան ծեծ կերավ, որ մի քանի ժամանակից «ղաչաղ» ընկավ, տանից ու գեղից փախավ, հանդերումն էր մահ գալի: Բայց մեր Սհակ վարժապետի չարությունից չէ՞ր դա: Այդ տեսակ անաստված ծեծ այն ժամանակ ընդունված էր և սովորական բան էր մեր գյուղական ուսումնարաններում: Գյուղացիներից էլ շատ քչերն էին բողոքում:

Այդ ծեծերից ես չկերա, որովհետև վարժապետը քաշվում էր հորից, բայց մանավանդ՝ մորից էր վախենում:

Զմոռանամ, որ Սհակ վարժապետին սիրում էին մեր գյուղում և մինչև օրս հիշում են»:

Ինչպես տեսնում եք, Տեր-Թոդիկյան տիպի դպրոցներից էր Սհակ վարժապետի դպրոցը: Գործադրվում էին նույն «մանկավարժական մեթոդները»՝ ծեծ գավազանով, հայհոյանք, և դրա հետ միասին՝ մտավոր չնչին պաշար: Սհակ վարժապետը սովորեցնում էր գրել-կարդալ: Բոլոր դասագրքերը կրոնական բովանդակություն ունեին:

Թումանյանի դասընկերներից մեկը պատմում էր, թե ինչպես աշակերտները առավոտը վաղ վեր էին կենում, վառարանը վառում, օդեն մաքրում, տաքացնում և հերթով վարժապետի համար մածուն և հաց էին տանում, աղբյուրից ջուր բերում, ամեն մեկն իր տանից վարժապետի համար փայտ էր տանում, իսկ ամռանը գնում էին գյուղի հանդերը վարժապետի համար մոռ ու մոշ կամ փայտ հավաքելու: Այսպես էր պատմում Գաբո բիձեն և թվում էր մեկ-մեկ վարժապետի համար իրենց կատարած ծառայությունները և ավելացնում. «Դասերը պատրաստելու համար ժամանակ չէր մնում մեզ...»:

Ժամանակի պատմական դեպքերից Թումանյանի վրա մեծ տպավորություն է թողել 1877—78 թվականների ռուս-



Դսեղի հանալնապատկերը



Այն տունը, որտեղ ծնվել է Հովհ. Թումանյանը



Թումանյանի սիրած «ծովերը» Դսեղի մոտ

Հին Դսեղցիներ



Հովհ. Թումանյանի գրված առաջին ոտանավորը, որ հետագայում բանաստեղծը գրի է առել հիշողությամբ:



Հին Թիֆլիսը

Խաչատուր Աբովյան

Ծերունց
(Հովսեփ Ծիշմանյան)

Պետրոս Ադամյան



Միքայել Նալբանդյան

տաճկական պատերազմը: Այդ դեպքի տպավորության տակ ինքն էլ սկսել է ոտանավորներ գրել:

Երբ Թումանյանը տասը տարեկան է դառնում, 1879 թվի օգոստոս ամսին հայրը նրան տանում է Էջմիածին, Գևորգյան ճեմարանը գիշերօթիկ տալու, բայց տեսնելով ֆարաջավոր աշակերտների դեղնած դեմքերը և մեկին էլ մեռած, իր տղային ետ է բերում գյուղ:

Այդ մասին Թումանյանն իր ինքնակենսագրության մեջ գրում է հետևյալը. «Մի անգամ, շատ փոքր, Էջմիածին եմ եղել, միտս է միայն հորաքույրս, մեր փեսա Վարդանը, նրանց տունը, նրանց դեղին կավե պարիսպն ու պարտեզը, սև բադրիջանի ու պոմիդորի թփերը և նրանց հոտը, կուռկուռները, Էջմիածնի տաճարի ներսը, փոշոտ ու արևոտ ճամփեն, փշատի ու նռան ծառերը»:

Էջմիածնից Դսեղ վերադառնալուց հետո, հայրը՝ լսելով Զալալօղլու նորաբաց դպրոցի մասին, նույն թվականի աշնանը Հովհաննեսին նրա փոքր եղբոր հետ տանում է Զալալօղլի (այժմ Ստեփանավան) և տալիս է Լոռում հայտնի Տիգրան վարժապետի երկսեռ մեծ և օրինակելի դպրոցը, ուր մնում է երեք տարի:

Թումանյանն իր կենսագրական նյութերի մեջ հետևյալ ձևով է հիշում գյուղից Զալալօղլի գնալու նախընթաց գիշերը. «Զալալօղլի տանելու նախընթաց գիշերը՝ գաթա, թխվածք, ամեն բան պատրաստ էր: Մորս քունը չի տանում: Աղ է աղում երկանքով, լաց է լինում ու խոսում մեզանից իրեն-իրեն՝ մենակ: Ես էլ անքուն տեղիս մեջին լաց եմ լինում:

Ճամփին ձյուն ու քամի. հայրս երկուսիս՝ ինձ ու իմ եղբորը ձիու վրա դրած, իրեն փարաջեն էլ հանած մեզ վրա գցած, ինքը ոտով, ցեխի ու ձյան մեջ գալիս էր ձիու կողքով:

Նրա ապիտակ մեծ մորուքը ձյունախառն քամին ցրիվ էր տալիս, կրծքին խփում, ուսովը տանում:

Էդ գիշեր հասանք Քոլագերան, մի տաք օդա»:

Մյուս օրը առավոտյան Քոլագերանից ձիով ճանապարհվում են Զալալօղլի:

ՋԱԼԱԼՕՂԼԻՈՒՄ

Ջալալօղլին այն ժամանակ Լոռու վարչական-կուլտուրական կենտրոնն էր: Այդտեղ էին գտնվում շրջանի վարչական բոլոր հաստատությունները և զորքը: Ջալալօղլին միաժամանակ համարվում էր զինվորական գյուղաքաղաք: Գտնվելով Թիֆլիս-Ալեքսանդրոպոլ տանող խճուղու վրա՝ այն նաև առևտրական կենտրոն էր: Բնակչության մեծ մասը հայեր էին, որոնք պարապում էին գլխավորապես առևտրով և արհեստներով, իսկ ռուսները՝ գյուղատնտեսությամբ:

Իր կենցաղով, կյանքով և նիստուկացով Ջալալօղլին տարբերվում էր Լոռու մյուս գյուղերից, իսկ երբ 80-ական թվականներին, շնորհիվ Տիգրան Տեր-Դավթյանի ջանքերի, բացվում է երկսեռ երկդասյան դպրոց, ավելի է բարձրանում Ջալալօղլու կուլտուրական նշանակությունը: Այդ դպրոցում առանց խտրության սկսում են սովորել հայ, ռուս, ինչպես նաև հույն մանուկներ:

Դպրոցի տեսուչը ինքը Տեր-Դավթյանն էր՝ ժամանակի կրթված և զարգացած դեմքերից մեկը: Նա Սարգիս եպ. Հասան-Ջալալյանի սանն էր: 1866 թվին ավարտել էր Թեոդոսիայի վարժարանը: Նա Սուրեն Սպանդարյանի հոր՝ Սպանդար Սպանդարյանի դասընկերն էր:

Տիգրան Տեր-Դավթյանը բացի մայրենի լեզվից, լավ գիտեր ռուսերեն, ֆրանսերեն, տաճկերեն և ֆարսերեն: 1868 թվին Սարգիս եպ. Հասան-Ջալալյանի հետ, որպես նրա քարտուղարը, ճանապարհորդում է Կ. Պոլիս, ապա Եգիպտոս, Աթենք: Այդ ճամփորդությունը տևում է մոտ ութ ամիս: Կ. Պոլսում կատարելագործել էր ֆրանսերենը:

Արտասահմանից վերադառնալով Ջալալօղլի, Տիգրան Տեր-Դավթյանը դպրոց է հիմնադրում: Դպրոցն ուներ կանոնավոր ուսուցչական կազմ: Ավանդվում էին հետևյալ առարկաները՝ հայոց լեզու և պատմություն, ռուսաց լեզու, աշխարհագրություն, թվաբանություն, երգեցողություն, ֆրանսերեն, ֆիզիկա և ընդհանուր պատմություն:

Դպրոցի տեսուչը, աշխարհագրության և պատմության դասատուն ինքը՝ Տեր-Դավթյանն էր: Նա դպրոցին կից

ուներ հարուստ գրադարան, որից օգտվում էին դպրոցի աշակերտները:

Դպրոցում աշակերտները հատուկ տարազ ունեին. ձմեռը տղաները հագնում էին մոխրագույն, աղջիկները՝ շագանակագույն հագուստ, սև գոգնոցով, իսկ ամառը բոլոր աշակերտները սպիտակ զգեստ էին հագնում: Ահա այդ դպրոցն է ընդունվում տասը տարեկան Հովհաննեսը: Իր պատմվածքներից մեկում՝ «Իմ ընկեր Նեսոյում», Թումանյանը հետևյալ կերպ է նկարագրում իր դպրոց գնալը. «Մի երկու տարի մեր գյուղի ուսումնարանը կարդալուց ետը, հերս ինձ տարավ մեր կողմերի գյուղաքաղաքը, Էնտեղի ուսումնարանը տվավ: Էս արդեն բոլորովին ուրիշ աշխարհք էր: Տները սպիտակ, կարմիր տանիքով, ժողովուրդը զուգված ու մաքուր, ուսումնարանն էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե մի վարժապետ, ինչպես մեր գյուղումն էր, այլ մի քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ, որ նորություն էր ինձ համար ու զարմանալի, սակայն շատ դուրեկան:

Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին: Քաղաքացի աշակերտի շորեր հագա, գեղեցիկ ու մաքուր»:

Թումանյանի դասընկերուհիներից մեկը՝ Տիգրան Տեր-Դավթյանի մեծ աղջիկը՝ Վերգինե Պապաջանյանը, հետևյալն էր պատմում Թումանյանի՝ Ջալալօղլու դպրոցն ընդունվելու մասին. «Տեր-Թադևոսը հորս լավ բարեկամներից էր. միշտ մեր տանն էր իջնում, և շատ էինք սիրում նրան: Երբ դպրոցը բացվեց, հայրս խորհուրդ տվեց Տեր-Թադևոսին, որ իր տղային բերի տա նոր դպրոցը: Տեր-Թադևոսը գնաց Դսեղ, մի քանի օրից հետո իրեն տղին բեռով-բարձով բերեց Ջալալօղլի: Առաջին երկու-երեք ամիսը Հովհաննեսը մեր տանն էր ապրում, ինչպես ասում են՝ ղարիբության գոտիկը մեր տանը բաց արեց»:

Տեր-Դավթյանի տանը Թումանյանն իրեն լավ էր զգում՝ օգտվում էր տեսչի հարուստ գրադարանից, ապրում էր Տեր-Դավթյանի երեխաների շրջանում, որոնք ունեին հատուկ ժամեր՝ ընթերցանության, խաղերի, զրույցի, երգի և այլն:

Այնուհետև հայրը տղային տալիս է մի կոշկակարի՝ Խուրշուդ Գրիգորյանի տանը բնակվելու: Թումանյանն այն-

տեղ մնում է շատ կարճ ժամանակ, որովհետև ընտանիքը բազմանդամ էր, և երեխաները խանգարում էին դասերը պատրաստելուն:

Այդտեղից փոխադրվում է իր հորաքրոջ՝ Թալալ հոքրի՝ Սաղաթելյանների տունը, որ գտնվում էր Զորագետի ափին, մի շատ գեղատեսիլ տեղ, բարձր ժայռի գլխին:

Հորաքույրը, Թումանյանի դասընկերների պատմելով, շատ բարի, սիրալիր ու հյուրասեր կին էր: Առանձին գուրգուրանք ուներ մանուկների նկատմամբ. նրանց սեր ու մածուն էր տալիս, հեքիաթներ էր պատմում՝ կախարդական աշխարհից, օձերից ու նրանց թագավորներից: Խոսում էր սատանաների մասին, թե ինչպես սրանք զուռնադհոլով խաբում են մարդկանց և տանում հարսանիք: Այդ բոլորը ուժեղ տպավորություն էին անում մանուկ Հովհաննեսի վրա, և նա իր վառ երևակայությամբ լրացնում էր Թալալ նանի հեքիաթները: Հորաքրոջ մոտ կարճ ժամանակ ապրելով՝ Թումանյանը շուտով փոխադրվում է Ասատուր Խանաղյանի տունը, որ գտնվում էր ձորի գլխին և որտեղից գեղեցիկ տեսարան էր բացվում դեպի Լոռու դաշտերն ու լսվում էր գետի վշշոցը: Այդ բնակարանից նա գոհ էր, և այդտեղ է, որ 1881 թ. գրում է իր առաջին մանկական ոտանավորները: Այստեղ նա իրեն լավ է զգացել. գոհ էր իր տանտիրուհուց՝ բարի և հյուրասեր Սալոմեից. այստեղ էլ մնում է մինչև Զալալօղլուց հեռանալը:

Թումանյանը դպրոցի ընդունակ աշակերտներից էր: Նա առանձնապես սիրում էր Տեր-Դավթյանի պատմության դասերը և հափշտակությամբ էր լսում նրա պատմածները Եգիպտոսի, եգիպտական բուրգերի, Նեղոս գետի և դամբարանների մասին: Այդ բոլորը բանաստեղծի վառ երևակայության վրա խոր տպավորություն են թողնում: Փոքրիկ Հովհաննեսն այնքան է ոգևորվում, որ որոշում է գնալ Եգիպտոս՝ իր հետ տանելով նաև դասընկերներին: Այդ ցանկությունը երկար ժամանակ մնաց Հովհաննեսի մեջ:

Թումանյանը թե՛ արտաքին տեսքով, թե՛ բնավորությամբ տարբերվում էր իր ընկերներից: Սրախոս էր, ինքնավստահ, սիրում էր բնությունը, երազանքը...

Իր մանկության ընկերներից մեկը՝ Անուշավան Աբովյանն, առաջին անգամ տեսնելով Թումանյանին դպրոցում,

հեռվից հիանում է նրանով: Իր հուշերում նա գրում է. «Նա իր տարիքից անհամեմատ բարձր ու վայելուչ հասակ ուներ, մշտաժպիտ նշաձև աչքեր, արծվաքիթ և ազնվություն արտահայտող սպիտակ ճակատի վրա թուխ գանգուր խոպոպիկներ: Մի խոսքով՝ մի արտակարգ հմայիչ գեղեցկություն, որ միանգամայն ապշեցրեց ինձ»*:

Նման նկարագիր է տալիս նրան բանաստեղծի դասընկերուհիներից՝ Վարսենիկ Գևորգյանը. «Հնայած իր տարիքին (տասնմեկ տարեկան) Հովհաննեսը բավական բարձրահասակ էր, գունատ դեմքով, սևաթույր մազերով:

Իր առանձնահատուկ և աչքի ընկնող բնավորությամբ միանգամայն տարբերվում էր իր ընկերներից: Նա սրախոս էր, ինքնավստահ, բայց ոչ հանդուգն, կենսունակ էր ու չար, բայց ոչ անկարգ: Նա ոչ շատ մոտենում էր իր ընկերներին, ոչ էլ վիրավորում որևէ մեկին: Սիրում էր բնությունը, գորտերի կոռոցը, սիրում էր ոտանավորներ գրել, բայց շատ ինքնամփոփ էր»:

Երկրորդ դասարանից, 1880—81 թվականներից Թումանյանը սկսում է գրել ինքնուրույն ոտանավորներ: Դասընկերները պատմում են, թե ինչպես նա դասամիջոցին դասարանից դուրս գալով, առանձնանում էր դպրոցի պարտեզի խորքում, նստում էր ծառի տակ և սկսում էր գրել:

Թումանյանը 1881 թվի մարտին գրած իր առաջին սիրային ոտանավորը նվիրում է դասընկերուհիներից մեկին, նրա նկատողության առթիվ, թե իրենով չտարվի՛, այլ իր դասերը սովորի: Ահա այդ ոտանավորը.

Հոգուս հատոր,
Սրտիս կտոր,
Դասիս համար
Դու մի՛ հոգար,
Թե կան դասեր,
Կա նաև սեր,

Եվ ի՞նչ զարմանք,
Իմ աղավնյակ,
Որ կենդանի
Մի պատանի
Սերը արտում
Դաս է սերտում:

1881 թ. մարտ, Ջալալօղլի

Դպրոցի բակը հարուստ է եղել լորենու սաղարթախիտ ծառերով, որոնք առանձին գեղեցկություն են տվել դպրոցի

---

* **Ա.Ն. Աբովյան.** «Հիշողություններ Թումանյանի կյանքից», «Պատկոմ», 1923 թ., էջ 8:

բակին: Ահա այդ լորու ծառերի տակ է, որ գարնանը, Թումանյանը դասամիջոցին գրել է այդ ոտանավորը, այդ ծառերի տակ է, որ նա առանձնացած մտորել է ու երազել...

Ջալալօղլու դպրոցում Թումանյանը գրում է և մի քանի այլ ոտանավորներ, որոնցից մեկը նվիրում է մի հույն քարհատի՝ Սավա վարպետին, որը լավ հեքիաթ պատմող էր: Այդ վարպետը աշխատում էր Ջալալօղլուց դեպի Քոլագերան կայարանը տանող խճուղու վրա և աշխատանքի ժամանակ զոհ է դառնում պայթած ժայռերին:

Ջալալօղլու դպրոցի երկրորդ դասարանում Հովհաննեսը աչքի է ընկնում բանաստեղծական ընդունակություններով: Այդ տարիներին է, որ նա իր դասընկերներին առանձին ոգևորությամբ նկարագրում է մանկության տարիներին Դսեղի շրջակայքում տեսած սարերն ու ձորերը, սրընթաց գետերն ու գարնան հեղեղները, սարվորների, գյուղացիների չարքաշ կյանքը, այն ամենը, ինչ հետագայում, իննսունական թվականներին այնպես անսպառ հորդում է նրա պոեմներում և բանաստեղծություններում:

Այդ շրջանումն է, որ բացի սիրային բանաստեղծություններից, նա գրում է և՛ հայրենասիրական, և՛ երգիծական բանաստեղծություններ: Ուշագրավ են և արտառուչ հայրենասիրական բանաստեղծությունները. օրինակ՝ «Օրորքը» (1882 թ.), «Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ» (1883 թ.) և այլն:

«Օրորքի» տասը քառատողից պատկերավոր է յոթերորդ տունը, որից երևում է, որ բանաստեղծը լավատեղյակ էր իր հայրենիքի ծանր վիճակին և համակված էր հայրենասիրական խոր սիրով ու վշտով.

Մի պատկեր է նա տխուր,
Աչքերն արցունք, ինքը լուռ:
Մի սուր է մեր սրտի մեջ,
Մեզ այրելու հուր անշեջ*...

Տասներեք տարեկան պատանին մոր բերանով օրոր է ասում իր բալիկին, որ քնի և իր ազգի ծանր վիճակը չտեսնի.

* «Երկերի ժողովածու», 1-ին հատոր, էջ 429:

Քնե՛, քնե՛, իմ որդի,
Աչքերդ խուփ, չբանաս,
Որ քո թշվառ հայ ազգի
Դառն ցավերը չտեսնաս...

Այս դպրոցումն է գրել իր առաջին երգիծական բանաստեղծությունը՝ «Հայ վաճառականը» (1883 թ.)· որի մեջ ծաղրում է տեղացի ճարպիկ առևտրականներին, որոնք հազար ու մի ձևով և խորամանկություններով խաբում էին խեղճ գյուղացիներին ու ռուս զինվորներին:

Հայ վաճառական, հայ վաճառական,
Խաբի՛ր ու գրկի՛ր աղքատ եղբորդ,
Հարամ ոռճիկով լից քո գանձարան
Ու միշտ կուշտ պահիր ուռած մեծ փորդ:

Քեզ ի՞նչ փույթ, ասա՛, թե ազգդ խեղճ է,
Շատ հարկավոր է, թե նա չունի հաց,
Քեզ ինչ փույթ, թե եղբայրդ մեղք է,
Միայն քո փորը լինի տկզած..

. . . . . .

Մահից չի փրկի քեզ ժանգոտ փողը,
Մարմինդ կկլանե անգութ սև հողը,
Ամեն բան կանցնի և կանհետանա,
Միայն բարի անունն այստեղ կմնա...

Զալալօղլու դպրոցում նա լավ սովորող աշակերտներից էր, շատ էր կարդում, աշակերտներին երգեր էր սովորեցնում՝ «Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ...» (Ազատն ասված այն օրից», «Մանկության օրեր, երազի նման...» և հեքիաթներ պատմում:

«Պատանի Հովհաննեսը, երբ դասարանից դուրս էր գալիս, առանձնանում էր դպրոցի բակի լորիների տակ ու սկսում էր գրել· մենք էլ հաճախ խանգարում էինք նրան: Նա դեռ մանկուց զգացել է իր բանաստեղծական ձիրքը, միշտ ասում էր՝ ես պետք է պոետ դառնամ, որովհետև սիրում եմ ոտանավորներ գրել:

Աշակերտ ժամանակ նա մի ոտանավոր էր գրել: Չորս տող է մնացել հիշողության մեջ»,— գրում է դասընկերը և մեջ բերում այդ քառատողը.

Սև գոմեշներ, կարմիր եզներ,
Ջահել տղերք, փոքրիկներ,
Մաճդ բռնած ծերունի,
Ի՞նչ ես կովում սև հողի հետ...

Մի ուրիշ ոտանավորի մեջ Թումանյանն արտահայտել է բնության սերը, երգելով Ջորագետը և նրա ձորը: Այդ ոտանավորը մեզ չի հասել:

Դպրոցում, դասերից դուրս, մի խումբ աշակերտներ երեկոները հավաքվում էին տեսչի տանը և նրա երեխաների հետ միասին պարապում էին ընթերցանությամբ: Կարդում էին «Հյուսիսափայլ», «Կռունկ», «Փորձ» և այլ ամսագրերում զանազան թարգմանություններ ու փոքրիկ պատմվածքներ: Նրա դասընկերուհիներից մեկը՝ Վարսենիկ Գևորգյանը, որը տեսչի փոքր աղջիկն էր, հիշում էր և մի առ մի թվում այն ժամանակ կարդացած գրքերը՝ «Երեք հրացանակիրներ», «Զեստերտոնի ժառանգը», «Խավարից դեպի լույս», «Պող և Վերգինե», «Քրիստափոր Կոլումբոսի ճանապարհորդությունը», Ղ. Աղայանի «Երկու քույրը», Բիչեր Սթոուի՝ «Քեռի Թոմասի տնակը», «Թզուկը» և այլն:

Իր ընկերների ասելով՝ աշակերտական խմբի համար չափածո երկերը կարդում էր Թումանյանը: Դեռևս այն ժամանակ նա սիրում էր կարդալ ոտանավորներ, մանավանդ դրամաներ: Նրա սիրած գրքերից էր՝ «Քնար հայկականը», որտեղից նա մեծ սիրով կարդում էր Սայաթ-Նովայի տաղերը, երգիծական և ժողովրդական երգեր:

Այնուհետև սիրում էր կարդալ Միքայել Նալբանդյանի ոտանավորները, նրա կենսագրությունը. նրա երգերից սիրում էր.

Մանկության օրեր, երազի նման
Անցաք, գնացիք, էլ չեք դառնալու...

Սիրում էր Գևորգ Բարխուդարյանի թարգմանած Շիլլերի գործերը, որոնցից հավանում էր հատկապես «Ավազակները» և «Օրլեանի կույսը»: «Հյուսիսափայլից» կարդում էին «Դքսուհի դը Շևրեոզ», «Ֆերիզադեի երգը», «Անգլիական լրտեսուհու հիշատակարանը»:

Ընթերցանության ժամերին երբեմն մասնակից էր լի-

նում և ինքը՝ տեսուչ Տեր-Դավթյանը: Նրա սիրած գիրքն էր Վիկտոր Հյուգոյի «Թշվառները»: Նա ուներ այդ գրքի ֆրանսերեն պատկերազարդ շքեղ հրատարակությունը. կարդում էր հատվածաբար և թարգմանում աշակերտների համար: Այդ գրքի ընթերցումը տևել է երկու-երեք ամիս: Կարդում էր՝ Հոֆմանի «Հավատարմությունը ամեն արգելքի հաղթում է» գիրքը և «Խավարից դեպի լույսը»:

Բացի ընթերցանությունից, աշակերտները շատ էին սիրում հեքիաթներ լսել: Նրանք ազատ ժամերին հավաքվում էին դպրոցի պահակի մոտ, որին քեռի Ակոփ էին ասում, ու լսում էին նրա պատմած հեքիաթները: Քեռի Ակոփը պատմում էր «Գյուլի բաղի», «Արաբի Զանգուի», «Դուդի ղուշի» և ուրիշ հեքիաթներ: Բայց ավելի հետաքրքիր էր պատմում դպրոցի վառարաններ նորոգող՝ գյառգյառեցի ուստա Սիմոնը: Ուստա Սիմոնը շատ գրավիչ և հետաքրքիր պատմում էր «Հազար ու մեկ գիշերվա» հեքիաթներից, որ փոքրիկ ունկնդիրները մեծ սիրով և ուշադրությամբ լսում էին: Ասում են՝ Թումանյանը շարունակ ուստա Սիմոնի հետ էր լինում և սիրում էր նրան:

Թումանյանը Զալալօղլիումն է առաջին անգամ լսել «Քաջ Նազար» հեքիաթը, բայց ոչ ուստա Սիմոնից, այլ մի պոլսեցի բուժակից, որը այդ ձմեռ կարճ ժամանակով հայտնվում է Լոռում և հյուր է մնում դպրոցի տեսչի տանը: Զմռան երկար գիշերներին իր շուրջը հավաքած դպրոցի երեխաներին՝ այդ պոլսեցի բուժակը Աշուղ Ղարիբի խաղերն է ասում, հեքիաթներ ու ծիծաղաշարժ դեպքեր պատմում Քաջ Նազարի արկածներից:

Բացի հեքիաթներից, երեխաները հավաքվում էին, երգեր սովորում ու խմբով երգում: Խումբը ղեկավարում էր Թումանյանը: Երգում էին՝ «Մեր ձագուկը փոսում նստած քնում է», «Ցուրտը փչեց», «Էֆ հեռանաս», հատկապես սիրում էին երգել.

Երբոր բացվին դռներն հուսո,
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ...

Այնուհետև խմբով գնում էին շրջակա ձորերը խաղալու և վազվզելու: Դպրոցական խաղերից տղաները սիրում էին աթուրման, լախտին, վեգը:

Գեղեցիկ է Զալալօղլու հորիզոնը և հարուստ նրա բնությունը: Մի կողմից՝ Դվալի կամ Բզովդալի լեռնաշղթան է, մյուս կողմից՝ Լալվարը, իսկ երրորդ կողմից՝ Ղարախաչի Մթին սարի գեղեցիկ լեռնագոտին՝ ամպոտ գագաթներով: Ամառը չքնաղ է Վարանցովկայի, այժմ Կալինինոյի դաշտավայրը՝ թավշանման կանաչ խոտ, բազմերանգ, բուրումնալի ծաղիկներ, լեռնային թարմ ու կենարար օդ: Շրջակայքում կան գեղեցիկ զբոսավայրեր, ինչպես՝ Գոմերի ձորը, Օռան Լոռին, Արջասարը, Զալալօղլու ձորը, Լոռու բերդը, Տեր Ուհանանց գոմերի ձորը և այլն: Աշակերտները խմբով գնում էին այդ ձորերը զբոսնելու, գետում լողանալու, ձուկ էին բռնում, թրթնջուկ քաղում, լվածաղիկ հավաքում բերում գյուղ:

Բնության սերը, որ զարթնել էր Թումանյանի մեջ Դսեղում, դեռևս մանկուց, այստեղ ավելի է խորանում: Նա հաճախ է հիշում իրենց գյուղն ու սարերը, պատմում իրենց սարի կյանքից ու որսից, սարի եղնիկներից, խիտ ու մթին անտառներից:

Արձակուրդներին Թումանյանը միշտ Զալալօղլուց գնում էր գյուղը՝ Դսեղ: Գնում էր ոտքով. գիշերը մնում էր Կուրթան գյուղում, առավոտը ճանապարհը շարունակում էր դեպի գյուղ: Ամեն արձակուրդի տուն գնալիս՝ իր գրքերն էլ հետն էր տանում, դնելով հաբգայի (բրդից գործած փոքրիկ խուրջին) մեջ:

Զալալօղլու դպրոցը Թումանյանը չի ավարտում: 1883 թվին դպրոցը փակվում է: Թումանյանը վերադառնում է իրենց գյուղը և միառժամանակ մնում այդտեղ:

Իր դասընկերներից մեկն այսպես է հիշում Հովհաննեսի Զալալօղլուց հեռանալը. մի անձրևային օր հոր հետ գնացին Դսեղ: Մենք էլ, մի խումբ ընկերներ, ճանապարհ դրինք մինչև քարի գլուխը և կամրջի մոտ բաժանվելիս խմբով երգեցինք. «Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից...»: Ինքը գնում էր և ասում.

— Ես ձեզ կտանեմ Եգիպտոս...

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(1883—1886)

Հովհ. Թումանյանի հայրը՝ Տեր-Թադևոսը, տասնչորս տարեկան իր տղային՝ պատանի Հովհաննեսին, 1883 թվի օգոստոսին Դսեղից տանում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցը տալու:

Այն ժամանակ Լոռուց Թիֆլիս էին գնում ձիով, ֆուրգոնով կամ ոտքով: Ճանապարհորդությունը օրեր էր տևում...

Նրանք գնում էին ձիով: Տան փոքրիկ երեխաները՝ Հովհաննեսի քույրերն ու եղբայրները, թռչկոտելով ու խաղալով գնում են մինչև Զաղի ձորը, ճանապարհ դնում ու վերադառնում գյուղ: Մայրն իր տղային վերջին հրաժեշտը տալուց հետո, արցունքն աչքերին գնում է հերանց տուն, լաց լինում, մղկտում, թե՝ «Տղիս տարա՜ն...»

Պատանի Հովհաննեսի առաջին ճանապարհորդությունը մեծ տպավորություն է թողել նրա վրա. նա հետագայում հաճախ էր հիշում դրա մանրամասնությունները:

Թումանյանն իր այդ ուղևորության ընդհանուր նկարագիրը տվել է «Գիքորում». «Մի խաղաղ առավոտ էր. մի տխուր առավոտ: Տանեցիք և հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփա դրին...»

Հայր ու որդի Թումանյանները գնում էին Լոռու խիտ ու մթին անտառների միջով, խոր ձորերով, սառն ու վճիտ աղբյուրների մոտով: Գիշերում էին ճանապարհի վրա գտնվող գյուղերում և ապա առավոտը նորից շարունակում ճանապարհը, Լոռու բարձունքներից՝ Լալվարի փեշերից իջնում Բորչալվի դաշտը և երրորդ օրը միայն հասնում Թիֆլիս:

Այդպես էր Լոռուց Թիֆլիս տանող ճանապարհը մինչև երկաթուղի անցկացնելը՝ 1898 թվականը:

Դասընկերների պատմելով, Դսեղից Թիֆլիս տանող ճանապարհը անջնջելի տպավորություն է թողել պատանի բանաստեղծի վրա: Նա ամեն անգամ մեծ հաճույք է ստացել, երբ իր հայրենակից ընկերների հետ, կտրելով այդ ճանապարհը, դպրոցական արձակուրդներին ձիով վերադառնում էր Թիֆլիսից Դսեղ:

Հետագայում էլ նա առանձին կարոտով էր հիշում Լոռու խիտ անտառներն ու գեղեցիկ լեռները:

«Ձորի գլխից երբ ցած էիր նայում, սիրտդ փառավորում էր: Այգիներ, ընկուզենիներ... ի՞նչ ընկուզենիներ կային... ձորը լիքն էր որսով. եղնիկները մտնում էին այգիները՝ արածում: Մի խոսքով կուսական որ ասում են՝ իսկը կուսական բնություն...

Բնությունն ինձ համար ամեն ինչ է: Գուցե մանկության տպավորություններից է, բայց ես ինձ թեթև եմ զգում բնության մեջ, մանավանդ մեր սարերում...»

Այսպիսով, 1883 թ. հեռանալով իր ծննդավայրից, Թումանյանն իր ետևն է թողնում Լոռու շքեղ բնությունը, բնության հետ՝ իր անհոգ մանկությունը, ազատ և ուրախ օրերը, իր հարազատներին և նրանց ջերմ ու սիրառատ միջավայրը:

Տասնչորս տարեկան պատանին ընկնում է նոր ու անծանոթ շրջապատ:

Գյուղում, հայրենի կտուրի տակ անցկացրած անհոգ օրերի տպավորությունները նրան հանգիստ չեն տալիս Թիֆլիսում, նա հիշում է գյուղը, բնությունը, իր ազատ օրերը՝ տխրում է, կարոտում...

* * *

Թիֆլիսում Թումանյանը սկզբում ապրում է Հավլաբար թաղամասում, Քուռ գետի ափին, իր ազգականներից մեկի տանը: Այդ մասին Թումանյանը իր ուշ շրջանի հոդվածներից մեկում գրել է.

«1883 թվականն էր: Ինձ մեր գյուղից Թիֆլիս էին բերել Ներսիսյան դպրոցը տալու:

Պետք է ապրեի մորս կողմից իմ ազգական Բաղդասար քեռու կամ ինչպես մենք էինք ասում՝ Բաղդի քեռու տանը:

Էդ տունը Բաղդի քեռու քենակալի տունն էր, Հավլաբար, Զորաբաշի եկեղեցուց ոչ հեռու...»

Այդ տանը Թումանյանը ապրել է երկու-երեք ամիս: Քաղաքը մեծ տպավորություն է թողնում Թումանյանի վրա:

«1883 թվին, երբ ես առաջին անգամ Թիֆլիս եկա ուսումնարան մտնելու, ինձ թվաց, թե ընկա մի հսկայական հարստաքաղում: Զուռնա, դհոլ, դայիրա, նաղարա,

ծափ-ծիծաղ, պար, երգ, էն էլ ո՛չ թե տներում, այլ դուրսը, դռներին, կտուրներին: Մանավանդ իրիկնապահներին: Կիրակի ու տոն օրերին հո գլուխ էր պետք, որ դիմանա: Զուգված, զարդարված, շրխկում ու զրնգում էր ամբողջ քաղաքը:

Տեսնողը զարմանում էր, թե՝ էս մարդիքը ե՞րբ են աշխատում, որ էսպես շարունակ ուրախանում են ու պար գալիս»*:

«Գիքորի» հետևյալ տողերը նույնպես Թումանյանի առաջին տպավորությունների արտահայտությունն են. «Մրգով լիքը խանութները, դեզերի նման դարսած գույնզգույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կինտոները... էս ամենի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնված ղժվժում էր նրա գլխում»:

Գյուղի ազատ և անհոգ կյանքից հետո ընկնելով Թիֆլիս, պատանի Հովհաննեսը դժվար է տանում քաղաքի կյանքը, այդ անհարազատ միջավայրը, մանավանդ, որ նյութապես էլ նրա դրությունը լավ չէր: Քաղաքը նա անվանում է՝ «անիրավ աշխարհք»:

* * *

Տեր-Թադևոսն սկզբում իր որդուն տալիս է կադետական կորպուս**: Հայրը շատ էր ուզում, որ իր տղան զինվորական դառնա, որովհետև պապը հայտնի զինվորական էր եղել, բայց պատանի Հովհաննեսը՝ չկարողանալով տանել գիշերօթիկի փակ ու ծանր կյանքը, շատ ժամանակ չանցած թողնում է զինվորական դպրոցը:

Տեսնելով, որ պատանի Հովհաննեսը չի դիմանում գիշերօթիկ զինվորական դպրոցի խիստ կարգ ու կանոնին, հայրը նրան ընդունել է տալիս Ներսիսյան դպրոցի երկրորդ դասարանը, որտեղ նա պիտի լրիվ միջնակարգ կրթություն ստանար:

* «Երկու մեծ թիֆլիսեցիներ», 1913 թ. մարտի 14, «Թումանյանը քննադատ», էջ 240:

** Միջնակարգ զինվորական դպրոց ցարական Ռուսաստանում:

Ներսիսյան դպրոցում ուսանում էին գիշերօթիկ (որդեգիր) և երթևեկ աշակերտներ: Գիշերօթիկները, գլխավորապես, գավառացի տղաներն էին լինում, իսկ երթևեկները՝ տեղացիներ, բնիկ թիֆլիսեցիներ, որոնց մեծ մասը քիչ թե շատ ունևոր դասի զավակներ էին: Գիշերօթիկները, չնչին բացառությամբ, թոշակառուներ էին: Թոշակառու գիշերօթիկ աշակերտ ընդունվելու համար անհրաժեշտ էին ազդեցիկ կապեր վարչության կամ հոգաբարձության շրջանում: Գյուղական քահանա Տեր-Թադևոսը նման կապեր կամ ազդեցություն չուներ, ուստի Հովհաննեսը ընդունվում է իբրև երթևեկ աշակերտ: Այդ նշանակում է, որ նա դպրոցից դուրս, քաղաքում մի անկյուն պիտի ունենար ապրելու համար և իր ծախքերն ինքը պիտի հոգար: Տեր-Թադևոսի նյութական դրությունն այդ ժամանակ լավ չի եղել, և նա հնարավորություն չի ունեցել քաղաքում սովորող իր որդու համար քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծել:

Բանաստեղծի՝ Դսեղի դպրոցի դասընկերներից մեկը՝ Գաբրիել բիձեն, որը իր ազգականն էր, Թումանյանի հոր դրության մասին հետևյալն էր ասում. «Տեր-Թադևոսը առաջ լավ չէր ապրում: Երբ Օհաննեսը Թիֆլիս աշակերտ էր, տղին բան չէր կարողանում ուղարկել, որ ապրեր ու սովորեր»:

Ապրելով նեղ պայմաններում, ինքնասեր պատանին մոտիկներից և ընկերներից ծածկել է իր դրությունը: Կյանքի այդ դժվարին ճանապարհին նա չի ընկճվել, այլ ընդհակառակը, իր կարիքավոր և հուսալքված ընկերներին օգնել է, հուսադրել, նեցուկ եղել նրանց:

1883 թ. դեկտեմբերից Թումանյանը փոխադրվում է ուզունլարցի ժամկոչ Ավագ Շեկվարդանյանի տունը, որ գտնվում էր նախկին Վորոնցովի կամուրջի մոտերը, Միքայելյան փողոցի վրա (այժմ Պլեխանովի պողոտա): Ներքնահարկում նեղլիկ ու խոր ընկած մի սենյակ էր դա, ավելի շուտ՝ նկուղ: Ժամկոչ Ավագը չքավոր, բարի ծերունի էր, ծանրաբեռնված մեծ ընտանիքով, բոլորը միասին ապրում էին այդ սենյակում:

Ժամկոչ Ավագի տանը Թումանյանը բանաստեղծություններ է գրել: Դրանից միամիտ ժամկոչը շատ է վախեցել: Նա նկատողություն է արել, կշտամբել նրան, թե ինչու դասերը՝ թողած՝ «Ծունն ու կատվի» ետևից է ընկել:

Այդ տանը Թումանյանը ապրել է մինչև 1886 թ. հունիսը, մինչև դպրոցից հեռանալը, և այդտեղ է, որ գրել է «Ծունն ու կատուն», «Անբախտ վաճառականները» և մի շարք բանաստեղծություններ:

Ընկերների հիշողությամբ՝ Հովհաննեսը աշակերտ ժամանակ բարձրահասակ, նիհար, սև ու խիտ մազերով, բարի ու մեղմ հայացքով պատանի էր. հագին ուներ շագանակագույն բլուզ, որի վրա կապում էր լայն դեղնավուն կաշվե գոտի:

Ծնողներին ուղղված նամակից երևում է, որ նա ձմեռվա վերարկու չի ունեցել. «Ստացա ձեր ուղարկած 10 ռուբլին,— գրում է նա ծնողներին,— պալտո չառա, այլ երկու մանեթ ու մի քանի շահի, որ պարտ էի, Ղերչոնց տղերանցը տվի... Պալտոն ավելորդ եմ համարում, որովհետև այստեղ տաք է, ուսումնարանը տաք է և մեջտեղն էլ մի քանի քայլ, և ուրիշ գնալու տեղ չունեմ»*:

Դասընկերներից մեկը՝ Սիմոն Հովվյանը, իր հուշերում գրում է. «Ես չեմ հիշում, որ Հովհաննեսը ձմեռը վերարկու լիներ հագնելիս կամ կրկնակոշիկներ գործածելիս», իսկ դասընկերներից մի ուրիշը՝ Ան. Աբովյանը, իր հուշերում գրում է. «Տանից-գյուղից նա ամիսներով ոչինչ չէր ստանում և ապրում էր մեծ դժվարությամբ»:

Ժամկոչ Ավագի տանը, նրա բազմանդամ ընտանիքում, երեխաների լաց ու աղմուկի մեջ մի սենյակում, Թումանյանը բնավ հնարավորություն չի ունեցել ինքնամփոփ և լուրջ աշխատանք կատարելու, դրա համար էլ նա երեկոները փախչում էր տնից, գնում դպրոց, իր դասընկերների հետ միասին դասերը պատրաստելու կամ շրջում էր փողոցներում և իր մտքերին անձնատուր լինում:

Դասընկերների վկայությամբ՝ նա շատ ընթերցասեր, զարգացած, կենսուրախ, սրախոս և բոլորի կողմից սիրված

---

* 1885 թիվ, հունվարի 1:

ընկեր է եղել: Սիրով օգնում էր թույլ աշակերտներին, գրքեր կարդում, երգեր սովորեցնում նրանց: «Սիրում էինք Հովհաննեսին, երբ նա գյուղական կյանքից համով-հոտով պատմություններ էր անում, կատակներ անում, նյութ դարձնելով և՛ դասատուներին, և՛ ընկերներին»:

«Մեր ընթերցասեր ընկերներից մեկն էլ պոլսեցի էր, մի որբ տղա, որը ազատ կարդում էր անգլերեն լեզվով Շեքսպիրը, որով տարվեցինք ամենքս էլ, բայց ամենից շատ Հովհաննես Թումանյանը»: Այսպես է գրում իր ընկերներից մեկը՝ Ներսիսյան դպրոցի աշակերտ Տիգրան Վերանյանը: Այստեղից երևում է, որ Թումանյանի սերը դեպի Շեքսպիրը զարթնել է դեռևս աշակերտական տարիներին՝ Ներսիսյան դպրոցում:

Ընթերցասեր պատանի բանաստեղծը իր գրական կյանքի վաղ տարիներին բացի նյութական զրկանքներից, ընթերցման համար գրքեր էլ շատ դժվարությամբ էր ձեռք բերել: Իր հոդվածներից մեկում Թումանյանը գրում է. «Շատերը կհիշեն, թե 80-ական թվականներին ի՞նչքան քիչ էր գիրքը Թիֆլիսում և ի՞նչ դժվարությամբ էր ընթերցանության գիրքը ճարվում՝ թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն: Դժվար էր մանավանդ ինձ նման մի օտարական պատանու համար»:

Թումանյանի այս ընթերցասիրությունը իր դրական ազդեցությունն է արել ընկերների վրա: Ինքը սովորություն է ունեցել գրքեր հավաքել և նույն խորհուրդն է տվել ընկերներին, որոնք աշխատել են հետևել նրան:

Հովհաննես Թումանյանի արխիվում պահպանվել են նրա աշակերտական ընդհանուր երկու տետր, սևագիր: Առաջին տետրի առաջին էջի վրա գրել է իր դասացուցակը. «Դասացուցակ Ներսիսյան դպրանոցի չորրորդ դասարանի: Տփխիս»: Մյուս էջի վրա գրել է. «Ազգ երթայ և ազգ գայ և երկիրս յավիտյան կա»: Ընդհանուր տետրի մեջ գրված են հետևյալ առարկաները. հայոց լեզու՝ քերականություն, հին հայկական ձայնանիշերով մի երգ, ապա՝ ալգեբրա, ռուսերեն և միջին դարերի պատմություն:

Մյուս տետրում կա երեք բաժին՝ մատենագրություն, հոգեբանություն, տրամաբանություն:

* * *

Ներսիսյան դպրոցում երկու տարուց ավելի մնալով, Թումանյանը ձեռք է բերում որոշ զարգացում, հատկապես հումանիտար գիտությունների բնագավառում:

Այս շրջանում Ներսիսյան դպրոցի դասատուներն էին վիպագիր Ծերենցը (Հովսեփ Շիշմանյանը), որը ավանդում էր հայոց պատմություն և ֆրանսերեն, Շիլլերի թարգմանիչ Գևորգ Բարխուդարյանը՝ ռուսաց պատմություն և Ռուսաստանի աշխարհագրություն, բանասեր Կարապետ Կոստանյանը՝ հայոց լեզու, հայտնի թարգմանիչ և մանկավարժ Փիլ. Վարդանյանը՝ ընդհանուր պատմություն, Գր. Վարձելյանը՝ թվաբանություն, Ամիրան Մանդինյանը՝ ընդհանուր աշխարհագրություն, Վարդան Սուլթանյանը՝ ռուսաց լեզու, բառարանագետ Աբիսողոմ Հովհաննիսյանը՝ ֆիզիկա և հանրահաշիվ, Միսակ Ասիլյանը՝ եկեղեցական պատմություն, նկարիչ Շամշինյանը՝ նկարչություն և այլն: Դպրոցի տեսուչն էր Արշակ Նահապետյանը, իսկ վերակացուն՝ այն ժամանակ հայտնի «ապարոն Գրիգորը»՝ Տեր-Հարությունյանը:

Իր ուսուցիչներից Թումանյանն առանձին սեր և համակրանք է տածել դեպի հայոց պատմության դասատուն՝ Ծերենցը: Այդ մասին հետագայում բանաստեղծը հաճախ է հիշում:

«Նա (Ծերենցը, Ն. Թ.) վերին աստիճանի մաքուր ու պայծառ հոգի էր, անսահման սիրելով մեր ազգի պատմությունը, այնտեղից էլ վերցրեց իր վեպերի նյութը»:

Իր անսահման սերը դեպի հայ ժողովրդի անցյալը, Ծերենցը հաղորդել է նաև աշակերտներին: Որպես մարդ և քաղաքացի, որպես հայրենասեր Ծերենցը, ըստ երևույթին, ուժեղ տպավորություն է թողել պատանի բանաստեղծի վրա: Անշուշտ սիրելի ուսուցչի ազդեցությամբ, ոգեշնչված հայ ժողովրդի անցյալով, դեռևս աշակերտական նստարանից բանաստեղծը սիրել է հայոց պատմությունը, հայ ժողովրդի ստեղծած հարուստ կուլտուրան: Դասերից դուրս նա իր գիտելիքները պատմության մասին լրացրել է ընթերցանությամբ, հավանորեն Ծերենցի հանձնարարած գրականությամբ:

Թումանյանի սերն ու հետաքրքրությունը դեպի հայ ժողովրդի պատմությունը, որ զարթնել էր նրա մեջ դեռևս մանկության օրերին՝ պատմական հուշարձաններով հարուստ իր ծննդավայրում, ապա Զալալօղլու դպրոցում սովորելիս՝ պատմության դասատու Տիգրան Տեր-Դավթյանի շնորհիվ, Թիֆլիսում իր սիրելի ուսուցչի և լայն ընթերցանության հետևանքով այդ սերը զարգանում է ու խորանում, այնուհետև հայ ժողովրդի պատմությունը դառնում է բանաստեղծի մշտական հետաքրքրության առարկան, միաձուլվում նրա ողջ ստեղծագործության հետ:

Թե որքան մեծ տպավորություն է թողել Ծերենցը Թումանյանի վրա, այդ երևում է հետագայում վիպասանի գերեզմանի վրա, նրա մահվան 25-ամյակի առթիվ ասված Թումանյանի խոսքից: Ծերենցին բնութագրում է որպես «նոր պատմական վիպագրության հիմնադիր հայ գրականության մեջ»* և մեծ հիացմունքով ավելացնում է. «Զգիտենք նրա ազատասեր ոգո՞ւ վրա հիանանք, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա՞ զարմանանք, նրա հոգու ազնվության ու մաքրության վրա՞ ուրախանանք, թե նրա սրտի քնքշության ու ճաշակի նրբության վրա»**:

Իր կյանքի վերջին օրերին, վերհիշելով իր պատանեկությունը, Թումանյանը մեծ սիրով էր խոսում այդ լավ մարդու, տաղանդավոր վիպագրի ու հայրենասերի մասին:

* * *

Աշակերտական տարիներին, ինչպես ասացինք, Թումանյանը ապրել է Թիֆլիսի արվարձաններում՝ Հավլաբարում, ապա Խարփուխում, որը գտնվում էր քաղաքի ծայրամասում, քարքարոտ ժայռերի վրա: Այդ թաղամասերի բնակիչները պատկանում էին քաղաքի չքավոր դասին և ճնշող մեծամասնությամբ մանր արհեստավորներ էին: Հայերի հետ կողք-կողքի ապրում էին նաև վրացիներ. բոլորը խոսում էին թե՛ հայերեն և թե՛ վրացերեն:

---

* 1913 թիվ, մայիսի 26, «Թումանյանը քննադատ», էջ 259:

** Նույն տեղը:

Այդ շրջապատումն է, որ առաջին անգամ նա դիտում է և ուսումնասիրում Թիֆլիսի արհեստավորների կյանքը, լսում և սովորում նաև վրաց լեզուն:

* * *

Դպրոցում Թումանյանն ունեցել է մտերիմ ընկերների շրջան, հոգեհարազատ ընկերներ, որոնց հետ նա իրեն լավ է զգացել, կարդացել է իր բանաստեղծությունները, նրանց մասնակից դարձրել իր ապրումներին:

Դասընկերների մեծ մասը զանազան գավառներից եկած պատանիներ էին: Նրա ընկերական շրջապատում եղել են ղազախեցիներ, շուշեցիներ, ախալցխացիներ, գանձակեցիներ, զանգեզուրցիներ և այլն: Այսպիսով, Թումանյանը հաղորդակից է լինում Հայաստանի տարբեր գավառների վիճակին, նրանց նիստուկացին և կյանքին: Ամեն մեկն իր հետ բերել էր իր ծննդավայրի լեզուն, սովորությունները, զրույցները...

Ընկերների հետ նա հաճախ զբոսանքի, պտույտի էր դուրս գալիս Թիֆլիսի շրջակայքում, տոն օրերին մասնակցում ուխտագնացություններին, դիտում ժողովրդի նիստուկացը, իր երկերի համար նյութեր ժողովում:

Ընկերներից Ան. Աբովյանը հիշում է իրենց այդ զբոսանքները. «1884—1885 թ. թ. հաճախ գնում էինք Օրթաճալա և կանաչ խոտերին թինկը տալով հա՛մ խոսում էինք, հա՛մ գարեջուր խմում՝ մեզ համալսարանի ուսանողներ երևակայելով»*:

Իր դասընկերներից մեկ ուրիշը այսպես է հիշում Թումանյանին. «Հովհաննես Թումանյանին ես ճանաչում էի դեռ 1885 թ., երբ տասնմեկ տարեկան հասակում Ախալքալակից գալով Թիֆլիս՝ մտա Ներսիսյան դպրոցի առաջին դասարանը:

Այդ ժամանակ Հ. Թումանյանը, որքան հիշում եմ, երկրորդ թե երրորդ դասարանի աշակերտ էր. նա քիչ էր մասնակցում աշակերտական խաղերին, միշտ մտազբաղ, խոհուն, առանձին պատկառանք էր ազդում դիտողի վրա, և

* «Պատկոմ» 1923 թ. № 2, էջ 10:

կարծեք թե նույնիսկ այդ հասակում նրա շարժումների, դեմքի ու հայացքի արտահայտության մեջ նկատվում էր ինչ-որ վեհություն: Ես նրանից փոքր էի, նրա հետ առանձնապես ո՛չ ծանոթ էի, ո՛չ էլ ընկեր, միայն սրանով ուզում եմ ասել, որ մեր սիրելի Թումանյանն ուներ մի առանձին գրավչություն, որով դեռ պատանի հասակից դեպի իրեն էր գրավում ուրիշների ուշադրությունը: Չէ՞ որ կային ուրիշ հարյուրավոր աշակերտներ, բայց նրանցից շատ քչերն են հիշողությանս մեջ մնացել»:

Առաջին անգամ Հովհ. Թումանյանն իր դասընկերների հետ նկարվել է 1885 թվի մայիսին, երբ Ներսիսյան դպրոցի երրորդ դասարանի աշակերտ էր: Նկարվել է դպրոցի բակում: Կենտրոնում իրենց դաստիարակ Գրիգոր Վարձելյանն է, որը միաժամանակ թվաբանության դասատուն էր: Թումանյանի ձախ կողմից կանգնած էր իր մտերիմ ընկերը՝ Շալամյան Դավիթը, իսկ աջ կողմից՝ Հարություն Ճուղուրյանը, հետագայում գյուղագիր:

Ժամանակի դեպքերից Թումանյանի վրա մեծ տպավորություն է արել Ի. Ս. Տուրգենևի մահը, որը տեղի է ունեցել Փարիզում 1883 թվի սեպտեմբերի 3-ին: Այդ մասին Թումանյանը գրում է հետևյալը. «Նոր եկած օրերս էր, ընկերս մի օր այլայլված տուն եկավ ու հայտարարեց, թե Տուրգենևը մեռել է... զգացինք, որ մի մեծ դժբախտություն է պատահել, որ նրա վրա էդքան ազդել է, որովհետև քիչ կպատահեր, որ նա իրեն էդպես կորցներ: Եվ մենք երկու օր դես-դեն ու սրա-նրա մոտ էինք վազում միասին: Լավ չեմ հիշում, թե ինչո՞ւ, բայց վազվզում էինք Տուրգենևի պատճառով»:

Նշանակալից դեր են խաղացել Թումանյանի կյանքում պատմական դեպքերը, վայրերն ու զրույցները:

Այսպես, 1877 թվի ռուս-տաճկական պատերազմի ժամանակ Թումանյանը թեև գյուղական դպրոցի աշակերտ էր (ինը-տասը տարեկան), բայց և այնպես անջնջելի տպավորություններ է ստացել այդ ժամանակվա քաղաքական դեպքերից և դեմքերից: Իր առաջին ոտանավորները նա գրել է հենց այդ պատերազմի հերոսների քաջագործությունների տպավորության տակ: Ինքնակենսագրության մեջ

նա գրում է. «Շատ վաղ եմ սկսել ոտանավոր գրել: Տասը-տասնմեկ տարեկան ժամանակս երգեր էին երգվում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ոտանավորներ՝ երգիծաբանական, հայրենասիրական և սիրային»*:

Աշակերտական տարիներին, ինչպես գյուղում՝ մեծերից, ծերունիներից, այնպես էլ Թիֆլիսում իր դասընկերներից, շատ է լսել ժողովրդական առակներ ու լեգենդներ. լսել է և դեռ այն ժամանակ մի մասը մշակել է ու գրել: Այդ լեգենդներից ու առակներից են՝ «Ծունն ու կատուն» և «Անբախտ վաճառականները», որ լսել է նա իր քեռի Իսայուց ամառը՝ սարերում: Մասնավորապես «Անբախտ վաճառականների» մասին նա գրում է հետևյալը. «...Էդ առակը աշակերտ ժամանակս Լոռում իմ քեռուցս եմ լսել ու տպածների մեջ իմ առաջին գրվածքներից մեկն է...

Մի ժամանակ (1885— 1887) էդ տեսակ բաներ, ժողովրդական առակներ ու լեգենդներ շատ էի գրում բարբառով ու շատ էլ ունեի, բայց որովհետև չէի պահում, դեսդեն կորան, նրանցից մնացին «Ծունն ու կատուն», մեկ էլ «Անբախտ վաճառականները...»

Գրական վաղ տպավորությունները, առաջին կարդացած գրքերն են՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», Միք. Նալբանդյանի հոդվածներն ու երգերը, Ռաֆֆու «Սամվելը», որոնց ընթերցումը խոր հետք է թողնում պատանի բանաստեղծի զգայուն հոգու վրա: Նույն այդ աշակերտական տարիներին ռուս պոետներից կարդում է Պուշկինի ու Լերմոնտովի բանաստեղծությունները և պոեմներից մի քանիսը, ինչպես և Կոլցովի առակները: Բանաստեղծի կինը պատմում է. «1888 թիվն էր, երբ ամուսնացանք, Հովհաննեսը մի կապոց ուներ: Այդ կապոցում երեք-չորս գիրք կար՝ Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը», Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» և Լերմոնտովի «Երկերի ժողովածուն»:

Իսկ ժամանակակիցները գրում են. «Ներսիսյան դպրոցի աշակերտները բոլորն էլ «Հյուսիսափայլին» էին համա-

---

* «Ինքնակենսագրություն», 1905 թ.:

կրում և սրտատրոփ ապասում էին Կոմս Էմմանուելի գրվածքներին»:

«Զմեռվա եղանակներին հավաքվում էինք Բուդդանյանի մոտ, առավելապես նրա գրքերից օգտվելու նպատակով: Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» երկուսս էլ թեպետ վաղուց կարդացել էինք, բայց ցանկանում էինք նորից կարդալ ու չէր ճարվում: Հովհաննեսի հայրն ուներ նամակ գրեց, ուղարկեցին, նորից կարդացինք»:

«Վերք Հայաստանին» լինելով դպրոցական տարիներով սիրված և մի քանի անգամ ընթերցված գրքերից մեկը ուժեղ ազդեցություն է թողնում բանաստեղծի վառ երևակայության վրա, նրա մեջ զարգացնելով հայրենասիրական ջերմ զգացմունքներ:

Այսպիսով, իր կյանքի դեռևս վաղ շրջանում Թումանյանն իր վրա կրում է մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի և հեղափոխական դեմոկրատ Միք. Նալբանդյանի ազդեցությունը: Մեծ էր վերջինիս հմայքը Թումանյանի համար: Մի քայլել Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» մասին գրած հոդվածում նա ասում է. «Շատ սիրեցի էդ բաց կապույտ, շողարձակ տետրակները և պատանեկական ոգևորությամբ կարդում էի: Առանձնապես դուր էին եկել Կոմս Էմմանուելի «Հիշատակարանն» ու մյուս գրվածքները»: Նա առանձին սիրով ու երախտագիտությամբ է հեռագայում վերհիշում «էն օրերը, երբ հափշտակված կարդում էի նրա գրվածքները...»

Ներսիսյան դպրոցի երրորդ-չորրորդ դասարանի աշակերտները հետևել են ժամանակի մամուլին, ծանոթ են եղել գրական պայքարին ու ելույթներին: «Հյուսիսափայլից» զատ նրանք կարդացել են «Նոր դար», «Մշակ» թերթերը: Այդ տարիներին է, որ պատանի բանաստեղծն ակտիվ է գրում երգեր, լեգենդներ, պոեմներ:

Ներսիսյան դպրոցում սովորելու սկզբնական շրջանում Թումանյանի մտավոր հորիզոնը, ընդհանուր զարգացումը եղել է սահմանափակ և առավելապես ազգային բնույթ կրել: Այդ է ասում ինքը՝ բանաստեղծը, երբ համեմատում իր և իր ընկերներից մեկի մտավոր զարգացումը. «...Նա ռեալական դպրոցումն էր սովորում, ես՝ Ներսիսյան: Մենք հաճախ իրար դեմ էինք բերում՝ ես հայկականը, նա օտա-

ը՝ գլխավորապես ռուսակաանը՝ է՛լ գրականություն, է՛լ պատմություն, է՛լ հերոսներ, է՛լ ժողովուրդ, ես Վարդան Մամիկոնյան էի մեջ բերում, նա դիմացը հանում էր Աքիլեսին, նա Իլյա Մուրոմեցին էր առաջ քաշում, ես դուրս էի բերում Հայկին (էն ժամանակ Դավիթը հայտնի չէր մեր գրականության մեջ)։

Հիշում եմ, թե ինչքա՜ն երկար ժամանակ և ի՜նչ տաք պատերազմ ունեցանք Տիգրան Մեծի և Պոմպեոսի շուրջը։

...Նա շատ էր ծաղրում իմ ազգասիրությունը... Եվ մի քանի տարուց հետո մեր վեճերը շատ էին փոխվել։ Քանի ես հակվում էի դեպի օտար գրականությունն ու ցրվում էի հեռուները, նա ուժեղ թափով կենտրոնանում էր հայության վրա»։

Այդ ընկերը, որի հետ 1883 թվին բանաստեղծն ապրում էր մի տանիքակում, լավ գիտեր ռուս գրականությունը, ռուս գրողներից սիրում էր Տուրգենևին և Գոգոլին, «սիրում էր առանձնապես Գոգոլին, անգիր գիտեր «Տարաս «Բուլբան»։ Շարունակ կարդում էր, գիշերները ուղղակի լուսացնում էր ընթերցանության վրա։ Շատ է պատահել, որ մեր բարի Եփեմիա ձալոն, նրա հորեղբոր կինը, առավոտները կանչել է մեզ, որ գնանք տեսնենք, թե ինչպես է ընկերս սեղանի առջև նստած քնել գլուխը դրած Գոգոլի բաց գրքի վրա...»։

Թերևս այդ ընկերոջ ազդեցության տակ նա սկսում է ռուսերեն կարդալ Տուրգենևի, Գոգոլի, ռուս մյուս կլասիկների գրվածքները։ Թումանյանի մտահորիզոնի լայնացմանը և գրական ճաշակի զարգացմանը նպաստում է նաև ռուս բանաստեղծների՝ Կոլցովի, Պուշկինի, Լերմոնտովի երկերի ընթերցանությունն ու անգիր անելը դպրոցում։ Բանաստեղծը գրում է. «Պատանեկան հասակում, ուսումնարանում սովորած Կոլցովի առակների ազդեցության տակ ես ոտանավորով գրել էի մի շարք առակներ մեր կովկասյան առակներից։ Դրանցից ոչ մեկը չի տպվել և չկա այժմ»։

Մեծ նշանակություն են ունենում և ազդեցություն թողնում Թումանյանի գրական ճաշակի, մտավոր զարգացման և ստեղծագործական հղացումների վրա ռուս մեծ պոետներից հատկապես Պուշկինը և Լերմոնտովը, որոնց երկերը նա

կարդում է դպրոցում և դպրոցից դուրս: Այդ և իր սիրած գործերի մասին նա հիշատակումներ է անում հետագայում, 900-ական թվականներին, գրական դեմքերին գրած նամակներում:

«... Դեռ դպրոցում սովորած, թե դպրոցից դուրս կարդացած ռուս բանաստեղծների գործերը ինձ այնքան հարազատ ու սիրելի են, օրինակ Պուշկինի «Буря мглою небо кроет», «Полтава», «Цыганы», *կամ Լերմոնտովի* «Демон», «Ангел», «Ветка Палестины», «Песнь о царе Иване Васильевиче», «Три пальмы», «Мцыри», «Тучки небесные, вечные странники», «Спор», «Выхожу один я на дорогу», «Пророк», «И скучно и грустно»

Ինչպես ռուս մեծ պոետները, այնպես էլ առհասարակ ռուս հարուստ գրականությունը Թումանյանի համար դեռևս պատանեկությունից ոգեշնչման անսպառ աղբյուր են եղել: Նա մեծ ցանկություն է ունեցել գնալ Ռուսաստանի մեծ քաղաքները՝ շարունակելու իր ուսումը, մոտիկից ծանոթանալու ռուս գրականությանն ու կուլտուրային:

Աշակերտ ժամանակ Թումանյանը եղել է և Ռաֆֆու մոտ, «Սամվել» վեպի վրա աշխատելու շրջանում: Այդ մասին բանաստեղծն այսպես է հիշատակում իր մի հոդվածում. «Հենց էդ օրերը, դեռ աշակերտ, եղա Ռաֆֆու մոտ երբ առաջին փոած «Սամվելն» էր գրում ու սրբագրում: Մի քիչ հետո եղա նաև Արծրունու խմբագրատանը, մի երկու անեկդոտանման բան էլ տվի թերթի համար»: Իր իսկ տված նյութերից երևում է, որ Թումանյանն էլ, ինչպես առհասարակ գրողներից շատերը, առաջին անգամ գրել սկսել է թերթերին թղթակցելով:

* * *

Թումանյանը սովորություն է ունեցել իր նոր գրվածքները կարդալ ընկերների շրջանում:

«Շատ հաճախ, մանավանդ շաբաթ երեկոները, մեր ընկեր և իմ հայրենակից Մելքոն Ասլիբեկյանի մոտ երկար ժամեր մեծ գոհունակությամբ լսում էինք նրա պատմվածքները, նրա գրվածքները: Առհասարակ հրապուրիչ էր նրա խոսքը»,— գրում է իր ժամանակակից Բագրատ Թումանյանը:

Իսկ իր դասընկերներից մեկ ուրիշն իր հուշերում գրում է. «Դասերից հետո ընկերներով հավաքվում էինք Ալեքսանդրյան այգում, նա իրեն գրպանից թերթի կտորներ էր հանում, բանաստեղծություններ կարդում, 1885—86 թ. թ. Հովհաննեսի բանաստեղծությունների մեծ մասը ամբողջացած չէր ու տեղ-տեղ ընդարձակ լուսանցքներ էին թողնված հետագայում լրացնելու նպատակով»:

Ան. Աբովյանի վկայությամբ Թումանյանն առաջին անգամ գրական ասպարեզ է մտել «Նոր դար» օրաթերթում, մի նամակ տպելով Դսեղ գյուղի ընդհանուր նկարագրության և գյուղացիների նիստուկացի մասին: Այնուհետև լոռեցիների կյանքից մի շարք նյութեր է տալիս «Նոր դարին»:

Ինչպես ասացինք, 1886 թվին, դեռևս աշակերտ, Թումանյանը գրում է «Ծունն ու կատուն» և «Անբախտ վաճառականները»:

Դասընկեր Հ. Ճուղուրյանը պատմում է. «Երրորդ թե չորրորդ դասարանի աշակերտներ էինք: Էն ժամանակ՝ 1885—86 թ. թ. Հովհաննեսը Եգորովի տանն էր ապրում՝ Նորաշենի փողոցի վրա: Մի քանի հոգի էինք՝ ես էի, Մելքոն Ասլիբեկյանն էր, Դավիթ Ճալամյանը... Առաջին անգամ կարդաց «Ծունն ու կատուն» և Զոփուրանց տղերանց սնագիր պոեմը՝ Լոռու ավազակների մասին: Շատ էր ոգևորված այդ նյութով. մեծ տրամադրությամբ էր խոսում և լավ էլ գրել էր: Նրան ոգևորում էր այդ ավազակների իգիթությունը, ազնվությունը, ասպետությունը, ճարպկությունը: Ութը եղբայր են եղել. մինը՝ Սոլոմանն էր. կառավարությունը խիստ հետապնդել է՝ բռնել և աքսորել: Մյուսները տարիներ շարունակ Լոռվա սարերում թաքնվել են, փախել: Նրանք որքան խիստ էին ու անգութ դեպի ունևորներն ու կալվածատերերը, էնքան մեղմ էին ու կարեկից դեպի չունևորներն ու աղքատ գյուղացիները: Հարուստներին թալանում էին, խլում, տանում տալիս աղքատներին:

Ժամանակի դեպքերից Թումանյանի վրա շատ խոր է ազդել և տպավորվել 1885 թվին, Ալեքսանդր 3-րդ ցարի ժամանակ հայկական ծխական դպրոցների փակումը: Ասում են՝ պատանի բանաստեղծի բարկությունն ու վիշտը չափ ու սահման չուներ: Զայրույթով էր լցված միապետու-

թյան դեմ: Հ. Ծուղուրյանը հիշում է, որ 1885 թ. Թումանյանը մի բանաստեղծություն է գրել դպրոցները փակելու առթիվ և իր այդ ոտանավորի մեջ ցարին անվանել է՝ «գազան»:

Հետաքրքրական է և բնորոշ ապագա բանաստեղծի համար Հայաստանին նվիրված 1884 թ. անավարտ սևագիր բանաստեղծություններից մեկը, որը գրել է երկրորդ դասարանում.

Ինչո՞ւ ես տխուր,
Թշվառ Հայաստան,
Է՞ր է վիզդ ծուռ,
Մայր իմ սիրական:
. . . . . .
Ինչո՞ւ աչերդ
Լի են արտասուք,
Է՞ր ես խեղճ նայում
Դեպի Արևմուտք:

Դուն ես լավ գիտես,
Որ Արևմուտքեն
Օգուտ չկա քեզ,
Զատ անբույժ վերքեն...

Այսօր էլ թարմ են հնչում սկսնակ բանաստեղծի երգի այս տողերը, որ նա իր Հայրենիքի փրկությունը Արևմուտքից չի սպասում, որ Արևմուտքը միայն «անբույժ վերք» է բերում:

* * *

Իննսունական թվականներին Ներսիսյան դպրոցի խիստ ռեժիմը աշակերտներին արգելում էր թատրոն հաճախելը, բայց նրանք գաղտնի էին ներկայացումներ դիտում: Աշակերտությունն առանձնապես ոգևորված էր Պետրոս Ադամյանի խաղով:

«Այդ ժամանակ մեծ հռչակ էր ստացել դերասան Ադամյանը,— հիշում է Սիմեոն Հովվյանը,— հենց որ ձեռքերս մի քանի կոպեկ էր ընկնում, վազում էինք թատրոն: Թումանյանն առաջիններից մեկն էր լինում»:

Ինչպես պատանի Լերմոնտովը դրամատուրգիական փորձեր արել է թատրոն հաճախելուց և Մոչալովի խաղը

տեսնելուց հետո, այնպես էլ Թումանյանը պատանի հասակում ոգևորվել է Պետրոս Ադամյանի խաղով և պիեսներ գրելու փորձեր արել:

Թումանյանն առաջին անգամ թատրոն է գնացել իր ուսուցիչ Տիգրան Տեր-Դավթյանի հետ, որի մասին խոսում է Պետրոս Ադամյանի մահվան առթիվ գրված իր հոդվածում:

«Ահա էս ժամանակ,— գրում է Թումանյանը,— Ադամյանի թունդ ժամանակը, Լոռուց Թիֆլիս եկավ իմ հին ուսուցիչը՝ Տիգրան Տեր-Դավթյանը, որին պարտական են իմ հասակակից գրեթե բոլոր լոռեցիները, և իր նախկին աշակերտներից մի քանիսին հավաքեց, թե եկեք ձեզ տանեմ «Համլետի» ներկայացմանը, Ադամյանին տեսնեք Համլետի դերում: Տարավ: Տեսանք: Էդ գիշերը ինձ համար եղավ մի կախարդական գիշեր և գրեթե վճռական նշանակություն ունեցավ իմ ամբողջ գրական կյանքում: Էդ գիշեր ես էնքան սիրեցի Համլետը և հետո էլ Շեքսպիրը, որ մի քանի դրամա գրեցի ու միշտ ոչնչացրի, որովհետև... Շեքսպիրի գործերի նման չէին դուրս եկել: Սակայն էնքան ուժեղ էր կախարդանքը, որ մինչև օրս էլ ես ինձ ավելի դրամատուրգ եմ համարում, քան ուրիշ մի բան»:

«Էն գիշերից հետո, ես գաղտնի ճանապարհով դարձյալ ընկա Ադամյանի ներկայացումներին, մինչև անգամ մի գիշեր էլ խաղացի նրա հետ: Էդ խաղը, որ բոլորովին անակնկալ մի սկանդալ դուրս եկավ ու խեղճ Ադամյանին գրեթե սպանեց բեմի վրա, հենց էդ խաղն էլ պատճառ եղավ, որ ես ծանոթացա նրա հետ: Էդ էլ էսպես եղավ: Պոլիսից Թիֆլիս էր եկել ժամանակին հայտնի դերասան Կյուրեղյանը և, եթե չեմ սխալվում, տիկ. Հրաչյայի հետ «Վարդան Մամիկոնյան» էին խաղալու: Ահա այդ խաղի մեջ Ադամյանն էլ վերցրել էր Եղիշեի դերը: Վարդան Մամիկոնյա՜ն... Եղիշե՜... Ադամյա՜ն... Ես էլ Ներսիսյան դպրոցի աշակերտ,— վճռեցի՝ տեսնել, ինչ ուզում է լինի, թեկուզ դպրոցից դուրս անեն: Մի բարի հոգի ինձ սովորեցրեց, թե էնպես մի կարճ ու ապահով ճանապարհ կա, որ համ Ադամյանին կտեսնեմ, համ Վարդան Մամիկոնյանին, դեռ նրանց հետ էլ կխաղամ ու քեզ էլ դպրոցից դուրս չեն անիլ:

— Ի՞նչպես:

— Թե՝ ներկայացումից առաջ կգնաս բեմի ետևը, կհայտնես, որ ուզում ես զինվոր խաղալ, կընդունեն, շորերդ կփոխեն, բեղեր կշինեն, ու կլինես բեմի վրա. էլ ո՛չ կճանաչեն, ո՛չ դուրս կանեն:

Փոխանակ մի ժամ առաջ գնալու, ես մի քանի ժամ առաջ գնացի, մինչև իրիկնապահ սպասեցի: Իրար ետևից եկան, հարցուփորձ արին, վերջապես ինձ ընդունեցին հայոց զինվոր: Շորերս փոխեցին, տրիկո հագցրին, գույնզգույն լանջապանակ հագցրին, մի ոսկեզօծ կարտոնե սաղավարտ կոխեցին գլուխս, մի փայտե սուր կախ արին կողքիցս, սուր ծերը արծաթի գույն թղթով պատած, մի նիզակ էլ ձեռս տվին, և արդեն կազմ ու պատրաստ էի մեծ պատերազմի համար:

Էսպես կերպարանափոխված ու զինավառ՝ որ հայելու մեջ ինքս էլ ինձ տեսա՝ լցվեցի գործի լրջության գիտակցությամբ: Ռուս զինվորներ էին բերել, նրանց հետ տարան մի երկու անգամ էլ բեմի վրա պտտեցրին, փորձ արինք, թե որ կողմից պետք է մտնեինք, ինչ անեինք ու ինչ ասեինք՝ և ընդամենը ասելիքներս մի քանի բացականչություններ էին— «Կեցցե՛ Վարդան», «Կեցցե՛ զորավար» և սրա նման բաներ, նրանից հետո մեռել պիտի խաղայինք, իբրև պատերազմի դաշտում Ավարայրի դաշտում սպանված հայ զինվորներ: Ահա հենց այդ սպանված զինվորների դերն էր, որ ես չկարողացա կատարեմ ու դուրս եկավ սկանդալ: Վերջին գործողությանը, վարագույրը բանալուց առաջ, մեզ տարան պառկեցրին զանազան տեղեր՝ թե՛ դաշտում, թե՛ լեռնալանջերին, իբրև սպանված ու թափված զինվորներ: Ես ընկա մի լեռնալանջ: Բանն էն է, որ էդ լեռնալանջ ասածդ կտավի վրա նկարած լեռներ ու ժայռեր են, ետևից տեղ-տեղ արանք-արանք տախտակներով շինած: Էդ տախտակների վրա պառկեցինք՝ իբրև լեռնալանջերին: Ես էլ, ինչքան կարող էի, պատմական մեծ ողբերգությանը վայել մի դիրք ընդունեցի, սաղավարտս ու նիզակս էլ մի կողքիս ընկած, տախտակի լենքով մին պառկեցի, բայց էնպես պառկեցի, որ կարողանամ ներքև՝ դաշտին նայեմ, ուր մի սևացած արկղի վրա, իբրև ժայռի վրա գալարվելով ու «ա՛խ, Հայաստան, Հայաստան...» մրմնջալով, մեռնում էր Վարդան Մամիկոնյան

յանը— Կյուրեղյանը: Նրա մոտ պիտի գային և Վասակի կինը՝ տիկին Հրաչյան, և վերջապես Եղիշեն՝ Ադամյանը ծեր Ծառուկի հետ:

Վարագույրը բացվեց, առաջին անգամ էի բեմից հասարակություն տեսնում. անհամար գլուխներ ու աչքեր, բոլորը հառած դեպի մեզ: Բեմի վրա կես մութ, լուսնյակ գիշեր և խորհրդավոր լռություն, միայն Վարդանն է, որ ոլոր-մոլոր է գալիս ու ցնվալի մրմնջում.— «Ա՜խ Հայաստան, Հայաստան...»

Ահա եկավ Սաթենիկը, մի բաժակ գինի ձեռին, որ Վարդանի համար է բերում Հայաստանից:

Ոտներս ինձ քաշեցի, սրան ճանապարհ տվի: Գնաց ներքև, սկսվեցին նրանց փոխադարձ ողջագուրանքները, գուրգուրանքներն ու սրբազան ուխտերը...

Մին էլ հանկարծ թատրոնը թնդաց ծափերից, գլխիս վրա հայտնվեց Եղիշեն— Ադամյանը ծեր Ծառուկին հենված:

— Ծո՛, ճանապարհ տուր...

Ոտներս դարձյալ ինձ քաշեցի, սա էլ անցավ:

— Վարդա՜ն, իմ Վարդա՜ն...— մրմնջալով Ավարայրի դաշտն իջավ: Հենց դաշտն իջավ թե չէ, որ պիտի խաղա— ս՜ըս՜... հասարակությունը ամեն կողմից ս՜ըս՜ արավ ու լռեց, պատրաստվեց: Էդ ժամանակ ես էլ ուզեցի պատրաստվեմ, որ լավ լսեմ ու տեսնեմ. վիզս որ ծռեցի, թեքեցի դեպի ներքև, անկանոն դիրքի պատճառով թուքս կատիկս թռավ թե ինչ՝ հանկարծ մի հազ բռնեց ինձ: Ես ցնցվում եմ ամբողջ մարմնով, ինձ հետ շարժվում ու ճոճվում է ամբողջ դեկորացիան, բոլոր տախտակներն ու կտավները— այսինքն բոլոր սարերն ու ժայռերը, և հակառակի նման էն ամենահանդիսավոր րոպեին, թատրոնի խորին լռության մեջ: Թատրոնում ընդհանուր ծիծաղ բարձրացավ, գալերեան սկսեց աղմկել ու աղաղակել—բրա՜վո՜... բի՜ս, կեցցե՜ն հայոց քաջերը.. .և այլն, և այլն:

Խեղճ Ադամյանը մնացել էր քարացած, մեջտեղը կանգնած: Վերջապես հազս դադարեց, ժողովուրդը հանգըստացավ, նորից ս՜ըս՜, նորից լռություն: Ադամյանը մի փոքր էլ սպասեց ու խաղաց: Գործողությունը վերջացավ: Վարագույրն իջավ թե չէ՝ ժողովուրդն սկսեց դղրդալի ծա-

փահարությունների Ադամյանին կանչել, իսկ Ադամյանը տեղից թռավ դեպի մեռելները՝ կատաղած գոռալով.

— Ան ո՞վ էր, ծո՜...— բայց ժամանակ չկա, էնտեղ կանչում են, վարագույրը բարձրացնում են: Գնաց: Էս խառնակ դրությունից օգտվելով փախա, զինվորական համազգեստս հանեցի ու փախա դեպի պարտերը: Ճանապարհին, դեպի բեմի ետևը եկողները հարցնում էին, թե էն ո՞վ էր, որ էնպես հազում էր ու աչքերն էլ բաց ներքև նայում: Ես մտածեցի, որ էս աչքերի բացն էլ քանի չեն իմացել, շուտով թողնեմ բեմական ասպարեզը, գնամ տուն:

Մյուս օրն էր, թե մեկ երկու օրից հետո, պատմեցին, թե այժմ Ադամյանն էլ բարկացած չէ, ծիծաղելով է պատմում Լդ դեպքը և հարցնում է, ուզում է ինձ տեսնի: Ես գնացի, զարմանալի սիրով ու քաղաքավարությամբ ընդունեց, մանավանդ երբ իմացավ Ներսիսյան դպրոցի աշակերտ եմ և ինչ պատճառով էի գնացել, իրեն գրքերից մինն էլ նվիրեց ի հիշատակ իմ կարճատև, բայց աղմկալի բեմական գործունեության: Նրանից հետո մի քանի անգամ եղա մոտը:

Ինձ թվաց մի շատ քաղաքավարի ու քնքուշ, բայց հիվանդ մարդ, և, չգիտեմ ինչու, մենակ մարդ: Գուցե էն էր պատճառը, որ հյուրանոցում էր ապրում, չգիտեմ, բայց մենակ մարդ...»*:

Թումանյանն իր այդ հուշերում գրում է, թե զինվորի դերը անհաջող խաղալուց հետո բեմական ասպարեզը թողի, բայց ինչպես երևում է նրա կենսագրական փաստերից, 90-ական թվականներին իր ընկեր գրողների հետ միասին, որպես սիրող, մասնակցել է զանազան ներկայացումների: Ինչպես օրինակ՝ 1894 թվին Ղ. Աղայանի, Ծիրվանզադեի հետ մասնակցել է «Ուրիել Ակոստայի» բեմադրությանը, որի մասին ժամանակին գրվել է մամուլում:

* * *

1885—86 թվերին դպրոցը Թումանյանին այլևս չի բավարարում, նա մտածում է դպրոցը թողնելու մասին:

---

* «Ադամյանի օրերից», 1916 թ. հունիսի 3, «Թումանյանը քննադատ», էջ 367—371:

«Եվ շատ կարդալուց էր գուցե, որ նրա ճաշակը էնքան զարգացավ, որ նա էլ չէր հավանում դպրոցն ու այնտեղի դասավանդությունը,— գրում է Ան. Աբովյանը,— այնպես որ շարունակ ձգտում էր դպրոցից դուրս գալ, պատրաստվել և գնալ ուրիշ տեղ բարձրագույն ուսում ստանալու:

Դպրոցից դուրս գալուց հետո նա սկսեց հաճախել քաղաքային գրադարան-ընթերցարանը և գրքեր կարդալով պարապել»*:

Դպրոցից հետո Թումանյանին մշտապես զբաղեցնող խնդիրներից մեկը, նրա երազը ուսումը շարունակելն էր, մի բան, որի մասին շատ են մտածել և՛ ինքը, և՛ իր մոտիկ ընկերները, բայց զուրկ լինելով նյութական հնարավորություններից, չեն կարողացել իրենց ընկերոջ համար նպաստավոր պայմաններ ստեղծել: Այդպիսով, Թումանյանին չէր հաջողվում իր իղձն իրագործել, գնալ Մոսկվա, Պետերբուրգ՝ ուսումը շարունակելու...

Իր այդ իղձը նա փայփայել է նաև հետագայում: 1900 թ. գրած նամակներից մեկում գրում է. «Ես ավելի համեստ մի ցնորք ունեմ՝ գնալ մի երկու տարի մնալ Պետերբուրգ կամ Մուսկվա, բայց ամաչում եմ ասել...»

Թումանյանը մեծ կարևորություն էր տալիս ինքնազարգացմանը: Դպրոցը թողնելուց հետո նա աշխատում է ընթերցանությամբ լրացնել իր ուսման պակասը, բացի այն, որ օգտվում է գրադարաններից, այլև իր սուղ միջոցներից որոշ գումար է հատկացնում գրքեր գնելուն: Այդ շրջանի ընկերները, տեսնելով իրենց ընկերոջ ընթերցասիրությունը, օրինակ են առնում նրանից և իրենք էլ սկսում են գրքեր գնել: Դասընկերներից մեկը գրում է. «Ես տեսնում էի, որ նա գրքեր էր հավաքում, կարդում էր և առհասարակ ընթերցասեր էր: Հաճախ ինձ էլ էր խրախուսում ընթերցանությամբ պարապել»:

Ինքնազարգացման, անհագ ընթերցանության շնորհիվ նրա մտահորիզոնը լայնանում է, մտավոր պաշարը հարստանում, նրա աշխարհայացքը դեռևս պատանի հասակում ուկսում է կազմակերպվել, ձևավորվել:

---

* Ան. Աբովյան. «Հիշողություններ Հովհ. Թումանյանի կյանքից», «Պատկում», Երևան, 1923 թ., № 2, էջ 11:

* * *

Ամառվա արձակուրդներին Թումանյանը առաջիններից լ. լինում, որ հայրենակից դասընկերների հետ ձիով ճանապարհվում է դեպի Լոռի, իր ծննդավայրը:

«Հովհաննեսը, երբ սովորում էր Թիֆլիսում, ամառները միշտ գալիս էր գյուղ,— վկայում է բանաստեղծի կրտսեր եղբայրը:— Սիրում էր հանդերը ման գալ, զանազան ժայռերի կամ խաչարձանների վրա փորագրություն կատարել: Մեզ՝ փոքրերիս, տանում էր որսի, ձորերը ման ածում, խոսում էր, կարդում, պատմում և այդպիսով միշտ ուշանում էինք անտառներում կամ ձորերում: Հայրս և մայրս շատ բարկանում էին մեզ վրա, բայց ավելի շատ Հովհաննեսի վրա, թե՝ ամենամեծը դու ես, և դու էլ չես մտածում ընտանիքի և ապրուստի մասին, երեխաներին էլ խաբում ես ու հետդ տանում:

Քիչ ժամանակ անց հայրս մեղմանում էր և հարցնում, թե ինչ նոր երգ ենք սովորել Հովհաննեսից: Ասում էինք մեր սովորած երգերը՝ «Անհոգ ես, չգիտես ինչ կա քո մասին», «Ազնիվ ընկեր, մեռանում եմ» և այլն:

Մայրս ամեն առավոտ մեզ վաղ էր արթնացնում, իսկ հայրս բարկանում էր մորս վրա և ասում՝ թող երեխաները բնեն: Մայրս Հովհաննեսին չէր արթնացնում, ասում էր՝ նա օտար տեղից է եկել, ո՞վ գիտի քաղաքում շատ է քնել, թե՞ քիչ:

Մենք՝ փոքրերս, Հովհաննեսի հետ գաղտնի պայման ունեինք, որ հերթով ամեն առավոտ մեկումեկս պետք է քնեինք նրա անկողնում: Այս բոլորը կատարվում էր ամառային կալի աշխատանքների օրերին»:

* * *

1886 թվի գարնանը ոգեշնչված Լերմոնտովի ազատատենչ պոեզիայով, հատկապես՝ «Մծիրիով» և Շիլլերի «Ավազակներով», Թումանյանը, դպրոցը թողնելով, հեռանում է դեպի Լոռի՝ իր հայրենի լեռների գիրկը: Լոռու ձորերում նա հանդիպում է ցարիզմի դեմ ըմբոստացած Զոփուրի տղաներին, որոնք այդ ժամանակ ապաստան էին գտել Լոռու ձորերում:

Թումանյանի կյանքի այդ շրջանի օրերը հիշում է բանաստեղծի դպրոցական ընկերներից Ս. Հովվյանը, որը գրում է. «1886 թվականի ամառվա ծիրանի սեզոնն էր, ուրեմն հունիսի վերջը կամ հուլիսի սկիզբը: Ես այդ օրերը Ուզունլար էի գնացել պապոնցս գյուղը, և ապա Ուզունլարի ձորը և այգիները՝ հորաքրոջս այգուց ծիրան բերելու: Իջա Դեբեդի ձորը, և ահա, Օհաննեսը տրեխները հագին, սևամորթ փափախը գլխին, բերդանկա կոչված հրացանը ուսին Զոփուրի տղա Ռամազի հետ էր: Հովհաննեսը այդ շրջանում կարծես մի յուրահատուկ Կարլ Մորի է նմանում»:

Զոփուրի տղաները ցարական արյունալի ռեժիմի դժբախտ զոհերն էին, որոնք թափառում էին Լոռու լեռներում և ձորերում, նեղում էին հարուստներին և օգնում չքավոր գյուղացիներին:

Դեբեդի ձորումն է, որ նա հանդիպում է ծերունի այգեպանին՝ Ղոխնանց Պապին, զրույց է ունենում գյուղացու ծանր, չարքաշ կյանքի մասին, տեսնում ութսունամյա ծերունու զրկանքներով լի կյանքը, և նրա մեջ առաջանում է «Հառաչանք» պոեմը գրելու գաղափարը:

Ղոխնանց Պապի հետ ունեցած իր հանդիպումը բանաստեղծը հիշում է և իր կյանքի վերջին օրերին, Մոսկվայում.

«Աշակերտ վախտս էր: Ղոխնանց Պապը* մեր ձորում գիշերները կրակի ղրաղին չիբուխը սարքում էր, հեքիաթներ ասում: Դեբեդը վշշում էր... ձորերը թշշում, ձեն տալի... պախրեն գոռո՞ւմ էր... Ղոխնանց Պապը պատմում էր, մենք էլ ականջ էինք դնում... Լավ պատմող էր... Էդ պատմածներից կտորներ ունեմ «Հառաչանք» պոեմում»:

Թումանյանն իր ընկերներից շատերին է պատմել Զոփուրի տղաների կյանքից, ասել է, որ մի պոեմ, մի դյուցազներգություն պիտի գրի, այդ պոեմը «Հառաչանքն» էր, որը, սակայն, մնաց անավարտ:

Ավ. Իսահակյանը, որին նույնպես Թումանյանը ոգևորված պատմել է Զոփուրի տղաների պատմությունը, իր հուշերում գրում է. «Օհաննեսը պատահի հասակից տենչացել

* Ղոխնանց Պապը (1818—1906) Լոռու Այգեհատ գյուղից է, այգեպան: Մշտապես ապրելիս է եղել Քոբերի մոտերը իր այգում: Լավ պատմող և զրույց անող ծերունի է եղել, իմացել է շատ հեքիաթներ, առակներ, նաև «Հազարան բլբուլ» հեքիաթը:

է գրել մի պոեմ՝ նրանց հերոսական կրիվների մասին. «Հառաչանք» պոեմի զարմանալի գեղեցիկ հատվածն այդ չիրականացած պոեմի թանկագին մնացորդն է»:

«Հառաչանք» պոեմը գրված է որպես բողոք ցարական կարգերի դեմ: Պոեմը լրիվ մեզ չի հասել, այլ մնացել են հատվածներ: «Հառաչանքի» առաջին տարբերակը, ինչպես ինքն էր ասում, խուզարկության ժամանակ (1908 թ) անհետացել է:

Ներսիսյան դպրոցից հեռանալուց հետո Թումանյանը միաժամանակ մնում է գյուղում: Ուսումը շարունակելու բուռն ցանկությունը սրտում, ամառն անց է կացնում գյուղացիների շրջանում, շրջագայում է մոտակա վայրերը, մասնակցում է գյուղական աշխատանքներին, երազում նորից վերադառնալ Թիֆլիս:

«Նա ավելի սիրում էր անասուններն արոտ տանելը, տավարածությունը: Տանում էր անասուններն ազատ թողնում անտառում, ինքը մի քարի գլխի նստած կամ մի ծառի տակ պառկած անձնատուր լինում իր ցնորքներին...

Մեջքի վրա պառկած, մտազբաղ աչքերը հառած հոյակապ երկնակամարի խորքը կամ այնտեղ մխված բարձր գագաթներին, գլխի վերևը շարժվող տերևների մեղմ շրշյունի, թռչունների ծվոցի ու ծլվլոցի ձայներով թովված, արթուն երազներ էր տեսնում:

Ահա Թիֆլիսը, հի՜ն ահագին Թիֆլիսը... դանդա՜ղ, լայնածավալ Քուռը խաղաղ թավալվում է քաղաքի գոռոցի, հարայհրոցի մեջ:

Ահա հրաշալի տները... քարվանսարաները... ահա Ներսիսյան դպրոցը՝ հոյակապ տաճարն ուսման... մանուկնե՜ր, պատանինե՜ր:

17 տարեկան պատանին, ամառը ապրելով գյուղում, երազում է թողած դպրոցը, հիշում է իր դասընկերներին: Գյուղացիների շրջանում նա տեսնում է գյուղացիների ծանր կյանքը, դաժան իրականությունը, տեսնում է ինչպես գյուղացուց կոռ ու բեգար են պահանջում, և այդ տպավորությունների տակ է, որ 1887 թվին գրում է իր առաջին պոեմը՝ «Մարոն», «Արև և լուսին» լեգենդը, «Գութանի երգը», «Հին օրհնություն», «Ամառվա գիշերը գյուղում» բանաստեղծությունները և այլն:

1886 թ. աշնանը Թումանյանը վերադառնում է Թիֆլիս: Այլևս հնարավորություն չունենալով շարունակելու ուսումը, նա իր ժամանակն անց է կացնում քաղաքային գրադարան-ընթերցարաններում գրքեր կարդալով, թիֆլիսաբնակ լոռեցիների շրջանում՝ զրույցով և նյութեր հավաքելով: Հաճախ լինում էր գործակատարների, արհեստավորների շրջանում: Ինքն էլ շատ կարճ ժամանակով ծառայում է խանութներից մեկում: Այդ հանդիպումները առիթ են դառնում մոտիկից դիտելու և ճանաչելու բազազ Արտեմի, գործակատար Վասոյի և փոքրիկ Գիքորի տիպերը:

Հարազատներից, հայրենի շրջանի բանիմաց ծերունիներից շարունակ ժողովրդական խոսք ու զրույց, առակ ու լեգենդ հավաքելով, անմիջականորեն ժողովրդական ստեղծագործության վճիտ աղբյուրից նյութեր քաղելով, պատանի բանաստեղծը մշակում է դրանք և ստեղծում իր գոհարները:

Իր հայրենակիցների շրջանում ժողովրդական լեգենդներ, առասպելներ, զրույցներ ժողովելով, միաժամանակ ուսումը շարունակելու փորձեր է անում, սակայն ապարդյուն: Հակառակ նրա այդ ցանկության, 1887 թ. օգոստոսին, ստիպված, պաշտոնի է մտնում Թիֆլիսի հոգևոր կոնսիստորիա:

Սակայն պաշտոնի մտնելով նա չի կտրվում ո՛չ գրքից ո՛չ էլ գրականությունից: Ընդհակառակը, իր ազատ ժամերը նվիրում է ընթերցանությանն ու ստեղծագործությանը: Հենց այս տարիներին նա գրում է և հրատարակում իր նշանավոր լեգենդներից ու պոեմներից մի քանիսը և մի շարք բանաստեղծություններ: Հետագայում մշակում է դրանք, դարձնում բյուրեղացած գործեր:

Բանաստեղծի տպավորվող և զգայուն հոգին ստեղծագործական բուռն շրջան է ապրում: Գրագրի պաշտոնը թեև լրիվ չի ապահովում նրա կյանքը, բայց տալիս է որոշ ինքնուրույնություն, քաղաքում ապրելու և գրադարաններից օգտվելու հնարավորություն:

Ահա այդ տարիներին է, որ սկսվում է երիտասարդ Հովհաննես Թումանյանի ստեղծագործական վերելքը: Սակայն այդ մասին կխոսենք բանաստեղծի լրիվ կենսագրության մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծի ծննդավայրը 3
Պապերը 10
Հայրը 15
Մայրը 20
Անհոգ եզնարածը 22
Խաղերի և հեքիաթների աշխարհում 25
Բնության գրկում 30
Սարերում 35
Գյուղացիների հետ 40
Դանդի դպրոցում 46
Զալալօղլիում 50
Դպրոցական տարիները Թիֆլիսում 59

Թումանյան Նվարդ Հովհաննեսի
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Туманян Нвард Оганесовна
ДЕТСТВО ТУМАНЯНА
Для среднего и старшего школьного возраста
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1983

Խմբագիր՝ **Ռ. Հ. Քալաշյան**, նկարիչ՝ **Ա. Վ. Հովհաննիսյան**, գեղ. խմբագիր՝ **Ս. Գ. Սաֆյան**, տեխն. խմբագիր՝ **Մ. Է. Ճանճապանյան**, վերստուգող սրբագրիչ՝ **Է. Ս. Սեդրակյան**

ИБ 4752

Հանձնված է շարվածքի 20. 04. 83։ Ստորագրված է տպագրության 14. 09. 83։ ՎՖ 09483։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ «Նորք»։ Տպագրություն՝ բարձր, 4,41 պայմ. տպ. մամ., 4,61 պայմ. ներկ. թերթ. 3,8 հրատ. մամ., +2 ներդիր։ Տպաքանակը 10.000։ Պատվեր 530։ Գինը՝ 15 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տերյան 44։

Типография № 2 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Теряна, 44.